Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format
Adapt — remix, transform, and build upon the material

31

ՊԱՇՏՕՆԱԿԱՆ·

ԳԼԽԱՒՈՐ ՇՏԱԲԻ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ.

ԱԳՀ
100

ՀԵՏԻՒԱԶՕՐԻ ՇԱՐՔԻ ԿԱՆՈՆԱԳԻՐՔ

ԵՐԵՒԱՆ,
Էջմիածնի տպարան «ՈՒՐԱՐԻՒԱ»
1920 թ.

100-Ա9Հ

ՊԱՇՏՕՆԱԿԱՆ.

ԳԼԽԱՒՈՐ ՇՏԱԲԻ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ.

1006
26764

ՀԵՏԵՒԱԶՕՐԻ ՇԱՐՔԻ ԿԱՆՈՆԱԳԻՐՔ

Կարդալուց առաջ անհրաժեշտ է այս Կանոնագրքի մէջ ուղղումներ կատարել եաեռում կցուած վրիպակների համեմատ։

Էլէքտրօ-տպարան «ՈՒՐԱՐԴԻԱ»
1920 թ.

ՊԱՇՏՕՆԱԿԱՆ.

ԳԼԽԱՒՈՐ ՇՏԱԲԻ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ.

1006
26764

ՀԵՏԻՒԱԶՕՐԻ ՇԱՐՔԻ ԿԱՆՈՆԱԳԻՐՔ

ԵՐԵՒԱՆ,
Էլէքտրա-տպարան «ՈՒՐԱՐԴԻԱ»
1920 թ.

ՅԱՌԱՋԱԲԱՆ.

Հայաստանի Ռազմական Գլխաւոր Շտաբը ձեռնարկելով կարևոր զօրական Կանոնադրքերը աւսերէնից հայերէն թարգմանել, կազմել է դրա համար մի առանձին Յանձնախումբ։ Առանձին կանոնագրքերի թարգմանութիւնը կատարում են մասնագէտ զինուորականները, և ապա յանձնախումբը ամբողջապէս ճշտում և ուղղում է բնագրի հետ համեմատելով։

Սոյն կանոնագրքի թարգմանութիւնից մի քանի հատուածներ, որոնք մեր զօրականութեան յարմար չեն, դուրս են ձգուած կամ փոխուած են, Ռազմական նախարարի հրամանով։

Վարժութեան հրամանները առաջուց կազմուած էին և ուղարկուած էին գործադրութեան, յանձնարարելով ձեռնհաս զինուորականներին

իրենց դիտողութիւնները ուղարկել Յանձնախմբին։ Յանձնախումբը ստացած դիտողութիւնները նկատի ունենալով կամ իր կողմից որոշ կշռադատութիւններով, թեթև փոփոխութիւններ է մտցրել արդէն տպագրուած հրամանների մէջ։ Ստացուած ոչ մի դիտողութիւն անուշադիր չէ մնացած, բայց ասել չի ուզել, որ չէր կարելի բոլոր դիտողութիւնները, որոնք շատ անգամ իրարուց տարբերւում էին, ընդունելի համարել, որոշ նկատառումներով։

1· Բնագրի միաձև становись (յօդ. 16 և 54) բառի դիմաց հայերէն դրուած է կանգնիր և շարւիր։ Առաջարկող եղել է՝ երկու դէպքումն էլ միակերպ շարւիր դնել։ Յանձնախումբը թողել է անփոփոխ երկու ձևով, որովհետև, եթէ երկրորդ դէպքում շարքի, տողանի վարժութեան մէջ շատ զինւորների համար պէտք է ասել շարւիր, առաջին դէպքում՝ առանձին անհատի վարժութեան մէջ, երբ մի զինւորի հետ գործ պէտք է ունենալ, չի կարելի մի հոգուն ասել շարւիր։

2, Встать (յօդ. 18) թարգմանուած է վեր-կաց. առաջարկող եղել է դնել կանգնիր. ընդունելի չէ եղել այդ, որովհետև մինչ-դեռ վեր-կենալ կարելի է միայն նստած կամ պառկած տեղից, կանգնել կարելի է և պառկած ու նստած տեղից և գնալու ժամանակ ուստի և այս բառը երկդիմի է. հէնց այս պատճառով և стой (յօդ.29) դրուած է հայերէն ոչ թէ կանգնիր, այլ կանգառ, որ ոչ մի երկդիմութիւն չի վերցնում։

3. Накройсь (յօդ.20) դրուած է գլխարկդ-դիր.-առաջարկող եղել է գլխարկդ-ծածկիր, որ հայերէն դարձուած չէ. հայերէնում գլխարկը դնում են իսկ գլուխը ծածկում այն էլ ոչ անպատճառ միայն գլխարկով։ Ապա առաջարկող եղել է գլխարկ-դիր.-անշուշտ երկու դ. տառի իրար հանդիպման պատճառով. բայց սխալ կըլինէր գրել գլխարկ-դիր, որ նշանակում է որևէ գլխարկ դիր, մինչդեռ այս դէպքում որոշ գլխարկի մասին է խօսքը։ Արտասանելիս կարող է երկու դ. առաջերից մէկը կուլ գնալ և արտասանուել՝ գլխարկը-դիր, որ նոյնպէս սխալ չի լինիլ։ Յանձնախումբը սակայն գլխարկ բառի

տեղ այս անգամ յարմար համարեց զդակ բառը գործածել։

4. Равненіе-Յանձնախումբը փոխել է հաւասարում, ինչպէս և նշանակում է այդ բառը և ընդունելի չի համարել ուղղութիւն բառը, որ նշանակում է направленіе, որ շատ անհրաժեշտ է թէ հրամանների և թէ շատ կանոնների համար։ Եթէ равненіе ուղղութիւն դրւի, այլևս направленіе անհրաժեշտ բառի համար ուրիշ բառ չկայ։ Այսպէս և рядъ բառը երկեակ է դրուած, իսկ вздвоенный рядъ քառեակ և ոչ թէ կարգ, որովհետև այս բառը հարկաւոր է այնքան շատ գործ ածւող порядокъ բառի համար։ Шеренга փոխւել է հին զինւորական տողան բառով, որովհետև շարք, շարւածք բառն անհրաժեշտ էր строй, строеніе բառերի համար, որ իմաստով և գործ է ածւում սովորաբար։ Այսպէս և ուրիշ դիտողութիւններ։

Դժւարութիւն պատճառող հրամաններից մէկն եղել է смирно հրամանը, որ տպագրւած է հանդարտ, որը շատ յարմար է թէ ըստ նշանակութեան և թէ ըստ արտասանութեան. բայց Յանձնախումբն ինքը նկատել էր արդէն, որ հեռւից հանդարտ և հաւասար (равняйсь) հրամանները շփոթւում են, մանաւանդ երբ, ինչպէս յաճախ լինում է, իրար ետևից են ասւումուստի պէտք էր դրանցից մէկը փոխել։ Смирно բառի համար առաջարկողներ եղել են զգաստ, պատրաստ, ուշադիր, սաստ. Յանձնախումբն այս բառերից ընդունելի համարեց առաջինը, որ և կամաւորական խմբերի մէջ գործածւած է եղել։ Այդ բառը թէպէտ և փոքր ինչ բարոյական իմաստ ունի և նշանակութեամբ չի համապատասխանում ռուսերէն смирно բառին, բայց ի նկատի ունենալով, որ զանազան ազգեր այդ հրամանը տարբեր նշանակութիւններ ունեցող բառերով են տալիս, ինչպէս՝ հանդարտ, ուշ-դիր պատրաստ, սեւեռուն (fixe ֆրանսերէնում), Յանձնախումբն անյարմար չ՞գտաւ հայերէնում ընդունել զգաստ բառն, որ իր արթուն, ուշադիր, խելքը գլուխն ունենալ՝ նշանակութեամբ յարմարւում է տեղին՝ զինւորն այդ հրամանը լսելով, պէտք է զինւորական կեցւածքով զգաստ մնայ՝ մի նոր հրաման լսելու

կամ իր հրամասարին պատուելու համար։

Կանոնագրքիս բառացուցակում առնւած են միայն հայերէն ռազմական կարևոր նշանակութիւնները։

Սոյն կանոնագրքի թարգմանողն է՝

Գլխապետ Ց. Ալէքեան.

Յանձնախմբի նախագահը՝

Գնդապետ Պ. Աբեայեան.

Անդամներ՝

Փոխ-գլխապետ Գ. Մելիք-Յարութիւնեան

Փոխ-գլխապետ Տ. Յովհաննեան.

Տեղակալ Լ. Աբովեան·

(որոշ թուով նիստերում).

Գրօֆ. Ա. Խաչատրեան։

Դոցենտ· դոկտ. Մ. Աբեղեան.

ՑԱՆԿ.

ԷՋ.

ՇԱՐՔԵՐ ԵՒ ՆՐԱՆՑ ՂԵԿԱՎԱՐՈՒԹԻՒՆԸ . 1

ՄԱՍՆ Ա. ՍԿԶԲՆԱԿԱՆ ՈՒՍՈՒՑՈՒՄՆ

ԳԼ. Ա. ԱՆՀԱՏԻ ՎԱՐԺՈՒԹԻՒՆ . . . 8

Կեցուածք առանց հրացանի (էջ 8)։ Դարձումներ (էջ 12)։ Շարժումներ (էջ 13)։ Կեցուածք հրացանով (էջ 16)։ Հրաձգութիւն (էջ 18)։ Հրացանը բռնելու ձևերը (էջ 20)։ Դարձումներ և շարժումներ հրացանով (էջ 29)։

ԳԼ. Բ. ՏՈՂԱՆԻ ՎԱՐԺՈՒԹԻՒՆ . . . 31

Տողանի շարւածքն ու համրանքը (էջ 31)։ Տողանի հաւասարեցումն (էջ 33)։ Դարձումներ և հրացանը բռնելու ձևերը (էջ. 34)։ Տողանի բացումն ու փակումը և միտողանից երկտողան կազմելը (էջ 34)։ Տողանի շարժումները (էջ 38)։ Ուղղութեան փոխումը (էջ 40)։ Հրաձգութիւն (էջ 43)

ԳԼ. Գ. ՈՒՍՈՒՑՈՒՄՆ ՑՐԻԻ ՇԱՐՔԻ . . 43

ՄԱՍՆ Բ. ԴԱՍԱԿԻ ՎԱՐԺՈՒԹԻՒՆ.

ԳԼ. Ա. ՓԱԿ ՇԱՐՔ. 50

Դասակի շարւածքն ու համրանքը (էջ. 50)։ Դասակի հաւասարեցումն ու դարձումները (էջ 53)։ Քառեակներ և երկեակներ կազմելը (էջ 54)։ Դասակի բացումն ու փակումը (էջ 57)։ Երկտողան շարքից մի տողանի կազմելը և ընդ հակառակը (էջ 58)։ Հրացաններից բուրգ կազմելը (էջ 58)։ Դասակի երկայնած շարքի շարժումները և ուղղութեան փոխումը (էջ 59)։ Սիւն և նրա շարժումը, կազմափոխումն ու երկայնումը (էջ 60)։ Ջոկասիւնի շարժումներն և ուղղութեան փոխումը (էջ 66)։ Հրաձգութիւն (էջ 67)։

ԳԼ. Բ. ՑՐԻԻ ՇԱՐՔ. 69

Ընդհանուր ցուցումներ (էջ 69)։ Շղթայի ղեկավարութիւնը (էջ 70)։ Պետերի պարտականութիւնները շղթայի մէջ (էջ 71)։ Դասակի ցրումը (էջ 76)։ Շղթայի հրաձգութիւնը (էջ 78)։ Շղթայի շարժումները (էջ 80)։ Ուղղութեան փոխումը (էջ 83)։ Գրոհ և ուինամարտ (էջ 84։)։ Շղթայի հաւաքը (էջ 87)։

ՄԱՍՆ Գ. ՎԱՇՏԻ ՎԱՐԺՈՒԹԻՒՆ.

ԳԼ. Ա. ՓԱԿ ՇԱՐՔ 88

Վաշտի համրանքը և նրա պաշտօնատար-

Նեռի պարտականութիւնները (էջ 88)։ Վաշտի շարքերը (էջ 91)։ ա. Երկայնած շարք (էջ 91)։ բ. Սիւներ (էջ 94)։ գ. Դասակաւոր զաւաշար (էջ 95)։ Վաշտի դիկտատուրքիւնը (էջ 97)։ Վաշտի հաւատարկուան (էջ 97)։ Վաշտի դարձումները, քառակներ և երկեակներ կազմելը, քայլումն ու փակուելը, երկտողանից մի տողան և հրացաններից բուրգ կազմելը (էջ 98)։ Վաշտի շարժումներն ու ուղղութեան փոխումն (էջ 99)։ Զրաւոր ենթը կազմելը երկայնած շարքից և դուռա շարից (էջ 102)։ Սիւներն կազմուածափոխութիւնը (էջ 106)։ Սիւներն երկայնումը (էջ 108)։ Վաշտի գաւակաւոր վաւաշար կազմելը և նրա հաւաքը (էջ 111)։ Հրաձգութիւն (էջ 113)։

Գլ. Բ. ՎԱՇՏԻ ՄԱՐՏԱԿԱՐԳԸ . (էջ 115)

Մարտակարգի կազմը և պաշտօնատարների տեղերը (էջ115)։ մարտակարգի դիկտատուրքիւնը (էջ119)։ վաշտի վերածումը մարտակարգի (էջ121)։ Հրաձգութիւն (էջ125)։ Մարտակարգի շարժումները (էջ 126)։ Շղթայի ուժեղացումը (էջ 128)։ Մարտակարգի ուղղութեան փոխումը (էջ 129) Գրոհ և ուժնամարտ (էջ 130)։ Վաշտի հաւաքը (էջ 133)։

ՄԱՍՆ Գ. ԳՈՒՄԱՐՏԱԿԻ ՎԱՐԺՈՒԹԻՒՆ.

Գլ. Ա. ԳՈՒՄԱՐՏԱԿԻ ՇԱՐՔԵՐ . . .

Գումարտակի համրանքը (էջ134)։ Գումարտակի շարքերը և պաշտօնատարների տեղերը (էջ135)։ ա. Սիւներ (էջ135)։ բ. վաշտաւոր զաւաշար (էջ 140)։ Գումարտակի դիկտատուրքիւնը (էջ 141)։ Գումարտակի շարժումները և ուղղութեան փոխումը (էջ 141)։ Գումարտակի սիւների կազմափոխումը (էջ 143)։ Գումարտակի վերածումը վաշտաւոր զաւաշարի և գումարտակի հաւաքը (էջ 146)։

Գլ. Բ. ԳՈՒՄԱՐՏԱԿԻ ՄԱՐՏԱԿԱՐԳԸ էջ 147

Մարտակարգի կազմը և պաշտօնատարների տեղերը (էջ 147)։ Մարտակարգի վերածումը (էջ150)։ Մարտակարգի դիկտատուրքիւնը (էջ152)։ Մարտակարգի փոփոխութիւնները և շարժումները (էջ 153)։ Գրոհ (էջ 156)։ Գումարտակի հաւաքը (էջ 157)։

ՄԱՍՆ Ե. ԳՈՒՆԴ, ԲՐԻԳԱԴ ԵՒ ԲԻՒՐԵԱԿ.

Գլ. Ա. ՕԺԱՆԴԱԿԱՆ ԿԱՐԳԵՐ . (էջ 158)

Շարւածքը և պաշտօնատարների տեղերը (էջ 158)։

Օժանդական կարգերի զեկավարությունը (էջ 161)։ Օժանդական կարգերի շարժումները (էջ 162)։

ԳԼ. Բ. ՄԱՐՏԱԿԱՐԳԵՐ 164

ՄԱՍՆ Զ. ԶՕՐԱՏԵՍ ԵՒ ՀԱՆԴԻՍԱՒՈՐ ԶՕՐԱՆՑ.

ԳԼ. Ա. ԶՕՐԱՏԵՍ 168

Ա. վաշտի զօրատես (էջ 168)։ Բ. գումարտակի զօրատես (էջ 172)։ Գնդի զօրատես (էջ 174)։

ԳԼ. Բ. ՀԱՆԴԻՍԱՒՈՐ ԶՕՐԱՆՑ . . . 178

Ա. վաշտի զօրանցը (էջ 178)։ Բ. գումարտակի զօրանցը (էջ 185)։ գ. Գնդի զօրանցը (էջ 190)։

ՄԱՍՆ Է ԴՐՕՇ.

Դրօշը բռնելու ձևը (էջ 193)։ Դրօշի տեղը (էջ 195)։ Դրօշն ընդունելու և ետ տանելու կարգը (էջ 200)։

ՅԱՒԵԼԻԱԾՆԵՐ.

1. Զինւորական պատիւ տալու կանոններ . 208
2. Թուրը բռնելու ձևերը շարքի մէջ . . 212
3. Հրացանը յատուկ պատւի բռնելու ձևերը . 220
4. ա. կանոններ թմբկահարների, փողարների և նշանարարների համար 222

5. Շարքի ցուցագրի օրինակ, որը ներկայացնում է վաշտապետը պետին դիմաւորելու ժամանակ . . . . . .
6. Շարքի ցուցագրի օրինակ, որը ներկայացնում է գումարտապետը պետին դիմաւորելու ժամանակ . . . . . .
7. Հետևազօրի փողազգեր, դափիւններ և քայլերգեր . . . . . .

ՇԱՐՔԵՐ
և նրանց դեկավարութիւնը։

1. Շարք կոչւում է մարդկանց սահմանուած դասաւորութիւնը՝ նրանց միասին տեղաւորելու, շարժելու և գործելու համար։

Ծանօթութիւն. Կարգ կոչւում է շարքերի միացումը, մի պետի դեկավարութեամբ միասին գործելու համար։

2. Այն շարքը, որի մէջ զինուորները կանգնեցրած են կողք-կողքի մի ուղիղ գծի վրայ, կոչւում է տողան։

3. Շարքի ծայրերը կոչւում են թևեր՝ աջ եւ ձախ։ Շարքի դարձուածների ժամանակ թևերի անուններն միւում են անփոփոխ։

4. Շարքի այն կողմը, ուր դարձած են զինուորների երեսները, ունենալով աջ թևը՝ աջից և ձախ թևը՝ ձախից, կոչւում է ճակատ։

5. Նիկտողան շարքում երկրորդ տողանի զինուորները կանգնում են առաջին տողանի զինուորների եաևը՝ մի քայլ հեռու ծոծրակի գիմ։ Տողաններն կոչւում են առաջին եւ երկրորդ։

Այս անունները դարձումների ժամանակ մնում են անփոփոխ։

Զորսից պակաս զինւորները միշտ մի տողան են կանգնում։

6. Երկու զինւոր՝ մէկը միւսի ուղիղ ետևում կանգնած՝ կազմում են երկեակ։

Առաջին տողանի այն զինւորը, որի ետևում երկրորդ տողանի մէջ զինւոր չկայ կանգնած, կոչւում է միակ։

Երբ առաջին տողանից մէկը դուրս է գալիս, նրա տեղը բռնում է երկրորդ տողանի մէջ նրա ետևում կանգնած զինւորը, իսկ երբ երկեակ է պակասում, շարքը փակւում, խտանում է դէպի հաւասարման կողմը։

Երբ շարքը դառնում է երկրորդ տողանի վրայ, միակ զինւորը առաջին տողանից անցնում է երկրորդ տողանը։

7. Շարքը կարող է լինել փակ և բաց. երկու դէպքումն էլ՝ միատողան կամ երկտողան և ցրիւ (հրաձիգ շղթայ)։

Փակ շարքում իւրաքանչիւր տողանի զինւորները կանգնում են այնպէս, որ մէկի արմունկից մինչև միւսինը՝ դաստակի լայնքի չափ հեռաւորութիւն լինի։

Բաց շարքում զինւորների միջի հեռաւորութիւնները (միջանցները) աւելանում են մի քայլ կամ այնքան, որքան կը հրամայւի։

Ցրիւ շարքում զինւորները պահում են հրամայւած միջանցները։

8. Մի անընդհատ գիծ կազմող փակ (բաց) շարքը կոչւում է երկայնած շարք։

9. Փակ (բաց) շարքի մասերը, մէկը միւսի ետև կանգնած, կազմում են սիւն։

Սիւնի առջևի մասը կոչւում է գլուխ, իսկ ետևի մասը՝ տուտ։

Սիւնի առջևում կանգնած մասի առաջին տողանի և նրա ետևում կանգնած մասի առաջին տողանի միջև եղած տարածութիւնը կոչւում է հեռակայութիւն։

Սիւնի գլխից մինչև տուտն եղած տարածութիւնը կոչւում է սիւնի խորութիւն։

Սիւները կոչւում են սիւն կազմող մասի և սիւնի գլխին կանգնած մասի անունով։ Յաճախ

գործածւող սիւները ստանում են կրճատ անուններ։

10. Բոլոր շարքերում պէտք է ուշադրութիւն և կատարեալ լռութիւն պահպանել։ Առանց թոյլաւութեան ոչ ոք իրաւունք չունի շարքից դուրս գալու։

Փակ շարքում պէտք է նայել առաջ, կանգնել անշարժ, քայլել համաչափ, հաւասարւել տողանի գծով և երկեակներով ու քառեակներով։

Բաց շարքում պէտք է քայլել համաչափ և պահպանել ճիշտ հաւասարում, միայն տրւած պատւէրի համաձայն։

Ցրիւ շարքում պետերը և զինւորները ստանում են այս Կանոնագրքով որոշւած ինքնուրոյնութիւնը։

11. Շարքի մէջ բոլոր շարժումներն ու գործողութիւնները կատարւում են պետի հրամանով, պատւէրով, պայմանական նշանով կամ ազդանշանով։

12. Հրամանը բաժանւում է նախապատրաստականի և կատարողականի։ Նախապատրաստական հրամանը (այս կանոնագրքում շղագրով

տպւած) պէտք է արտասանել երկար, պարզ և որոշ. իսկ կատարողականը (մեծատառերով տրպւած) պէտք է արտասանել բարձր, կտրուկ և ազդու. ձայնը յարմարեցնել շարքի երկայնութեանը։

13. Պատւէրը տալիս է պետն անմիջապէս ինքը կամ համհարզների, սուրհանդակների և լրատարների միջոցով և կամ ազգանշաններով, հեռախօսով և այլն։ Հրաձիգ շղթայի մէջ գործադրւում է նաև պատւէրների փոխանցումը շղթայի գծով մէկ զինւորից միւսին. երթի ժամանակ՝ զինւորների միջոցով սիւնի երկայնութեամբ։

Պատւէրը պէտք է տալ կարճ, ազդու և որոշ անպայման ցոյց տալով գործողութեան նպատակը, որին պէտք է հասնել։

14. Վաշտից ոչ աւելի մեծ զօրամաս ղեկավարելու համար՝ սահմանւած են հետևեալ պայմանական նշանները.

ա) Ջեռքը վեր բարձրացնել—ուշադրութիւնը գրաւելու նախապատրաստական նշան։

բ) Ձեռքով ցոյց տալ շարժման ուղղութիւնը — շարժումը սկսել քայլով։

գ) Մի քանի անգամ ձեռքով ցոյց տալ շարժման ուղղութիւնը — զօրամասը վազեցնել։

դ) Բարձրացրած ձեռքը մի անգամից արագ իջեցնել — զօրամասը կանգնեցնել։

ե) Ձեռքը հորիզոնական դրութեամբ մեկնել ուզած ուղղութեամբ — զօրամասի ուղղութիւնը փոխել, տեղում և շարժւելիս։

զ) Ձեռքը վեր բարձրացնել և գլխի վրայ շարժել աջ և ձախ — զօրասիւնը երկայնել։

է) Ձեռքը մեկնել դէպի երկու կողմ, ճակատի գծի ցանկալի ուղղութեամբ — շղթայի ցրւել։

ը) Բարձրացրած ձեռքը գլխավերեւում պտտել — զօրամասը հաւաքել։

թ) Մի քանի անգամ ձեռքը ներքեւ թափահարել — զօրամասը պառկեցնել։

Վերոյիշեալ բոլոր նշանները կարելի է տալ թրով, գլխարկով և այլն, և բոլոր գինւորները պէտք է անմիջապէս կատարեն։

15. Փողազդները (փողով ազդանշանները) վերաբերում են միայն իշխանաւոր անձանց բա-

ցի իրար ետևից տրւած հաւաք և վազով փողազդներից, որ անմիջապէս կատարում են բոլոր գինւորները։

Բացի փողազդներից՝ մենազարկը դադարեցնելու համար գործ է ածւում և սուլիչ։

---

1) Մանօթութիւն. փողազդների ամփոփումը տես 7-րդ յաւելւածի մէջ։

ՄԱՍՆ Ա.

ՍԿԶԲՆԱԿԱՆ ՈՒՍՈՒՑՈՒՄՆ.

ԳԼՈՒԽ Ա.

ԱՆՀԱՏԻ ՎԱՐԺՈՒԹԻՒՆ.

ԿԵՑՒԱԾՔ ԱՌԱՆՑ ՀՐԱՑԱՆԻ.

16. Շարքում պէտք է կանգնել ուղիղ, առանց ձգւելու, կրնկները իրար կպցրած, իսկ ոտի ծայրերը պէտք է իրարից հեռացնել ճակատի գծով, ներբանի լայնութեամբ։ Ծընկները պէտք է ուղիղ պահել, բայց առանց ձգւելու, կուրցքը քիչ բարձրացնել և ամբողջ մարմինը թեթև կերպով առաջ տալ, փորը ներս քաշելով, բայց գօտկատեղը չծալելով։ Ուսերը պէտք է հաւասար բաց անել ձեռքերը ազատ թողնել այնպէս, որ ափերը դէպի մարմինը դառնան և դաստակները կողքից կպչեն ազդրերի մէջտեղին. մատները քիչ ծալել, գլուխը պահել բարձրը և ուղիղ, կզակը ներս քաշած, ու նայել ուղիղ առաջ։



Կեցւածք առանց հրացանի։

Որպէսզի զինւորը կանոնաւոր կեցւածք ընդունի, հրաման է տրւում ԿԱՆԳՆԻՐ։

17. Պատիւ տալու համար հրաման պէտք է տալ՝ հաւասարումն Ա՛Ջ (ՁԱ՛Խ)։ Այս հրամանով պէտք է գլուխն արագ դարձնել դէպի ցոյց տրւած կողմը, կզակը քիչ բարձրացնել և ուղիղ նայել բարևելի անձին. հայեացքով հետևել նրան և գլուխը դարձնել նրա ետևից, որպէսզի աչքը չշլւի։ Այնուհետև կեցւածքը պէտք է պահել յօդւած 16-ում պահանջածի համաձայն։

Երբ հետևեալ նախապատրաստական հրամանն է տրւում, (ինչ հրաման էլ լինի), կամ երբ բարևելի անձը զինւորի առաջից անցնում է չորս

քայլ, գլուխը նորից պէտք է ուղիղ պահել։

18. Երբ հրաման է տրւում ՊԱՌԿԻՐ, պէտք է ձախ ոտքի թաթի վրայ շուռ գալ կէս աջ (1/8 շրջան) և միաժամանակ աջ ոտքը կէս քայլ առաջ դնել, արագութեամբ ձախ ծունկը՝ գետնին տալ, ապա յենւելով ձախ ձեռքի վրայ նոր ուղղութեամբ պառկել ձախ կողքի և արմունկի վրայ։ Ոտքի և գլխի միակերպ դրութիւն չի պահանջւում։

Երբ հրաման է տրւում ՎԵՐԿԱՑ, պէտք է արագութեամբ վեր կենալ և կանոնաւոր կեցւածք ընդունել։

19. Երբ հրաման է տրւում ԱԶԱՏ, պէտք է կանգնել ազատ, մնալով նոյն դրութեամբ, ինչ դրութեան մէջ որ հրամանը ստացւել է։

Երբ հրաման է տրւում ՇԻՏԿԻԵԼ, պէտք է կանգնած տեղից չհեռանալ, կանգնել ազատ, շիտկել հագուստն ու հանդերձանքը։ Եւ եթէ հարկաւոր լինի, կարելի է խնդրել իր անմիջական պետին շարքից դուրս գալու համար։

Երբ հրաման է տրւում ԶԳԱՍՏ, իսկոյն պէտք է կանգնել նոյն դրութեամբ, ինչ դրութեան

մէջ որ էր ազատ և շիտկւել հրամաններից առաջ, և ըստ կանոնագրքի կեցւածքն ընդունելով՝ անշարժ կանգնել։

Նոյնը պէտք է կատարել և բոլոր նախապատրաստական հրամաններից յետոյ, եթէ դրանից առաջ թոյլատրւած է եղել կանգնել ազատ կամ շիտկւել։

20. Երբ հրաման է տրւում Աղօթքի, գդակդ ԱՌ, պէտք է աջ ձեռքովգլխարկը վերցնել տալ ձախ ձեռքը և աջը տանել իր տեղը։



Կեցւածք աղօթքի համար

Գդակը պէտք է պահել հետեւեալ ձևերով. ա. Ձախ ձեռքով պէտք է բռնել գդակի եզրից, ձեռքն ազատ կախ ձգել, գդականիշը դէպի առաջ։ բ. Զօրահանդէսի գդակը պէտք է բռնել ծալած ձախ ձեռքով, գօտկի բարձրութեամբ, զինանիշը դէպի աջ ուղղած, բութ մատը ներսից, իսկ մնացածները դրսից։

Ծանօթութիւն. Ով որ ըստ կանոնի

պէտք է ձեռնոց ունենայ, նա ձախ ձեռքով պէտք է բռնի աջ ձեռքից հանած ձեռնոցը։

Երբ հրաման է տրւում՝ գդակ՛դ—ԴԻ՛Ր,- գդակը պէտք է դնել գլխին և ձեռքը իջեցնել իր տեղը։

ԴԱՐՁՈՒՄՆԵՐ.

21 Դարձումները կատարւում են հետևեալ հրամաննով

1) Ա՛ջ—ԴԱ՛ՐՁ.
2) Ձա՛խ—ԴԱ՛ՐՁ.
3) Կէս ա՛ջ—ԴԱ՛ՐՁ.
4) Կէս ձա՛խ—ԴԱ՛ՐՁ
5) Ե՛տ—ԴԱ՛ՐՁ.

Ետ դարձ ($^1/_2$ շրջան դէպի ձախ ձեռքի կողմը), ձախ դարձ ($^1/_4$ շրջան) և կէս ձախ դարձ ($^1/_8$ շրջան) դարձումները պէտք է կատարել ձախ կրնկի և աջ թաթի վրայ. իսկ աջ դարձ և կէս աջ դարձ՝ ընդհակառակը։ Դարձման ժամանակ պէտք է պահպանել մարմնի կանոնաւոր դրութիւնը. դարձումը կատարելուց յետոյ պէտք է եաև մնացած ոտքը, քայլի համաչափութեամբ, միւս ոտքի կողքին դնել։

ՇԱՐԺՈՒՄՆԵՐ.

22. Շարժումները կատարւում են քայլով կամ վազով։

23. Քայլով շարժումն սկսւում է քայլո՛վ ՄԱ՛ՐՇ հրամանով։ Այս հրամանով իրանը քիչ առաջ պէտք է բերել, բայց մարմնի դրութիւնը պահել այնպէս, ինչպէս տեղում կեցւածքի ժամանակ, ձախ ոտքի շարժման ուղղութեամբ ազատ առաջ բերել, ծունկը շատ չծալելով և ներբանն ըստ կարելւոյն գետնին հորիզոնական պահելով, յետոյ ձախ ոտքն արագ ցած դնել ամբողջ ներբանով և միաժամանակ աջ ոտքը զատել գետնից, ապա աջ ոտքը պէտք է առաջ դնել ու բացատրւած կարգով շարունակել շարժումը, պահելով միևնոյն կանոնները։

Ձեռքերն ուսից սկսած պէտք է ազատ շարժել մարմնի մօտ, արմունկը ծալելով այնպէս, որ ձեռքերի թաթերը բարձրանան մինչև գօտիկը. մատերը պէտք է քիչ ծալած ունենալով՝ թեթև բուռ կազմել։

24. Քայլելիս պատիւ տալու համար, երբ հրաման

է տրւում հաւասարումն ԱՋ (ՁԱԽ), պէտք է դադարեցնել ձեռքի շարժումը, գլուխը դարձնել հաւասարման կողմը և վարւել յօդւած 17-ում ցոյց տւած կանոնների համաձայն։ Երբ տչքից անցնում է բարևելի անձը, պէտք է գլուխը նորից ուղիղ պահել ու շարունակել ձեռքերն ազատ շարժել։

25. Քայլով շարժման նորմալ արագութիւնը մօտ 120 քայլ է մի բոպէում, քայլի չափն է 1—1¼ արշին։

26. Քայլելիս դարձումները պէտք է կատարել նոյն հրամաններով, ինչ որ տեղում (տես յօդւած 21), միայն պահպանել հետևեալը.

ա. Աջ եռ կէս աջ դառնալու համար՝ կատարողական հրամանը պէտք է տալ աջ ոտքը գետնին դնելիս։ Այս հրամանով պէտք է ձախ ոտքով մի քայլ ևս անել և թաթի ծայրերի վրայ դառնալ, միաժամանակ առաջ բերել աջ ոտքը նոր ուղղութեամբ, ապա շարունակել շարժումը։

բ. Ձախ և կէս ձախ դառնալու համար կատարողական հրամանը պէտք է տալ ձախ ոտքը գետնին դրած վայրկեանին և դարձում կատարել աջ ոտքի թաթի ծայրի վրայ։

գ. Ետ դառնալու համար հրաման է տրւում ետ դա՛րձ—ՄԱՐՇ։

ՄԱՐՇ հրամանը պէտք է տալ աջ ոտքը գետնին դրած ժամանակ։ Այս հրամանից յետոյ պէտք է ձախ ոտքով էլի մի քայլ անել, ապա աջ ոտքը կէս քայլ առաջ բերել, ամբողջ մարմնով դառնալ երկու ոտքի թաթերի ծայրերի վրայ և շարունակել շարժումը ձախ ոտքից։

27. Վազով շարժման համար հրաման է տրւում վազով (կարճ) ՄԱՐՇ։

Վազի վերաբերեալ կանոնները մարմնամարզութեան կանոնագրքի մէջ են բացատրւած։

28. Վազի ժամանակ դարձումները կատարւում են առանց կանոնների, քայլով շարժման համար սահմանւած հրամաններով.

29. Շարժումը դադարեցնելու համար հրաման է տրւում կա՛նգ—ԱՌ։

Քայլելիս կատարողական հրամանը պէտք է տալ ոտքը գետնին դրած ժամանակ, միւս ոտքով պէտք է էլի մի քայլ անել, ապա ետ մնացած ոտքը դնել միւսի կողքին։

30։ Երբ հրաման է տրւում՝ ՏԵՂՈՒՄ, պէտք է ոտքերը քայլի համաչափ բարձրացնել և իջեցնել։

Շարժումը շարունակելու համար հրաման է տրւում՝ ՑԱՌԱՋ։

31. Քայլով շարժումից վազով շարժման, և վազով շարժումից քայլով շարժման անցնելու համար՝ 23 և 27 յօդուածների հրամաններն են տրւում։

ԿԵՑԻԱԾՔ ՀՐԱՑԱՆՈՎ.

32. Հրացանով կեցուածքի կանոնները նոյնն են, ինչ որ առանց հրացանի, տես (յօդուած 16, 17 և 19)։

33. Հրացանը ոտքի մօտ պէտք է բռնել աջ ձեռքով, հրացանի փոկը դէպի առաջ դարձրած այնպէս, որ հրացանը կանգնաց լինի գետնին ամբողջ խզատակով և կպչի աջ ոտքի թաթին, իսկ կոթի սուր անկիւնը թաթերի ծայրերի հետ մի ուղիղ գիծ կազմի։ Աջ ձեռքը պէտք է կախ ձգել, ազատ բոլոր մատով բռնել հրաձանի փողը,

իսկ մնացած մատերը հուպ տալ փողակալին։



1006
26464

ԿԵՑԻԱԾՔ ՅՐԱՑԱՆՈՎ.

34. Երբ հրաման է տրւում՝ ՊԱՌԿԻՐ, պէտք է կատարել, ինչ որ ասւած է 18-րդ յօդուածում. միաժամանակ զգուշութեամբ հրացանը պառկեցնել մարմնի երկայնութեամբ և փողաբերանի մասը դնել ձախ ծալած ձեռքի վրայ ու աջ ձեռքով շարունակել բռնել այն տեղից,

ՀԱՅԿ—ՍՍՌ

որտեղից բռնած էր առքի մօտ եղած ժամանակ։

Երբ հրաման է տրւում ՎԵՐԿԱ՛Ծ, հրացանը պէտք է կանգնեցնել ուղղաձիգ և վեր կենալ։

ՀՐԱՁԳՈՒԹԻՒՆ.

35. Հրաձգութեան համար հրացանը պատրաստի առնելը, լցնելը, նշանոցը հասուցնելը, հրացանն ուսին դէմ տալը, նշան դնելը, տրձակելը, կրակը դադարեցնելը, այս՝ բոլորը պէտք է կատարել հրաձգութեան կանոնագրքում տրւած ցուցումներով։

36. Համազարկով կրակ բանալու համար հրաման է տրւում.

1) Դիակի աջ կամ ձախ (եթէ պէտք է, այս ինչ նպատակին),

2) Ծնկի կամ պառկած (եթէ պէտք է),

3) ՏՈՂԱ՛Ն, ԿՐԱԿԻ ՊԱՏՐԱ՛ՍՏ,

4) 14. (նշանոցի բարձրութիւնը),

5) ՆՇԱ՛Ն, ԿՐԱ՛Կ։

Երրորդ հրամանով պէտք է հրացանը պատրաստի առնել և լցնել։ Չորրորդ հրամանով նշանոցը հասուցել, ՆՇԱ՛Ն հրամանով նշան

առնել ցոյց տւած նպատակին, իսկ ԿՐԱ՛Կ հրամանով արձակել, որից անմիջապէս յետոյ՝ կըրկին լցնել նորից արձակելու համար։

Ծանօթութիւն. Ողջոյնի հրաձգութեան ժամանակ հրամաններ են տրւում.

1) ՏՈՂԱ՛Ն. ԿՐԱԿԻ ՊԱՏՐԱ՛ՍՏ,

2) Դէպի վե՛ր

3) ՆՇԱ՛Ն, ԿՐԱ՛Կ։

ՆՇԱ՛Ն հրամանով հրացանի փողաբերանը պէտք է բարձրացնել այնքան վեր, որ ձախ ձեռքի թաթը լինի աչքերի բարձրութեամբ։

37. Եթէ նպատակը չի փոխւել հրաձգութիւնը շարունակելու համար տրւում է հետևեալ հրամանը. ՆՇԱ՛Ն, ԿՐԱ՛Կ։

Եթէ հարկաւոր է հրացանագէի դիրքը կամ նշանոցի բարձրութիւնը փոխել, հրաման է տրւում, առաջին դէպքում՝ ՊԱՌԿԱ՛Ծ (ԿԱՆԳՆԱ՛Ծ. ԾՆԿԻ) իսկ երկրորդ դէպքում՝ 16 (օրինակի համար)։

38. Մրնազարկի համար տրւում են նոյն հրամանները, ինչ որ համազարկի համար. միայն ՆՇԱ՛Ն, ԿՐԱ՛Կ, հրամանի փոխարէն պէտք

է հրաման տալ՝ դանդաղ (արագ) ԿՐԱ՛Կ։

Մենաղարկից համազարկ կրակին անցնելիս նախապէս պէտք է հրամայել (կամ սուլել) հրաձգութիւնը դադարեցնելու համար։

39. Կրակը դադարեցնելու համար հրաման է տրւում՝ ՀՐԱՀԱ՛Ն կամ փամփուշտները—ԴՈՒՐՍ։ Առաջին հրամանը տրւում է կրակը ժամանակաւորապէս դադարեցնելու համար, իսկ երկրորդը՝ երբ այլևս արձակելու կարիք չկայ. Պառկած կամ ծնկի դրութեամբ հրաձգութիւնը դադարեցնելուց յետոյ, հրացանաձիգները մնում են նոյն դրութեամբ, մինչև որ հրաման է տրւում՝ ՎԵՐԿԱ՛Ց (ՊԱՌԿԻ՛Ր)։

ՀՐԱՑԱՆԸ ԲՌՆԵԼՈՒ ՁԵՒԵՐԸ.

40. Հրացանը բռնելու ձևերը պէտք է կատարել կտրուկ, հրացանը ձեռքի մէջ չշրխկացնելով և քայլի բախմանը. համապատասխան տեղութիւն պահելով։

41. Հրացանը ոտքից ձեռքի պէտք է առնել մի նռագ այս հրամանով՝

Ձե՛ռ—ՔԻ՛Դ։



Ձեռքիդ

Այս հրամանով պէտք է դառնալ կէս աջ, առանց գլուխը դարձնելու, և ձախ ոտքը չդնելով աջի մօտ, արագ կէս քայլ առաջ տանել այնպէս, որ ընկնի աջ ոտքի կրնկի դիմաց. միաժամանակ աջ ձեռքով առաջ ձրգել հրացանը՝ ուի նրն այնպէս խոնարհելով, որ նրա ծայրը լինի ձախ աչքի դիմաց և վզի բարձրութեամբ։ Երկու ձեռքով հրացանը բռնել փողակալը ցած դարձրած. ձախ ձեռքով ներքևի օղի վերևից և կողքից, իսկ աջ ձեռքով, ագուստի բռնատեղից, ձեռքն աճուկին կպած։ Մարմինը պէտք է պահել ուղիղ, առանց ծնկները ճկելու։

42. Հրացանը ձեռքից ոտքին պէտք է առնել մի նւագ այս հրամանով՝

Ո՛տ—ՔԻԴ։

Այս հրամանով պէտք է դառնալ աջ ոտքը կրնկի վրայ և կանգնել նախկին դրութեամբ. միաժամանակ աջ ձեռքով բռնել հրացանը նշանոցից վեր և դնել ոտքի մօտ։

43. Հրացանը ոտքիցուսին պէտք է դնել երկու նւագ այս հրամանով՝

Ուսի՛դ—Ա՛Ռ։

Առաջին նւագ. (մէկ). աջ ձեռքով հրացանը պէտք է տանել մարմնի մօտով դէպի ձախ կողքի մօտ, հրացանի փողն առաջ դարձնելով բռնել նշանոցի վերևից, միաժամանակ ձախ ձեռքի դաստակով կոթը բռնել այնպէս, որ խզատակը նստի ձեռքի ափի վրայ, բութ մատն առաջ դարձած, իսկ միւս մատերի ծայրերը կոթի աջ կողմը դարձրած լինեն։ Հրացանը պահել ուղղաձիգ, ձախ ուսի դիմաց. կոթի սուր անկիւնը պէտք է կպչի ձախ ոտքի ազդրի առաջի մասին։

Երկրորդ նւագ. (երկու). աջ ձեռքով թեթև կերպով պէտք է ետ մղել հրացանը՝ դնելով ձախ



Ուսիդ առ.

ուսի վրայ, ձախ ձեռքով կոթը բարձրացնելով այնպէս, որ ձախ ձեռքի դաստակը, մնալով առաջին վարժութեան դրութեամբ, արմունկից քիչ ցած լինի, և միաժամանակ աջ ձեռքը պէտք է տանել իր տեղը։

Հրացանի կոթը պէտք է բռնել ուսի դիմաց և շատ չյենել կրծքի վրայ ու չդարձնել դէպի դուրս։ Ձախ ձեռքն ուսից մինչև արմունկը ցած պիտի թողնել ազատ։

44. Ուսից ոտքին առնել երեք նրագ. այս հրամանով.
Ո՛տ—ՔԻ՛Դ։



Ուսից ոտքին. (2 րդ նւագ).

Առաջին նւագ. (մէկ). հրացանը պէտք է դնել 43 րդ յօդուածում առաջին նւագի համար նկարագրած դիրքի մէջ, աջ ձեռքի դաստակով բռնելով նշանոցից վեր։

Երկրորդ նւագ. (երկու). հրացանը ձախ ձեռքից պէտք է բաց թողնել, աջով բերել մարմնի մօտով դէպի աջ ոտը և բռնել ձախ ձեռքով գօտկի բարձրութեամբ, աջ ոտքի երկարութեամբ պահել այնպէս, որ կոթի սուր անկիւնը թաթերի ծայրերի հետ մի ուղիղ գիծ կազմի և կոթը գետնին չկպչի։

Երրորդ նւագ. (երեք). ձախ ձեռքը պէտք է տանել իր տեղը, իսկ աջ ձեռքով հրացանը կամացուկ ցած դնել գետնին։

45. Ոտքից, պատուի առնել—երկոռ նւագ այս հրամանով.
Պատուի՛—Ա՛Ռ։

Առաջին նւագ. (մէկ). աջ ձեռքով հրացանը պէտք է բարձրացնել և բռնել մարմնին ուղղաձիգ այնպէս, որ փողը լանջամիջի դիմացն ընկնի, սրա հետ միաժամանակ ձախ ձեռքով բռնել փողը—չորս մատներով փողակալի դրսի կողմից, իսկ բութ մատով փողի հաստ մասի վերևի կողմից։ Ձախ ձեռքի դաստակը պէտք է լինի արմունկի բարձրութեանը հաւասար։

Երկրորդ նւագ. (երկու). աջ ձեռքի դաստակը պէտք է տեղափոխել հրացանի ձգանի կամրջակի տակն այնպէս, որ բութ մատը լինի ագուստի բռնատեղի եռևից, իսկ միւսները՝ միացած ձիգ և շեղակի, ագուստի բռնատեղի առաջից, այնպէս որ այս ձեռքի դաստակն օգնի հրացանը պահելուն։

46. Պատւի առ ձևից ոտքի մօտ դնել երեք նւագ այս հրամանով.

Ո՛տ—ՔԻ՛Դ։



(1-ին նւագ). Պատւի առնելը. (2-րդ նւագ).

Առաջին նւագ. (մէկ). աջ ձեռքը պէտք է վեր-

տանել և հրացանը բուռն առնել, ինչպէս 45-րդ յօդւածի առաջին նւագի մէջ է ցոյց տրւած։

Երկրորդ նւագ. (երկու). աջ ձեռքով պէտք է հրացանը տեղափոխել աջ ոտքի մօտ և դնել նրա



ոդ։ Ոի—վար։

երկարութեամբ, ինչպէս ասւած է ուսից ոտքի մօտ դնելու ձևի երկրորդ նւագի մէջ։

Երրորդ նւագ. (երեք). պէտք է կատարել ինչ-

պէս ուսից ոտքի մօտ դնելու ձևի երրորդ նը-
ւագի մէջ է տուած։

47. Ուսնի՛—ՎԱ՛Ր հրամանով առանց նւագնե-
րի պէտք է հրացանը ոտքի մօտ դնել (եթէ
սրիշ դիրքով էր բռնած), փոկը թուլացնել և
աջ թևը մտցնել փոկի և ազուստի մէջ ու կա-
խել աջ ուսին այնպէս, որ սւինը վեր, իսկ փո-
ղը ետևի կողմն ընկնի, ապա ձախ ձեռքն իր
տեղը տանել, իսկ ազատօրէն ցած ձգած աջ
ձեռքով բռնել հրացանի կոթը, ում ինչպէս յար-
մար է։

Հրացանն ուսից հանելու համար պէտք է հրա-
ման տալ՝ հրացա՛նն—Ա՛Ռ։ Այս հրամանով ա-
առանց նւագների հրացանը պէտք է վար առ-
նել ուսից, փոկը ձգել և դնել ոտքի մօտ։

48. Աղօթքի, Գդակդ-ԱՌ հրամանով ձախ ձեռ-
քի արմունկը պիտի ծալել մարմնի մօտ, այն-
պէս, որ դաստակը լինի արմունկի բարձրու-
թեամբ և միաժամանակ աջ ձեռքով հրացանի
կոթը դնել ոտների թաթերի մէջ և յենել ձախ
ձեռքի արմունկի ծալած տեղին։

Յետոյ պէտքէ աջ ձեռքով առնել գդակը

տալ ձախ ձեռքը ու աջը իր տեղը տանել։
Գդակը պէտքէ բռնել այնպէս, ինչպէս ցոյց է
տրւած 20 րդ յօդւածի Բ, պարբերութեան մէջ։

Գդակդ-ԴԻ՛Ր հրամանով պէտքէ դնել գդակը
գլխին և հրացանը ոտքի մօտ.

Ծանօթութիւն. Շարքում հրացանով կանգնող
զինւորները, ինչպէս և նրանք որոնց յատկաց-
րած չէ հրացան կրելը, գդակը պէտք է բռնեն
նոյն կանոններով, ինչ որ ցոյց են տրւած այս
յօդւածում։

ԴԱՐՁՈՒՄՆԵՐ ԵՒ ՇԱՐԺՈՒՄՆԵՐ ՀՐԱՑԱՆՈՎ

49. Հրացանով դարձումները կատարւում են
նոյն կանոններով ու հրամաններով, ինչ որ
առանց հրացանի։ Երբ հրացանը ոտքի մօտ է,
դարձումների ժամանակ նախապատրաստական
հրամանը տալիս, հրացանը գետնից քիչ պէտք է
բարձրացնել և փողաբերանը ուսին մօտեցնել.
իսկ դարձումը կատարելուց յետոյ՝ ետ մնացած
ոտքը տեղը դնելիս, միաժամանակ հրացանը
կամացուկ պիտի իջեցնել գետնին։

50. Շարժման ժամանակ հրացանի դրու-
թիւնը որոշւում է հրամանով, որը տրւում է

շարժում սկսելուց առաջ կամ շարժման ժամանակ։

Ուսն ի՛—ՎԱՐ և հրացա՛նն—ԱՌ հրամանները տրւում են միայն կանգ առնելուց յետոյ։

Կա՛նգ—ԱՌ հրամանով պէտք է կանգնել, ետ մնացած ոտքը դնել առաջինի կողքին, ապա եթէ հրացանը ուսին է, վար առնել ոտքի մօտ։

51. Քայլելիս՝ հրացանը չբռնող ձեռքը պէտք է մարմնի մօտ շարժել ազատ։

Եթէ հրացանը ոտքի մօտ է, շարժման ժամանակ պէտք է գետնից քիչ բարձրացնել, ինչպէս և դարձումների ժամանակ։

52. ԱԶԱՏ հրամանով պէտքէ քայլել ազատ, չպահել 23-րդ յօդւածում ցոյց տրւած կանոնները. ոակայն հրացանը պէտք է պահել նոյն դրութեամբ, ինչ դրութեան մէջ էր մինչև հրամանը։

ՇԻՏԿԻԵԼ հրամանով պէտք է ազատ քայլել, շիտկել հագուստը և հանդերձանքը, հրացանը կրել ում ինչպէս յարմար է։ Եթէ կարիք լինի, կարելի է մօտ եղած պետի միջոցով թոյլտւութիւն խնդրել շարքից դուրս գալու համար։

ԶԳԱՍՏ. հրամանով պէտք է ընդունել սահմանւած կեցուածքն ու կոկւածքը և քայլել 23-րդ յօդւածի կանոնների համաձայն. հրացանը կրել այնպէս, ինչպէս բռնած էր մինչև շիտկւել հրամանը։

53. Պատիւ տալու ժամանակ, երբ հրաման է տրւում. հաւսարեմն ԱՉ. (ՉԱԽ), պէտք է կաաարել 17 և 24-րդ յօդւածներում սահմանւած կանոնները. միայն այն ձեռքը, որ ազատ է հրացանը բռնելուց, պէտք է շարունակի շարժումը։

ԳԼՈՒԽ Բ.

ՏՈՂԱՆԻ ՎԱՐԺՈՒԹԻՒՆ.

Տողանի շարժւածքն ու համրանքը.

54. Տողանում զինւորները կանգնում են սահմանւած միջանցներով (տես յօդւած 7), հասակի կարգով, աջ թևից սկսած դէպի ձախը, իւրաքանչիւրը կանգնում է անհատի վերաբերեալ վարժութեան կանոններով այնպէս, որ ամենքի ոտի թաթերի ծայրերը լինեն մի ուղիղ գծի վրայ։

Տողան կազմելու համար հրաման է տրւում. ՇԱՐԻԻՐ.

55. Երկու տողան կազմելու համար զինւորները նախապէս աջից դէպի ձախ համրում են առաջին եւ երկրորդ: Այս համրանքը պէտք է կատարել առաջին երկրորդ համրի՛ր հրամանով: Իւրաքանչիւր վեր կանգնողը իր համարն ասելիս գլուխն արագ թեքում է իրենից դէպի վար կանգնողի կողմը: Զինւորների ընդհանուր թիւն իմանալու համար նոյն կանոնով տողանի ընդհանուր թւարկութիւն է կատարւում. որի համար պէտք է հրաման տալ կարգով Հա՛մ—ՐԻՐ:

56. Պատիւ տալու համար, երբ հրաման է տրւում. Հաւսարու՛մն—Ա՛Զ. (ԶԱԽ.) զինւորները կատարում են, ինչ որ ցոյց է տրւած անհատի վերաբերեալ վարժութեան 17-րդ յօդւածում. ապա գլուխները նորից ուղղում են հետևեալ նախապատրաստական հրամանով կամ երբ բարևելի անձը անցնում է տողանի ամբողջ ճակատը:

57. ՊԱՌԿԻՐ, ՎԵՐԿԱ՛Ց հրամաններով պէտք է կատարել այնպէս, ինչպէս ասւած է անհատի

վարժութեան մէջ (տես յօդւած 34.):

58. ԱԶԱ՛Տ և ՇԻՏԿԻԵ՛Լ հրամաններով զինւորները նախապէս հաւասարւում են, ապա կատարում են 19-րդ յօդւածում սահմանւած կանոնները:

ՏՈՂԱՆԻ ՀԱՒԱՍԱՐԵՑՈՒՄՆ.

59. Ինչպէս տեղում, այնպէս էլ շարժման ժամանակ պէտք է պահել տողանի ճակատի հաւասարումը: Եթէ հաւասարման կողմը հրամանով նշանակւած չէ, պէտք է միշտ հաւասարւել դէպի աջ թևի կողմը:

60. Տեղում կանգնած տողանը հաւասարելու համար հետևեալ հրամաններն են տրւում.

1. ՀԱՒՍԱ՛Ր:

2. ԶԳԱ՛ՍՏ:

Առաջին հրամանով հրացանի փողաբերանը պէտք է մօտեցնել աջ ուսին, գլուխը դարձնել ցոյց տւած—հաւասարման կողմը, ապա հաւասարւել այնպէս, որ ամեն մէկը տեսնի չորրորդ մարդու կուրծքը, իրեն հաշւելով առաջինը:

Երկրորդ հրամանով գլուխը պէտք է ուղղել և հրացանի փողաբերանն ուսից հեռացնել:

Դարձոտները եւ հրացանը բռնելու ձեւերը

61. Դարձուածները և հրացանը բռնելու ձևերը տղաները կատարում է նոյն կանոններով և հրամաններով, ինչ որ անհատի վարժութեան մէջ է ցոյց տւած (տես յօդւած. 21, 40 և 49։)

62. Կիսադարձների ժամանակ տղաների զինուորները պէտք է ընդունեն իրար նկատմամբ այնպիսի դրութիւն, որ խրոքանչիւրը իր առջև կանգնածի դիմի հետևից չկարողանայ տեսնել իրենից վեր (վար) կանգնողի մատուցած զինուորների գլուխները. իսկ աջ կամ ձախ դարձած ժամանակ զինուորները պէտք է կանգնեն իրար ուղիղ հետևում ծոծրակի դիմաց։

Ծողանի բացումն ու փակումը եւ միտղաների Երկտողան կազմելը.

63. Տղաների բացումն ու փակումը կարելի է կատարել թէ տեղում և թէ քայլելիս, աջ կամ ձախ թևերից և կենտրոնից։

Դէպի ձախ պէտք է բացել աջաթևեան զինուորից. դէպի աջ պէտք է բացել ձախաթևեան զինուորից, իսկ կենտրոնից պէտք է բացել տղաների կենտրոնում կանգնած զինուորից։ Սրան համեմատ կատարւում է նաև փակումը։ Բացելիս և փակելիս շարժումը պէտք է կատարել հապշտապ քայլերով։

Եթէ բացելու համար տւած հրամանի մէջ չէ որոշւած մի չափը, այն ժամանակ պէտք է միմիանցից բացել մի քայլ։ Իսկ երբ հարկաւոր է աւելի լայն միջանց բանալ, այն ժամանակ պէտք է հրամանով որոշել, թէ քանի քայլ հարկաւոր է բացել։

64. Ծնողում բացելու համար հրամայն պէտք է տալ Տղան, ձախ (աջ, կենտրոնից, այսպէս քայլ) Բա՛ց—ԻՐ.

Այս հրամանով, բացի այն զինուորից, որից պէտք է կատարել բացումը, ամենքը դառնում են նշանակւած կողմը և հա—ետ նայելով իրարից հեռանում են կամ մի քայլ, կամ այնքան, որքան հրամայւում է, ապա ամեն մէկը կանգ է առնում և դառնում դէպի այն կողմը, որ կողմը տողանի երեսը դարձած էր հրամանից առաջ։

Հաւասարեցումն պէտք է կատարել միմիայն հրամանով. (տես յօդուած 60)։

65. Տողանը տեղում փակելու համար հրաման է տրւում. Տողաճ, աջ (ձախ, դէպի կենտրոն) Փա՛կ—ԻԻՐ.

Այս հրամանով ամենքը բացի այն զինւորից, դէպի որը պէտք է փակւել, գառնում են նշանակւած կողմը, սկսում են շարժումը մօտենալով իրար այնքան, որքան փակ շարքի համար է որոշւած. կանգնում են և դառնում դէպի այն կողմը, որ կողմը տողանի երեսը դարձած էր հրամանից առաջ։

66. Շարժման ժամանակ բացման և փակման համար նոյն հրամանները են տրւում, ինչ որ տեղում. դրա համար այն զինւորը, որից կատարւելու է բացումը, կամ դէպի որը տողանը փակւելու է, կատարողական հրամանով շարժումը շարունակում է կիսաքայլ. իսկ մնացած զինւորները գառնում են կէս աջ, կամ կէս ձախ ու շարունակելով շարժումը՝ բացում են կամ փակւում հրամանի համաձայն։ Հարկաւոր միջանցը վերցնելով իւրաքանչիւրը գառնում է

շարժման կողմը և քայլում կիսաքայլ, հաւասարւելով դէպի այն թևը (կամ դէպի կենտրոն), որից սկսւել է բացումը (կամ փակումը)։

Երբ որ բոլոր զինւորները բռնեն տողանի գծի վրայ իրենց համար որոշւած տեղերը, հրաման պէտք է տալ. ՅՈՒԱՆ, լիաքայլ շարժումը շարունակելու համար։

67. Երկտողան կազմելու համար հրաման է տրւում. Երկտողան Կա՛զ—ՄԻՐ։

Այս հրամանով, եթէ տողանը տեղում կանգնած է, երկրորդ համարները ձախ ոտը մի քայլ ետ են տանում, իսկ աջ ոտքով, առանց ձախի մօտ բերելու, մի քայլ են անում դէպի աջ, ապա ձախը դնում աջի մօտ, այնպէս, որ կանգնեն առաջին համարների ուղիղ ետևը, նրանց ծոծորակի դիմաց։

Երկտողանից—միտողան վերակազմելու համար հրաման պէտք է տալ.

Միտողան Կա՛զ—ՄԻՐ։

Այս հրամանով երկրորդ համարները անցնում են առաջինների գծի վրայ, մի քայլ անելով դէպի ձախ, աջ ոտքը, առանց ձախի մօտ

բերելու, մի քայլ առաջ են դնում, ապա ձախը տանում աջի մօտ։

Շարժման ժամանակ միևնոյն կազմափոխութիւնները կատարելիս, առաջին դէպքում՝ երկրորդ, իսկ երկրորդ դէպքում առաջին համարները երկու քայլ են անում տեղում։

Տողանի շարժումները.

68. Տողանի շարժման համար, յառաջ, ետ, աջ, ձախ և կիսադարձ պէտք է տալ նոյն հրամանները, ինչ որ անհատի վարժութեան մէջ է յիշուած (տես յօդուած 23, 26, 27 և 28)։

Հաւասարման կողմը ցոյց տալու համար (եթէ կարիք կայ) հրաման պէտք է տալ հաւասարումն —ԱՀ (ՁԱԽ կամ դէպի կենտրոն)։

69. Տողանի շարժման ժամանակ պէտք է, բացի հաւասարման կողմը նշանակելուց, մատնանշել և ռողոռոթիւնը ցոյց տուող որևէ հեռաւոր և աչքի ընկնող առարկայ կամ որևէ ճանապարհի երկայնք կամ գիծ, որի համար հրաման պէտք է տալ։

Դէպի այսինչ առարկան. (կամ այսինչ առարկայի երկայնութեամբ)։

Եթէ անհնար է հեռաւոր և պարզ տեսանելի առարկայ ցոյց տալ, այն ժամանակ կարելի է և հրաման տալ. ԴԷՊԻ ԻՆՁ. կամ ԻՆՁ ՀԵՏԵԻԻՐ։

Այս հրամաններով ուղղապահ զինւորը ուղղակի գնում է դէպի նշանակած առարկան (դէպի պետը) կամ նշանակած գծի երկարութեամբ, իսկ մնացածները իրենց շարժումը յարմարեցնում են նրան։

Կիսադարձ շարժման ժամանակ, բոլոր զինւորներն իրար նկատմամբ պէտք է պահեն 62-րդ յօդուածում ցոյց տրուած գրութիւնը։

70. Ազա՝տ հրամանով պէտք է քայլել ազատ, պահել հաւասարումը, ընդհանուր ոտքը և հրացանները բռնելու կանոնաւոր դրութիւնը։

ՇԻՏԿԻԵ՚Լ. հրամանով, պէտք է կատարել անհատի վարժութեան մէջ ցոյց տրուածը (տես յօդուած 52), միաժամանակ կարելի է չպահել ընդհանուր ոտքը, սակայն առանց թոյլտուութեան չպէտք է տեղից դուրս գալ։

ԶԳԱՍՏ հրամանով պէտք է ոտքը համաչափ և հաստատ պահել, հաւասարման թևում գնացող զինւորի համեմատ։

Քայլելիս պատիւ տալու դէպքում, հաւասարումն Ա.Զ (ՁՈ.Ի), հրամանով պէտք է կատարել, ինչ որ ցոյց է տրուած անմատի վարժութեանց մէջ (տես յօդուած 24 և 63):

ԱՂՂՈՒԹԵԱՆ ՓՈԽՈՒՄԸ.

71. Տղայոց ուղղութեան փոխումը կատարուում է.

ա. Տողանի շարժումով նախապէս ա կամ ձախ դառնալուց յետոյ այս հրամանով՝

1. Տո՛ղան, ձախ (աջ) ԵԱՐԻՒՐ.

2. Քայլով (վազով)—ՄԱՐՇ. (քայլելիս ՄԱՐՇ, կամ վազո՛վ—ՄԱՐՇ).

Ծնողաց կատարելիս վերջին հրամանով բոլոր դինուորները, բացի՝ առջեւնեցից (ձախակողմեանից), պէտք է դառնան կէս ա (կէս ձախ) դէպի շարժման կողմը և քայլեն (վազեն) ամենակարճ ճանապարհով դէպի ճակատի նոր դիծը, ուր և պիտի կանգնեն: Շարժման ժամանակ կատարելիս պէտք է վարուեն նոյնպէս, միայն թեւաւոր դինուորը, որի համեմատ պէտք է շարժումը լինի, նոյնպէս և միւս դինուորները, հետզհետէ տողանի նոր դիծն հասնելով, քայլում են ուղ-

ղում, մինչև ՅՈՒ.Զ կամ կանգ—Ա՛ր հրամանը:

Վազով կատարելիս թեւաւոր դինուորը շարունակում է շարժումը լիաքայլ, իսկ մնացած դինուորները վազում, տողանի նոր դիծն հասնելով՝ շարունակում են նոյնպիսի քայլով:

բ. Տողանի ճակատի դարձումով դէպի ցոյց տուած ուղղութեան այս հրամաններով.

1. Տո՛ղան, դէպի այս (ինչ) աղաղական—Ա.Զ (ՁՈ.Ի).

2. (Վազով) ՀԱՒԱՍԱՐ:

Առաջին հրամանով տողանի բոլոր դինուորները պէտք է դառնան ցոյց տուած ուղղութեամբ: Երկրորդ հրամանով արագ պիտի գնան (վազեն) ճակատի նոր դիծ վրայ շարուելն, հաւասարելով դարձի կողմի վրայ:

Եթէ դարձումը պէտք է կատարել բաւղնից, ապա թեւաւոր (ձախակեանն) դինուորը երկրորդ հրամանով, իսկ միւսները հետզհետէ երբ հասնուին ճակատի նոր դիծ վրայ, քայլում են տեղում մինչև ՅՈՒ.Զ կամ կանգ—Ա՛ր հրամանը:

գ. Տղայոց շրջումով թեւ վրայ դէպի ձախ

կամ աջ, այս հրամաններով.

1. Տողա՛ն, ձախ (աջ) թեւն առաջ,

2. Քայլո՛վ—ՄԱՐՇ (քայլելիս—ՄԱՐՇ):

Առաջ հրամանով տողանի շրջւող թևի թևեան զինւորը գլուխը դարձնում է տողանի ճակատի երկարութեամբ:

ՄԱՐՇ հրամանով տողանը սկսում է շրջւել ձախ (աջ) թևով առաջ. դրա համար շրջւող թևի թևեան զինւորը գնում է լիաքայլ, իր շարժումը յարմարեցնելով այնպէս, որ զինւորներին չսեղմի դէպի կայուն թևը: Կայուն թևի թևեան զինւորը շրջումը տեղում կատարելիս քայլում է տեղում. իսկ քայլելիս, շրջումը կատարելու ժամանակ, փոքր աղեղ է կազմում. միաժամանակ քիչ-քիչ դառնում է դէպի աջ (ձախ) յարմարելով իր շրջւող թևի շարժմանն այնպէս, որ տողանը շարունակ ուղիղ գիծ պահի: Մնացած զինւորները պահում են ճակատի գծով հաւասարումը (նայւածքով, գլուխները չդարձնելով) և որքան աւելի մօտ են գտնւում կայուն թևին, այնքան աւելի փոքր քայլ են անում:

Երբ որ տողանը շրջւի այնքան, որքան հար-

կաւոր է, հրաման պէտք է տալ՝ Կանգ—ԱՌ. կամ ՅԱՌԱՋ:

ՀՐԱՁԳՈՒԹԻՒՆ.

72. Փակ տողանից հրաձգութիւնը կատարւում է միայն համազարկով. իսկ բացից—թէ համազարկով և թէ մենազարկով:

Կրակ բանալու և դադարեցնելու հրամանները տողանի համար նոյնն են, ինչ որ անհատի վարժութեան մէջ. (տես յօդւած 36—39). միայն մենազարկի համար պէտք է հերթ նշանակել այս հրամանով.

Աջից դանդաղ (ձախից) ԿՐԱԿ:

Այս հրամանով զինւորներն առանց շտապելու նշան են բռնում և հերթով կրակում:

Արագ կրակ բանալու համար հրաման պէտք է տալ՝ ԿՐԱԿ. Այս հրամանով բոլոր զինւորները կրակում են առանց հերթի:

ԳԼՈՒԽ Գ.

Ուսուցումն ցրիւ շարքի.

73. Ցրիւ շարքը (հրաձիգ շղթան) գործ պէտք է ածել թշնամուն կրակով աւելի մեծ հարւած

հասցնելու, հրաձգության ժամանակ հրացանաձիգներին տալիս յուրաքանչյուրին տալ և քշնամու կրակից մարգիչին քիչ կրակոց տեղեկացնելու համար։

74. Ցրիվ շարքում 4—6 զինուոր կացմում են մի օղակ. 2—4 օղակը՝ մի ջոկ. 2—4 ջոկը՝ մի դասակ, իսկ 2—4 դասակը՝ մի վաշտ։

75. Ինքնաքնչիւք զինուորի առանձին կամ օգնականում պէտք է լաւ սովորեցնել 78-րդ յօդուածում յիշած ցրիվ շարքի գործողությունների պարտականությունները գնդապետ պարտականությունը. օրինակ՝ յառաջխաղացման, դրոհի, ինքնապաշտպանության, նահանջի ժամանակ. այս բոլորը գնդապետ տեղանքում, քշնամուց գտնվելու հեռաւորության վրայ գտնուած ժամանակ և նրա տեսակ-տեսակ եղանակների գործողությունների ժամանակ, իր հարևան զօրամասերի բարմապիսի դրությունների ժամանակ և այլն։

76. Ուսուցման եղանակների ընտրությունը պետք է ուսուցողին, բայց ինքնաքնչիւք զինուորի առանձին պէտք է գործնականացնել, հրամայել տեղանքում՝ շրջապատում գտնվող պահանջած բոլոր պարտականությունների կատարմամբ։

77. Ցրիվ շարքում պէտք է պահել կատարեալ լռություն, ուշադրություն դարձնել պետի ձայնին և նշաններին, նոյնպէս և ճշտակատար լինել, ինչպէս և վաշտ շարքերում։ Հրամիզ շրջապային զինուորներին վերապահում է ինքնուրոյն կերպով իրենց համար դիրքեր ընտրել, քէ տեղում և քէ շարժման ժամանակ։

78. Զինուորի պարտականությունները ցրիվ շարքի մէջ.

1. Հետևանալ իր օղակին, ջոկին, դասակին և վաշտին առաջադրած մարտական խնդիրը։

2. Շարունակ կապ պահպանել իր օղակի ընկերների հետ, այսինքն հնարաւորություն ունենալ նրանց տեսնելու և լսելու. պատէրը փոխանցել շղթայի գծով, հետևել քշնամու և հարևան զօրամասերի գործողություններին. ինչ որ նկատում է, իսկոյն հաղորդել իր մօտակայ պետին։

3. Ամեն դէպքում օգնել և աջակցել իր մօտակայ ընկերներին, ինչով որ կարելի է. կրակ

բանալով, ուինով, բահով կամ անմիջական աջակցութեամբ, (օրինակ՝ դժւար յաղթահարելի արգելքներից անցնելու ժամանակ)։

4. Հրաձիգ շղթայի մէջ ոչ մի պատրւակով ինքնագլուխ իր տեղը չպէտք է թողնել։ Վիրաւորւելիս՝ ընկերներին չպիտի խանգարել կատարելու իրենց անմիջական պարտականութիւնները այլ պէտք է յայտնել իր մօտակայ պետին և նրա թոյլտւութեամբ միայն ուղևորւել վիրակապութեան վայրը. կամ փամփուշտները յանձնելով մօտիկ ընկերոջ, ետ սողալ մի որևէ թաքստոց, սպասել, մինչև որ պատգարակիրները գան և վերցնեն։

5. Հրաձիգ շղթայի մէջ ընտրել իրեն համար որոշւած նպատակակէտին կրակելու յարմար դիրք, ըստ կարելւոյն, թշնամու կրակից և տեսողութիւնից պաշտպանւած. դրա համար մնալով հարևանների միջանցների սահմաններում, կարելի է առաջ, աջ կամ ձախ անցնել, միայն թէ չխանգարել ճակատի ընդհանուր ուղղութիւնը, շղթայի և հարևանների գործողութիւններին. իր հրացանի համար յենարան շինել.

պատւէրով, նոյնպէս և հարկաւոր դէպքում իր նախաձեռնութեամբ, թշնամու աչքից և կրակից պաշտպանւելու համար ծածկարան շինել ունեցած գործիքներով, հողով լցրած տոպրակով և այլն։

6. Կրակ բանալ պետի պատւէրով կամ հրամանով. միայն մշտակայ նշանոցի համար սահմանւած հեռաւորութիւնների վրայ կարելի է, եթէ յատկապէս արգելւած չէ, ինքնուրոյն կրակ բանալ, իր հայցողեութեամբ ընտրել կրակի նպատակը և արագութիւնը։

7. Աջից (ձախից) կրա՛կ հրամանով կրակել ջոկապետի կամ օղակապետի նշանակած հերթով. արագ կրա՛կ հրամանով արձակել առանց հերթի. բայց բոլոր դէպքերումն էլ ուշադրութեամբ հաստել նշանոցը, ճիշտ կերպով նշան բռնել և խնայել իր փամփուշտների պաշարը ու հոգալ պակասը լրացնելու, առնելով շարքից դուրս եկող զինւորների փամփուշտները։ Երբ փամփուշտների պաշարի կէսը բանեցրած է, այդ մասին զեկուցել օղակի պետին։

8. Երբ դասակապետը կամ ջոկապետը սու-

լումէ, անմիջապէս դադրեցնել հրաձգութիւնը։

9. Օդաչէն, ջոկի կամ դասակի շարժման ժամանակ պահել պետի որոշած ուղղութիւնն և, ըստ կարելւոյն, նշանակած միջանցք ուղղափառ զօրամասի կողմի հարևանին և իր միջև, սակայն օգտւելով տեղանքից ծածուկ և յարմար շարժում կատարելու համար, հրամանը կրկնել ամէն կամ ոքի մօտ, ում լսելիս յարմար է։

Ընթ զօրամասի մէջ եղած ժամանակ վարժ տեղափոխութիւն, վազ՛ով—ՅԱՌԱՋ հրամանով պէտք է վեր թռչել տեղից, շեշտակի վազել դէպի նշանակած առարկան կամ նշանակած ուղղութեամբ և, եթէ կարիք լինի, թշնամու կրակին առկաս ենթակայ լինելու համար, վազել կուզէկուզ կա՛նգ—ԱՌ հրամանով իսկոյն յարմարւել տեղին, ինչպէս յիշած է ճ-րդ կէտի մէջ։ Մէկ—մէկ առաջով կամ վարժական տեղափոխութեան ժամանակ, իւրաքանչիւր վիճակ պէտք է նշանակուած տեղը գնայ, ինքնուրոյն ընտրելով յարմար ճանապարհ դէպի նշանակած ուղղութիւնն և հանդիսանան տեղերը։

10. Գրոհ տալու համար՝ ՅԱՌԱՋ հրամանով պէտք է առաջ վեր թռչել տեղից և գնալ պետի ցոյց տւած ուղղութեամբ. եթէ որոշւած չէ, չարունակել ճանապարհին կրակել թշնամու վրայ վերաձիգ նշանառութեամբ. երբ գրոհի պէտք է դիմել առանց ճանապարհին կրակելու, այն ժամանակ գնալ արագաքայլ, հաւատարմւելով առջևից գնացողին։ ՀՈՒՐՐԱ՛ հրամանով շեշտակի արագութեամբ հուռռա գոռալով յարձակւել թշնամու վրայ ամենամարտի, վազելու ժամանակ խոտանալով դէպի մօտակայ պետը։

11. Երբ ժամանակ կամ հնարաւորութիւն չկայ սպասելու պետի պատւէրներին, (հրամաններին կամ պայմանական նշաններին), պէտք է վարւել ինքնուրոյն, հոգալ ամենից առաջ գործողութիւնների ընդհանուր նպատակին հասնելու և թշնամուն, ըստ կարելւոյն, մեծ հարւած հասցնելու մասին։

12. Երբ կարիք լինի, պէտք է շարքից դուրս եկած պետի տեղն անցնել և շարունակել նրա սկսած գործը։

ՄԱՍՆ Բ.

ԴԱՍԱԿԻ ՎԱՐԺՈՒԹԻՒՆ

ԳԼՈՒԽ Ա.

ՓԱԿ ՇԱՐՔ

Դասակի շարւածքն ու համրանքը.

79. Դասակը շարւում է իր մասերը կազմող ջոկերով։ Ջոկերը շարւում են երկու տողանով և կանգնում են իրար կողքի իրենց համարների կարգով, աջից դէպի ձախ։ Ջոկերին հրամանատու են իրենց մշտական ջոկապետները։

Միակներին պէտք է կանգնեցնել ջոկերի մէջտեղում։

Ծանօթութիւն. Խաղաղ ժամանակ երկեակների թիւը ջոկերի մէջ հարկաւոր դէպքում կարելի է հաւասարեցնել. դրա համար երբ դասակն ունի 16 և աւելի երկեակ, պէտքէ բաժանել չորս ջոկի, 12—15 երկեակ ունեցողը՝ 3-ի, 8—11 երկեակ ունեցողը՝ 2-ի, իսկ աւելի փոքր թիւ ունեցող դասակը հաշւել մի ջոկ։

Դասակի երկայնած շարքը.



1) Անհաւասարաթիւ.
2) Նոյնը հաւասարաթիւ.
3) 10 երկեակով։

80. Ջոկերը պէտք է բաժանել օղակների, որոնցից իւրաքանչիւրը 2—3 երկեակ ունենայ։ Ամեն մի օղակի մէջ մի մի գինւորի նշանակել աւագ։ Իւրաքանչիւր ջոկում օղակները պէտք է ունենան իրենց համարները։

Ջոկապետները օղակների համրանքի մէջ չեն մտնում։

81. Դասակի մէջ բոլոր երկեակները, նրանց թւում և ջոկապետները, բացի առաջինից, պէտք է աջ թևից դէպի ձախ համարեն՝ առաջին և երկրորդ (տես յօդւած 55.)

82. Դասակաւոր ենթասպան պէտք է կանգնի

այնտեղ, որտեղից նրան յարմար է հրամաններ տալ և հետևել նրանց կատարմանը։

Եթէ դասակի հրամանատուն սպայ է, այն ժամանակ դասակապետ ենթասպան պէտք է կանգնի դասակի ձախ թևում, առաջին տողանի մէջ։

83. Ջոկապետները պէտք է կանգնեն իրենց ջոկերի աջ թևում առաջին տողանում։ Երբ ջոկի աջ թևում կանգնում է դասակապետը, առաջին ջոկի պետը պէտք է կանգնի նրա ուղիղ ետևում երկրորդ տողանի մէջ, իսկ երբ նա շարքից դուրս է գալիս, ջոկապետն անցնում է նրա տեղը։ Ջոկապետները հրամաններ արտասանելիս շարքից չըպէտք է դուրս գան, այլ միայն գլուխները թեքեն ճակատի երկայնութեամբ և հրաման տան կիսաձայն. (տես յօդւած 12)։

84. Հառաջարումն—Ա՛Ջ, (ՉԱ՛Խ.) հրամանը, նոյնպէս և հրացանը բռնելու ձևերը, պէտք է կատարել, ինչպէս յիշւած է անհատի և տողանի վարժութիւնների մէջ (տես յօդւած 56 և 61)։

85. ՊԱՌ—ԿԻՐ հրամանով երկու տողան-

ներն էլ միաժամանակ են պառկում անհատի վարժութեան կանոններով (տես յօդւած 19 և 34). միայն առջևի տողանի զինւորները նախապէս մի քայլ առաջ են անցնում, ՎԵՐ—ԿԱ՛Ց հրամանը կատարելուց յետոյ ետևի տողանը մի քայլ է անում դէպի առջևի տողանը։

Ազա՛տ. Շիտկւե՛ր և Ազա՛ստ հրամաններով պէտք է կատարել, ինչպէս ցոյց է տրւած անհատի և տողանի վարժութիւնների մէջ (տես յօդւած 19 և 58.)։ Շիտկւե՛ր հրամանով ջոկապետները կարող են իրենց զինւորների շուրջն անցնել և հարկաւոր կարգադրութիւններն անել։

ԴԱՍԱԿԻ ՀԱՒԱՍԱՐԵՑՈՒՄՆ ՈՒ ԴԱՐՁՈՒՄՆԵՐԸ.

87. Դասակի հաւասարեցումն կատարւում է տողանի հաւասարեցման կանոններով և հրամաններով (տես յօդւած 59 և 60). դրա համար երկրորդ տողանի զինւորները պէտք է կանգնեն առաջին տողանի զինւորների ուղղիղ ետևում ծոծորակի դիմաց (տես յօդւած 5)։

88. Դասակի դարձումները կատարւում են անհատի վարժութեան մէջ ցոյց տւած կանոն-

ներով և հրամաններով (տես յօդւած 21)։ Երբ դասակը դառնում է երկրորդ տողանի վրայ, նոյնպէս և կիսադարձերից յետոյ, առաջին տողանի միակները դարձումից յետոյ (երեք և չորս նւագներին) անցում են երկրորդ տողանը։

ՔԱՌԵԱԿՆԵՐ ԵՒ ԵՐԿԵԱԿՆԵՐ ԿԱԶՄԵԼԸ.

89. Տեղում քառեակ պէտք է կազմել երեք նւագ այս հրամանով՝ Քառեակ կա՛զ—ՄԻՐ հրամանով։

ա) Երբ շարքը դարձած է առաջին տողանի վրայ, երկրորդ համարները ձախ ոտքը մի քայլ ետ են դնում, աջ ոտքով, առանց ձախի մօտ բերելու, մի քայլ դէպի աջ են անում այնպէս, որ կանգնեն առաջին տողանի առաջին համարների ծոծորակի դիմաց, և երրորդ նւագին ձախ ոտքը տանում են աջի մօտ։ Երկրորդ տողանի առաջին համարները առաջին և երկրորդ նւագներին կէս քայլ ետ են դնում։

բ) Երբ շարքը դարձած է երկրորդ տողանի վրայ, երկրորդ համարները աջ ոտքով մի քայլ են անում առաջ, ձախ ոտքը, առանց աջի մօտ

դնելու, մի քայլ դէպի ձախ են անում, այնպէս, որ առաջին համարները լինեն նրանց ծոծորակի դիմաց։ Երրորդ նւագին աջ ոտքը դնում են ձախի մօտ։ Երկրորդ տողանի առաջին համարները առաջին և երկրորդ նւագներին կէս քայլ առաջ են դնում։

գ) Երբ շարքը դարձած է աջ թեւի վրայ, երկրորդ համարները մի քայլ են անում դէպի աջ, ձախ ոտքով, առանց աջի մօտ դնելու, մի քայլ առաջ, այնպէս որ կանգնեն առաջին համարների գծի վրայ, և երրորդ նւագին աջ ոտքը տանում են ձախի մօտ. երկրորդ տողանի առաջին համարները առաջին և երկրորդ նւագներին կէս քայլ դէպի աջ են դնում։

դ) Երբ շարքը դարձած է ձախ թեւի վրայ, երկրորդ համարները մի քայլ են անում դէպի ձախ, աջ ոտքն, առանց ձախի մօտ բերելու, մի քայլ ետ տանում, այնպէս որ կանգնեն առաջին համարների գծի վրայ և երրորդ նւագին ձախ ոտքը դնում են աջի մօտ. երկրորդ տողանի առաջին համարները առաջին և երկրորդ նւագներին կէս քայլ ձախ են դնում։

Շարքի կիսադարձի ժամանակ քառեակներ չեն կազմւում, իսկ եթէ քառեակներն արդէն կազմւած են եղել մինչև դարձը, այն ժամանակ մնում են նոյն դրութեան մէջ։

Մանօթութիւն. Ութ երկեակից պակաս ունեցող շարքը քառեակներ չպէտք է կազմի։

90. Քառեակներից տեղում երկեակներ կազմելը կատարւում է երեք նւագ, երկեակ կա՛զ—ՄԻՐ հրամանով։ Այս հրամանով երկրորդ հա-

Աջ դարձած դասակը քառեակներով.



1) անհաւասաթիւ ջոկերով (24 երկեակ)
2) նոյնը հաւասարաթիւ (24 երկեակ)
3) 10 երկեակով

մարները նախորդ յօդւածում ցոյց տւած շարժումների հակառակն անելով՝ մտնում են իրենց տեղերը։ Երկրորդ տողանի առաջին համարներն երկրորդ և երրորդ նւագներին մօտենում են առաջինին սահմանւած հեռակայութեամբ։

91. Շարժման ժամանակ քառեակներ և երկեակներ կազմելը կատարւում է նոյն կանոններով և հրամաններով, ինչ որ տեղում, սակայն այն համարները, որոնք պիտի ետ գնային կամ մնային անշարժ՝ երկու քայլ են անում տեղում։

ԳԱՍԱԿԻ ԲԱՑՈՒՄՆ ՈՒ ՓԱԿՈՒՄԸ.

92. Դասակի բացումն ու փակումը կատարւում է նոյն հրամաններով ու կանոններով, ինչ որ տողանի վարժութեան մէջ (տես յօդւած 63—64) միայն ինչ որ տողանի մէջ յիշւած է մի զինւորի համար, դասակի մէջ կատարւում է ամբողջ երկեակով։

Դասակի երկեակներում գտնւած պետերը բացւում ու փակւում են նոյն միջանցներով, ինչ որ ոսսկականները։

ԵՐԿՏՈՂԱՆ ՇԱՐՔԻՑ ՄԻՏՈՂԱՆ ԿԱԶՄԵԼԸ ԵՒ ԸՆԴՀԱԿԱՌԱԿԸ.

93. Երկտողան շարքից միտողան կազմելու համար՝ ամենից առաջ պէտք է երկեակները քանալ. Մնացածը—ինչպէս այս, նոյնպէս և հակառակը վերակազմելը—կատարւում է, ինչպէս ասուած է տողանի համար 67-րդ յօդուածում. սակայն այդ վարժութեան մէջ, երկրորդ համարների մասին ասածները դասակի մէջ վերաբերւում են երկրորդ տողանի զինւորներին։

ՀՐԱՑԱՆՆԵՐԻՑ ԲՈՒՐԳ ԿԱԶՄԵԼԸ.

94. Հրացաններից բուրգ կազմելու համար պէտք է հրաման տալ՝ Հրացանն Ի—ԲՈՒՐԳ։ Այս հրամանով առաջին տողանը պէտք է դառնայ ետ. ապա իւրաչանչիւր երկու երկեակ—երկու տողանների առաջին և երկրորդ համարները—չորս կամ երեք հրացաններից կազմում են մի բուրգ[1]) զգուշանալով, որ ուինները մօ-

Ծանօթութիւն [1])—Շարքում ամեն զինւոր հրացանից բուրգ կազմելու համար պէտք է ունենայ որևէ ընդունւած իր, որ յարմարութիւն տայ բուրգ կազմելու։

տեցնելիս և հրացանների կոթերը իրարից հեռացնելիս, հատիկները չկպչեն իրար։ Յետոյ տողանները շարւում են՝ առաջինը հրացաններից կազմած բուրգերի գծից մի քայլ առաջ, իսկ երկրորդը՝ մի քայլ ետ, երեսը դարձնելով ճակատի կողմը։

Ենթասպաները իրենց հրացանները դէմ են անում մօտիկ բուրգերին։ Միայն իւրաքանչիւր բուրգի մէջ վեց հրացանից աւելի չպէտք է լինի։

Հրացանները բուրգերից վերցնելու համար հրաման պէտք է տալ՝ Ի—ԶԷՆ։ Այս հրամանով բոլոր զինւորները վերցնում են իրենց հրացանները և կանգնում իրենց նախկին տեղերում։

ԴԱՍԱԿԻ ԵՐԿԱՑՆԱԾ ՇԱՐՔԻ ՇԱՐԺՈՒՄՆԵՐԸ ԵՒ ՈՒՂՂՈՒԹԵԱՆ ՓՈԽՈՒՄԸ.

95. Դասակի երկայնած շարքի շարժումներն և ուղղութեան փոխումը կատարւում են տողանի համար սահմանւած կանոններով և հրամաններով (տես յօդուած 68—71), բացի այդ՝ երկրորդ տողանը միշտ պէտք է իւր շարժումը համակերպի առաջինին, իսկ երկրորդ տողանի վրայ դարձած ժամանակ—ընդհակառակը։

Զինուորները պէտք է հաւասարուեն ճակատի դծով երկեակներում և քառեակներում։

ՍԻՒՆ ԵՒ ՆՐԱ ՇԱՐՈՒՄԸ, ԿԱԶՄԱՓՈԽՈՒՄՆ ՌԻ ԵՐԿԱՅՆՈՒՄԸ.

96. Դասակից կազմւում է միայն ջոկասիւն. այս սիւնի մէջ մէկ ջոկ միւսի ետևում պէտք է կանգնի ջոկի երկայնութեան հաւասար հեռակայութեամբ (տես յօդւած 9.)։

97. Ջոկասիւնի մէջ պետերը բռնում են երկայնած շարքի մէջ իրենց համար ցոյց տրւած տեղերը (տես յօդւած 82 և 83)։

98. Ջոկասիւնը կարող է շարւել կամ այն ուղղութեամբ, դէպի ուր դասակի երկայնած շարքը դարձած է, կամ ուղղութեան փոխումով դէպի թևերից մէկի կողմը։

99. Ջոկասիւնի շարւելը դասակի ճակատի ուղղութեամբ՝ կարող է կատարւել միայն յառաջ շարժուելով կամ քայլելիս թևեան ջոկերից մէկի համեմատ։ Դասակապետը դրա համար հրաման է տալիս.

1. Դասակ, աջից (ձախից) ջոկ առ ջոկ,
2. Քայլով—ՄԱՐՇ (քայլելիս—ՄԱՐՇ)։

Երկրորդ հրամանով աջ (ձախ) թևի ջոկն առաջ է գնում, իսկ մնացած ջոկերը դառնում են կէս աջ (կէս ձախ) և տեղում երկու քայլ անում. երրորդ քայլին գնում են անցնելու առաջաւոր ջոկի ետևը և հետզհետէ ետև անցնելով՝ իրենց ջոկապետների կէս ձախ (կէս աջ) հրամանով դառնում են դասակի շարժման կողմը։ Առջևի ջոկի դառնալու ժամանակ հետևեալը կրկին տեղում անում է երկու քայլ։

ՋՈԿԱՍԻՒՆ.



Անհաւասարաթիւ ջոկերով. (24 երկեակ)

Նոյնը՝ հաւասարաթիւ. (24 երկեակ)

100. Ջոկասիւնի շարւելը՝ ուղղութիւնը $^1/_4$ շրջանի չափ փոխելով՝ կատարւում է տեղում և քայլելիս։ Սրա համար դասակապետը պէտք է հրաման տայ.

1. Ջոկեր, Ձախ թեւն (աջ թեւն) առաջ։

2. Քայլով ՄԱՐՇ. (քայլելիս ՄԱՐՇ)։

Երկրորդ հրամանով իւրաքանչիւր ջոկ ձախ թեւով աջի վրայ (աջ թեւով ձախի վրայ) շուռ է գալիս $^1/_4$ շրջան, որից յետոյ դասակապետը հրաման է տալիս.

3. Դասակ, կա՛նգ—ԱՌ կամ ՅԱՌԱՋ.

101. Աջ (ձախ) թեւի վրայ դարձած դասակը ջոկասիւնի է կազմափոխւում ջոկերի միաժամանակ ձախ (աջ) շարւելով։ Սրա համար դասակապետը հրաման է տալիս.

1. Երկեակ ԿԱ՛Զ—ՄԻՐ (եթէ քառեակ է կազմած)։

2. Ջոկե՛ր, ձախ (աջ) ՇԱՐԻԻՐ։

3. Քայլո՛վ—ՄԱՐՇ. (քայլելիս ՄԱՐՇ)։

ՄԱՐՇ հրամանով իւրաքանչիւր ջոկ շարւում է, ինչպէս ասւած է տողանի համար (տես յօդւած 71. կէտ ա.)։

Այս կազմափոխութիւնը քայլելիս կատարելու ժամանակ՝ դասակապետը դասակը շարւելուց յետոյ հրաման է տալիս.

Դասա՛կ—կաննգ—ԱՌ, կամ ՅԱՌԱՋ.

102. Ջոկասիւն շարւած դասակը զուգաշար առաջ տանելու համար՝ դասակապետը հրաման է տալիս.

1. Դասա՛կ, ԱՋ—ԴԱՐՁ։

2. Ջոկե՛ր, աջ թեւն (ձախ թեւն) ԱՌԱՋ։

3. Քայլով—ՄԱՐՇ (քայլելիս ՄԱՐՇ։

Վերջին հրամանով բոլոր ջոկերը սկսում են միաժամանակ շուռ գալ. երբ որ առաջաւոր երկեակը շրջւի, որքան հարկաւոր է, դասակապետը հրաման է տալիս՝

4. ՅԱՌԱՋ։

5. Քառեակ ԿԱ՛Զ—ՄԻՐ (եթէ պէտք է)։

103. Ջոկասիւնն երկայնւում է առաջաւոր ջոկի համեմատ։ Դրա համար դասակապետը հրաման է տալիս՝

1. Դասա՛կ ձախ (աջ) ՇԱՐԻԻՐ.

2. Քայլո՛վ—ՄԱՐՇ (քայլելիս ՄԱՐՇ)։

Տեղում կատարելու համար երկրորդ հրամանով

տոլոր ջոկերը, բացի առաջատար ջոկից, իրենք պտտում են կէս ձախ (կէս աջ) և շարունակում շարժումը. իւրաքանչիւր ջոկ իր առջևում գտնուղ ձախ (աջ) թևի հանից դուրս գալուն պէս, իր ջոկապետի կէս աջ ԴԱՐՁ (կէս ձախ ԴԱՐՁ) հրամանով դառնում է, ապա կանգ—Ա՛Ռ հրամանով կանգնում է դասակի ճակատի գծի վրայ։

Նոյնը քայլելիս կատարելու ժամանակ՝ գտնուղ ջոկը երկրորդ հրամանով քայլում է առաջ. երբ ջոկերը հետզհետէ դուրս են գալիս առաջատար ջոկի գծի վրայ, իրենց ջոկապետներին տեղում հրամանով նոյնպէս քայլում են առաջ և հետևում առաջատար ջոկին։ Երբ ամբողջ դասակը շարժում է, դասակապետը հրաման է տալիս՝ Դասակ, ՑԱՌԱՋ կամ կանգ—Ա՛Ռ։

Նոյն շարժումը, առաջ և քայլելիս վազով պէտք է կատարել առանց ջոկապետների հրամաններին։ Եռակ ջոկերի գինուորները իրենք, որքան կարելի է արագ, վազում են իրենց տեղերը երկտող շարքի մէջ, քայլելիս առաջատար ջոկը շարունակում է շարժումը վազքայլ։

104. Շարժման մէջ դանուղ դասակի առաջա-

ւոր ջոկը կանգնեցնելով՝ դասակը երկտղելու համար հրաման պէտք է տալ.

1. Քան առաջատար ջոկի, դասակ ձախ (աջ) շարի՛ր։

2. ՄԱ՛ՐՇ։

Առաջատար ջոկը կանգ է առնում իր ջոկապետի կանգ—Ա՛Ռ հրամանով. իսկ մնացածները կատարում են, ինչ որ յիշած է 103 յօդուածում, տեղում երկտղելու համար։

105. Դասակը զուգաշարով դարձած ժամանակ երկտղելու համար նոյն ուղղութեամբ, դէպի ուր դարձած է դասակապետը, հրաման է տալիս.

1. Երկտակ կազմի՛ր (եթէ քառեակ է կազմած)։

2. Դասակ ձախ (աջ) շարի՛ր,

3. Քայլով (վազով)—ՄԱ՛ՐՇ.

(Քայլելիս—մա՛րշ կամ վազելիս մա՛րշ)։

ՄԱ՛ՐՇ հրամանով կատարւում է, ինչ որ ցոյց է տւած առջևի համար 71 րդ յօդւածի ա. կէտի մէջ։

ՋՈԿԱՍԻՆԻ ՇԱՐԺՈՒՄՆԵՐՆ ԵՒ ՈՒՂՂՈՒԹԵԱՆ ՓՈԽՈՒՄԸ.

106. Երբ որ ջոկասինը շարժւում է ուղղակի ուղղութեամբ, ետևի ջոկերի երկեակները պէտք է հաւասարեն ոչ միայն ճակատով, այլ և առջևից գնացողների ծոծորակով, պահելով սահմանուած հեռակայութիւնը նրանցից։ Կիսադարձ շարժման ժամանակ ջոկերը պահում են յարաբերական դրութիւն, հաւասարելով, ինչպէս ասուած է տողանի համար 62-րդ յօդուածում։

107. Հաւասարումն ԱՉ (ՁԱԽ) հրամանով իւրաքանչիւր ջոկի զինւորները կատարում են, ինչ որ ասուած է անհատի վարժութեան մէջ (յօդուած 24 և 53)։ Երբ անցնում են բարևելի անձից, գլուխները պէտք է պահեն ուղիղ (և սկսեն ձեռքերը շարժել, եթէ գնում են առանց հրացանի)։

108. Ջոկասինի ուղղութեան փոփոխութիւնը կատարւում է տեղից յառաջ շարժումով կամ քայլելիս, ջոկերի յաջորդաբար շրջելով թևի վրայ, դրա համար դասակապետը հրաման է տալիս.

1). Դասակ, աջ թեւն (ձախ թեւն) առաջ. Քայլ՛ով—ՄԱՐՇ (քայլելիս—ՄԱՐՇ)։

2) Երկրորդ հրամանով առաջաւոր ջոկը սկսում է շրջել, իսկ երբ նա շրջւի, որքան հարկաւոր է, դասակապետը հրաման պէտք է տայ.

3. ՅԱՌԱՋ։

Միւս ջոկերը դասակապետի երկրորդ հրամանով սկսում են (շարունակում են) շարժումն և հետզհետէ հասնելով այն տեղը, ուր շրջել է առաջաւոր ջոկը, իրենց ջոկապետների ՄԱՐՇ և ՅԱՌԱՋ հրամաններով նոյնպէս շրջւում են։

ՀՐԱՁԳՈՒԹԻՒՆ.

109. Հրաձգութիւնը դասակի երկայնած շարքից կարող է կատարել 1. փակ շարքից միայն համազարկով կանգնած կամ ծնկի. 2. բաց շարքից թէ համազարկով և թէ մենազարկով կանգնած, ծնկի կամ պառկած։

110. Հրաձգութիւնը և նրա դադարեցնելը պէտք է կատարել անհատի (տես յօդուած 36—39) և տողանի (տես յօդուած 72). վարժութեանց մէջ ցոյց տուած հրամաններով և կանոններով, միայն հետևեալ փոփոխութեամբ։

ա. Դասակ կրակի նախապատրաստական հրամանով դասակապետն անցնում է դասակի ետև և կանգնում այնտեղ, որտեղից լաւ կլսւի իր հրամանը և յարմար է զինւորների գործողութիւնները ու կրակի հետևանքը դիտել. ետևի տողանի զինւորները մի քայլ են անում դէպի ձախ առաջ, այնպէս, որ կանգնեն առջևի տողանի զինւորների միջանցների դիմաց. իսկ երբ հրաման է տրւած ՊԱՌԿԱԾ, մտնում են այդ միջանցները։

բ. ՊԱՏՐԱՍՏ հրամանով ջոկապետներն և այն ենթասպան, որը դասակի հրամանատու չէ, հրացանները պատրաստիքի են առնում։

ՓԱՄՓՈՒՇՏՆԵՐԸ ԴՈՒՐՍ կամ ՀՐԱՀԱՆ հրամանը կատարելուց յետոյ, իսկ եթէ հրաձգութիւնն եղել է ծնկի կամ պառկած, ՎԵՐԿԱՑ հրամանով, բոլորը բռնում են իրենց տեղերը։

ԳԼՈՒԽ Բ.

ՑՐԻԻ ՇԱՐՔ.

ԸՆԴՀԱՆՈՒՐ ՑՈՒՑՈՒՄՆԵՐ.

111. Դասակի ջոկերը ցրիւ շարքում տեղաւորւում են կողք-կողքի. զինւորների միջանցները նշանակւում են նայելով այն տեղամասի տարածութեան, որը հրամայւած է դասակին բռնել, նայած զինւորների թւին շղթայի մէջ և տեղական թաքստոցներին։

112. Ջոկերը դասակում, օղակները՝ ջոկերի մէջ, ամեն մէկ զինւոր՝ օղակների մէջ (տես յօդ. 78. կէտ. 5), տեղանքին լաւ յարմարւելու համար, կարող են ճակատի ընդհանուր գծից քիչ առաջ անցնել, ձախ կամ աջ գնալ, սակայն չպէտք է կուտակւեն ու խանդարեն հարևանների կրակ բանալուն և կապը կտրեն նրանց հետ։

113. Դասակապետներն և ջոկապետները պէտք է գտնւեն իրենց տեղամասի շրջանում. այնպիսի տեղերում, որտեղից աւելի յարմար է ղեկավարել իրենց ստորադրեալ զինւորներինև դիտել թշնամուն ու մարտադաշտը։

Օղակների աւագները պէտք է գտնւեն շղթայում իրենց օղակի զինւորների մէջ։

Դասակի ոչ հրամանատարու ենթասպան պէտք է գտնւի այտեղ, ուր ցոյց կտայ դասակապետը։

ՇՂԹԱՅԻ ՂԵԿԱՎԱՐՈՒԹԻՒՆԸ.

114. Դասակապետն իր դասակի շղթան և ջոկապետներն իրենց ջոկերը ղեկավարում են հրամաներով, պատւէրներով և պայմանական նշաններով։ Բացի այդ մենագարկը դադարեցնելու համար դասակապետներն ու ջոկապետները կարող են գործածել և սուլիչ։

Օղակների աւագներն իրենց զինւորներին ղեկավարում են նշաններով և պատւէրներով։

115. Իւրաքանչիւր ջոկ կազմում է դասակի առանձին շղթայամաս, որը գտնւում է ջոկապետի կարգադրութեան տակ։ Շղթայի մէջ երբեմն տարբեր ջոկերի զինւորներ անխուսափելիօրէն խառնւում են իրար. այն ժամանակ ուրիշ շղթայամասի մէջ ընկած զինւորները պէտք է ենթարկւեն այն ջոկապետի և օղակի

աւագի հրամանին, որի շղթայամասի մէջ իրենք ընկել են։

Առաջին հնարաւոր դէպքում պէտք է հրամայել, որ զինւորները գատւեն գնան իրենց ջոկերն և օղակները։

ՊԵՏԵՐԻ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹԻՒՆՆԵՐԸ ՇՂԹԱՅԻ ՄԷՋ.

116. Ամեն մի պետ շղթայի մէջ պարտական է.

1. Գիտակցել գործողութիւններին նպատակն և մարտական խնդիրն այն զօրամասի, որի կազմի մէջ անմիջապէս մտնում է իրնն վստահացած շղթայամասը, և գործադրել իր բոլոր ոյժերն և իշխանութիւնը, որպէսզի լաւ կատարի իրեն առաջադրած մարտական խնդիրն։

2. Ճշտակատարութեան, անվեհերութեան և տոկունութեան օրինակ գառնալ իր ստորադրեալների համար։

3. Հոգալ, որ իր ստորադրեալները հասկանան գործողութեանց նպատակն և պարագան, խրախուսելով նրանց ինքնագործունէութեանն ու հնարագիտութիւնը, միաժամանակ պահանջել

նրանցից, որ խիստ ճշտակատար լինեն և կանոնագրքով սահմանված պարտականությունները խոհուն կերպով պահեն։

4. Հսկել, որ իր ստորադրեալներից ոչ ոք առանց պատուէրի կամ թույլտուութեան շարքը չթողնի։

5. Կազմակերպել իրեն տեղամասի սահմաններում անընդհատ դիտողութիւն թշնամու գործողությունների ու իրեն բռնած դիրքի և դիտել առջևից թևերի ու ետևի կողմերում գտնված տեղանքը։

6. Միշտ հետևել, որ զինուորներն ունենան բաւարար քանակութեամբ փամփուշտ և իր ժամանակին լրացնել փամփուշտի պակասը։

7. Եթէ զնդացիրներ կամ թնդանօթներ են մացնում շղթայի մէջ—իրեն վստահացած տեղամասի շրջանում կամ մօտերքը—առանց պատուէրի սպասելու միջոցներ ձեռք առնել թշնամու յանկարծական գրաւումից ազատելու համար։

8. Միջոցներ ձեռք առնել արագ յարաբերութեան մէջ մտնելու իր անմիջական պետի

հետ. նոյնպէս՝ կապ և համագործակցութիւն հաստատել իրեն յանձնված զօրամասերի և հարևան գործօն զօրքերի միջև։

9. Շարքից դուրս գալու դէպքում՝ յայտնել, թէ որոնք են իր փոխանորդները. նոյպէս հետևել, որ իր ստորադրեալ պետերն էլ, նրանց շարքից դուրս գալու դէպքում, անմիջապէս փոխարինեն ուրիշները։

10. Երբ ժամանակ կամ հնարաւորութիւն չկայ սպասելու աւագ պետի ցուցումներին, գործել ինքնուրոյն, հոգալով ամենից առաջ ընդհանուր նպատակին հասնելու և ըստ կարելւոյն, թշնամուն ծանր հարուած հասցնելու մասին։

117. ԴԱՍԱԿԱՊԵՏԸ ՊԱՐՏԱԿԱՆ Է.

1. Ղեկավարել դասակի կրակը, շարժումներն և գործողությունները (դասակի շղթայամասի մէջ), առաջնորդելով դասակին տրուած մարտական խնդրով և վաշտապետի ցուցումներով։ Մարտադաշտն և իր պետի պայմանական նշանները դիտելու, նոյնպէս և պատուէրներ և և տեղեկութիւններ հաղորդելու և յանձարարու-

թիւնները կատարելու համար՝ դասակապետը կարող է իր մօտ կանչել դասակից մէկ կամ երկու զինւոր։

2. Երբ իւր դասակը որևէ տեղ տեղաւորում է, հոգալ նրա տեղանքին լաւագոյն կերպով յարմարւելու մասին, իսկ երբ հարկաւոր է, նաև արհեստական միջոցներով ամրացնելու մասին։

3. Հրաձգութեան ժամանակ ցոյց տալ նպատակները, նշանակել նշանոցի բարձրութիւնը, նշանակէտը և կրակի տեսակն ու հրաման տալ ամբողջ դասակով համազարկ բանալու։ Երբ հարկաւոր լինի, կրակի անմիջական ղեկավարութիւնը յանձնել ջոկապետներին, օղակների աւագներին և նոյնիսկ սոսկականերին. երբ պայմանների թելադրանքով հարկաւոր լինի, դադարեցնել կրակը։

4. Տեղափոխութեանց ժամանակ դասակին ցոյց տալ հրաձգութեան դիրքերը, նշանակել ուղղութիւնն և ուղղապահ ջոկ. երբ դասակը ամբողջութեամբ միաժամանակ պիտի տեղափոխուի, անձամբ առաջնորդել իր դասակին. իսկ

ջոկերով, օղակներով կամ մէկ-մէկ տեղափոխութեան ժամանակ, ջոկերի հերթն և վազէ-վազի կարգը ղեկավարել։

5. Գրոհի և սիւնամարտի ժամանակ զինւորներին ցոյց տալ հարւածի նպատակն և ուղղութիւնը, անձամբ առաջնորդել իր դասակին և առաջինն ինքը «հուռռա» կանչելով յարձակւել թշնամու վրայ։

148. ՋՈԿԱՊԵՏԸ ՊԱՐՏԱԿԱՆ Է

1. Հսկել, որ իր շխթայամասի զինւորները ճշտութեամբ կատարեն դասակապետի հրամաններ, պատւէրներն և պայմանական նշանները, նոյնը կրկնելով, եթէ հարկաւոր լինի։

2. Հսկել զինւորների տեղանքին ճշտօրէն յարմարւելու և հրաձգութեանը։

3. Վարել համազարկով և դանդաղ կրակ բանալու հերթը ջոկի մէջ, եթէ դասակապետը կրակ բանալը յանձնել է իրեն։

4. Ջոկերի, օղակների կամ մէկ-մէկ տեղափոխութեան, նոնպէս և գրոհի ժամանակ անձամբ առաջնորդլով իր ջոկին ղեկավարւե-

յոյ դատավարության ցուցմունքով և պարտական ի նախան առնելով երդ կարող է, նշանակել չափի մէջ ուղղապէս օգտի:

119. Օրէնքի առաջը պէտք է հաւասի, որ դատավարեան և չհաւասար արած լսոյր կարդալումիննելը, անյաղթ և ճշմարիտ դատաւորին, նշանագիր ճշմարտ հասանին, ուրիշ նշանաւոր անձնաւորութեամբ յարմարեին անդամքին. հանի նաև օրէնքի պինաբերեալ անհատականութեանց և դրբեղուրեանց ու ամեն քանաւոր օրինակ դատաւոր նշանագ հասար, որ օրէնքս դանդաղ կրակ բանալու հերիքը: Օրէնքներով և մէկ-մէկ վարչական ժամանակ նա պէտք է անձամբ առաջնորդի իր օրէնքին:

Օրէնքի առաջը պէտք է միայն իմանայ, թէ իր օրէնքի իրաւասնչիւր-պինաբ որտեղ է գտնուում, ինչ է անում և որքան բաւարար թուղ պատմիւնքն ունի:

ԴԱՏԱՎԱՐԱԿԱՆ ՁՐՈՒՄԸ

120. Դատարկը կարող է շրջայի ցրուել ամեն առաջ չարչից և ամեն ուղղութեամբ,

առաջ, կամ առաջ շարժուելով, քայլով կամ վազով:

121 Դատարկը սեղնում ձախատի գծով ցոյց տուած դիրքի վրայ՝ կանգ առնելով ցրելու համար, դատավարեան յայտնում է վինաբնական դրդռդութեանց նպատակը, ցոյց է տալիս նրանց տեղի ընկած տարիան, որ վերջ պէտք է ուղղելութեան պահել և այն գիծը կամ գիրքը, որ պէտք է բանի շրջան, որտեղ է պինաբերների մի քանցն է յոյոյ հրամանի է տալիս դատարկ, գծով (կամ դեպի ձախ) ՀՂՔԱՅ (եթէ կիսար է առնացնել ՎԱՋՈՒ):

Այս հրամանով կենտրոնի (առաջեան, ձախաթեան) գինաբերն իսկոյն դադարում է դէպի յոյոյ ուած տարիան, կանգնում է (եթէ դատարկը շարժուում էր) կամ հանում է քայլով կամ վազով մինչև յոյոյ ուած դիրքը (գիծը) և յարմարում տեղացքին. միացածները շուտափոյթ (վազով) ցրուում են ճակատի նոր գծով, քայլերնս մի ուղղու են կազմում և բացելով դատարկի նշանակած միջանցներով՝ կանգ են առնում և յարմարում տեղացքին (յոյ-

ւած 78 կէտ 5) և իսկոյն լցնում հրացանները։

Ցրումը առաջ շարժելով կատարւում է նախորդ յօդւածում ասածի նման. բայց ԳԾՈՎԴ (դէպի այս ինչ դիրքը) հրամանը չպէտք է տալ։ Դասակապետը նշանակում է ուղղապահ մի ջոկ, որը ցրելով շարժւում է ցոյց տւած ուղղութեամբ. իսկ մնացածները ցրւում են նրանից աջ կամ ձախ կիսադարձ շարժումով։

Դասակի ցրելուց յետոյ՝ շարունակում է շարժումը կամ կանգ է առնում դասակապետի ԿԱՆԳԱՌ, հրամանով, որը կատարելով՝ զինւորներն իսկոյն յարմարւում են տեղանքին և լցնում հրացանները։

ՇՂԹԱՅԻ ՀՐԱՁԳՈՒԹԻՒՆԸ.

Շղթայի հրաձգութիւնը կարող է լինել՝ մենազարկով, դանդաղ կամ արագ կրակ և համազարկով.

124. Մենազարկով կրակ բանալու համար՝ դասակապետը ցոյց է տալիս՝ 1) նպատակը, որը հարկաւոր է դնդակոծել և 2) նշանոցի

բարձրութիւնը, ապա հրաման է տալիս.

ա) դանդաղ կրակի համար՝ ջոկերում. (կամ օղակնեմ.ռմ դանդաղ ԿՐԱԿ,

Ջոկապետները հարկաւոր դէպքում դասակապետի ցուցումները կրկնում են և հրաձգութեան հերթ նշանակում, ապա հրաման են տալիս՝ դանդաղ, աջից (ձախից) ԿՐԱԿ. օղակնեմ.ռմ հատ-հատ ԿՐԱԿ (տես յօդւած 72).

բ) արագ կրակի հրաման պէտք է տալ արագ ԿՐԱԿ, այս հրամանով զինւորները կրակում են առանց հերթի։

125. Մենազարկ հրաձգութիւնը դադարեցնելու համար՝ դասակապետը սուլում է. նոյնը կրկնում են և ջոկապետները, կամ նա պատէր է տալիս, որը փոխանցւում է շղթայի գծով, որից յետոյ, եթէ կարևորէ, հրահան կամ փամփոշտնե՛րը—ԴՈՒՐՍ հրամանները է տալիս։

126 Համազարկ հրաձգութիւնը, դասակով կամ ջոկերով, կատարւում է անհատի վարժութեան հրամաններով (տես յօդւած 36 և 37,). միայն չպէտք է որոշել զինւորների դրութիւնը։

ՇՂԹԱՅԻ ՇԱՐԺՈՒՄՆԵՐԸ.

128. Բոլոր շարժումների ժամանակ շղթան պէտք է պահպանէ իրեն տրուած ուղղութիւնը, գնացողները պէտք է իրար մէջ կապ պահեն ու չսպասելով ցուցումների՝ իրենք յարմարեցնեն տեղացքին։

128. Շղթան կարող է շարժել քայլով կամ վազելով վերջին դէպքում՝ ամբողջ դասակով, չորեքով, օղակներով կամ մէկ-մէկ։ Բացի այդ՝ շղթայում սաստիկ կրակի տակ գնացողները կարող են ինչ-ինչ տեղեր շրջանցել վազելով կամ սողալով անցնել։ Տեղափոխութիւնն եղանակը որոշում է դասակապետը։

Գնացողները հրացանը կրում են՝ ում ինչպէս յարմար է. հրացանները լցրած ժամանակ, հրացանը պէտք է դնել պահպանական ապահովիչ։

129. Շղթան քայլով շարժելու համար, դասակապետը դադարեցնում է կրակը, ցոյց է տալիս շարժման ուղղութիւնը և տեղափոխութեան վայրը, ապա հրաման է տալիս.

1. ~~Գնում՛~~ հրսման

2. Ըստ այս ինչ չոկի, դէպի այս ինչ առարկան (կամ ինձ հետևից).

3. Դադար ՅԱՌԱՋ։

Վերջին հրամանով գնացողները կանգնում են կենում և գնում, որտեղ ցոյց է տուած. խոշոր չոկի պետը քայլերի հրաման է տալիս՝ դէպի այս ինչ առարկան (կամ դասակապետի ետևից), ըստ այս ինչ (ուղղարան) օդակի. միւս չոկերի պետերը, եթէ պէտք է, կրկնում են դասակապետի հրամանը։

Դադարը կանգնեցնելու համար դասակապետը հրաման է տալիս.

Դադար կա՛նգ-Ա՛Ռ։

Գնացողները կանգ առնելով՝ իրենք յարմարւում են տեղանքին (տես յօդուած 78 կէտից)։

130. Վազելով ամբողջ դասակով կատարւում է նոյն կանոններով և հրամաններով ինչ որ սուած է քայլով շարժման համար, այն տարբերութեամբ, որ ՅԱՌԱՋ հրամանից յետոյ՝ դասակապետը պէտք է սեղմկոցի վազք տայ։

131. Չոկերով վազելու համար դասակապետը որոշում է նպատակը, չոկապետներին

ցույց է տալիս այն տեղը, ուր պէտք է վազել և վազեվազի հերթը։

Հերթական չոկերի պետերն իրենց դինւորներին հաղորդելով գաստակալեակի պատէրը իրենց շրջայտմասերում դաստրեցնում են կրակը և հրաման տալիս՝ Ըստ այս ինչ օղակի դէպի այս ինչ առարկան (ինչ նուէնք)—վա՛զ։ Օ՛Ն ՅԱՌԱՋ։

Եթէ գաստակալեակի ցույց տւած վերջնական կէտին մի վազքով անկարելի է հասնել, այն ժամանակ չոկապետները կարող են դինւորներին յարմար տեղում կանգնեցնել կարճառև հանգստի համար, այնքան ատեում, որքան անհրաժեշտ կլինի։

Տեղում մնացող չոկերը, եթէ հարկաւոր է և հնարաւոր տրամ կրակով պաշտպանում են վազքն իրենք երբ վազող չոկերը տեղաւորւում են նոր դիրքերում և կրակ են բաց անում, կամ պայմանական նշան են տալիս, հետևեալ չոկերը շարունակում են վազեվազը։

132. Օղակներով եւ մէկ-մէկ վազեվազը նոյնպէս և սողալով տեղափոխութիւնը կատարւում է վերոյիշեալ կանոնների համեմատ. հերթական չոկերի պետերն օղակների մէջ հերթ են դրանակում և անձամբ առաջնորդում առաջաւոր օղակներին (առաջաւոր դինւորներին) գաստակալեակի ցոյց տւած տեղը։ Այնտեղ չոկի համար յարմար դիրք ընտրելով նրան նշան են տալիս մնացած օղակներին շարժման համար։

Օղակների առաջնները պէտք է ձգտեն իրենց դինւորների հետ շուտափոյթ վազել (սողալ) հասնել առաջ անցածներին։

133. Շղթայի ետ շարժումն էլ կատարւում է նոյն եղանակով, ինչ որ յառաջ, շարժւում է միայն քայլով, սակայն ՅԱՌԱՋ հրամանի փոխարէն ԵՏ հրամանը պէտք է տալ։ Տեղափոխութիւնից առաջ գաստակալեակը ցոյց է տալիս այն դիրքը կամ գիծը, դէպի որը շղթան պիտի նահանջի։

134. Շղթայի տեղափոխութիւնները շեղակի ուղղութեամբ և դէպի թիկն կողմը՝ կատարւում են վերոյիշեալ կանոնների համեմատ։

ՈՒՂՈՒԹԵԱՆ ՓՈԽՈՒՄՆ.

135. Դասակի ուղղութեան փոխումը (քայ-

լոյ, վառով և ապուռով) մխոժամանակ ամբողջ ձմեռուայ, տեղում և քամլիկ, կատարւում է 71-րդ յօդուածի բ. կէտում տուածների (դէպի ուր ինչ տատիկան) և շրջայի շաբաթուան կանոնների համեմատ։

136. Ուղղութիւնը տեղում չափերով օդակներով, կամ մէկ-մէկ, փոխելու համար, դատաւորութեան հրամայում է չափերից մէկին տեղափոխել նոր ուղղութեամբ, տալ համապատասխան պատիժը է տալիս միւս չափերին։

Չափերը տեղափոխում են նոր դիր վրա խրելոց պետերի հրամանագրով. (պատերներով, նշաններով)։

ԳՐՈՀ ԵՒ ՍԻՒՆԱՄԱՐՏ.

137. Երբ դատակն ամբողջ մօտ չիտուն քայլ մօտենում է թշնամուն շրջայով, միանգամից կարող է տեղից յարձակուել նրա վրա՝ ուժնամարտի։

Երբ հնարաւոր չէ տեղանքի յատկութիւնների օգտուելով տիրոջ մօտենալ թշնամուն, (վառելով կամ տղալով) այն ժամանակ

վերջին շրջան դէպքից քայ կարող է դիմում է դարձ, մօտենում է այնքան տարածութիւն (մօտ 50 քայլ), որ կարելի լինի արձակել նետ։

Ծանօթութիւն։ Ճմրայում գետի դատուում է դարձ կշռում է դալիք։

138. Խնչալէս դրօշի, նոյնպէս և տեղից տեղափոխելու համար, դատակապետը դիմում է դարձ յայտարարում է դարձ տարածութեան նետաստակին և շարժման ուղղութիւնը։

139. Ձեղից ուժնամարտի պէտք է դիմել դատակապետի ՀՈՒՆՈՒՆ հրամանով։ Այս հրամանով դիմադրութիւնը տեղից տրած վրա են քշում և միանգամից հուսուս դատալով, քշում վրայ են քնկնում, վոչնչիս խնայելով դէպի մօտակայ տեղը։

140. Գրոհի շարժուելու համար՝ դատակապետը հրամանը պէտք է տայ ՕՇՆ Ի ԳՐՈՀ, ՅԱՈՒՆՈՒՆ։

Չափանիշները և օդակները տարածները դիմում են այս հրամանը։ Նրանք դիմադրութեամբ վրա են կենում և յատուկ են դիմում՝ հատատարելով տղինները, և քայ-

լելիս շարունակում են կրակել թշնամու վրայ։

Երկրորդ շղթան մօտենում է թշնամուն, նուանց մօտ յիսուն քայլի վրայ, դասակապետը հրաման է տալիս՝ ՀՈՒՌՍԱ՛ և առաջ վազում։ Զինւորները դադարեցնելով կրակը, ՌՈՒՈՒՍ՛ գոռալով շեշտակի ընկնում են թշնամու վրայ ուինամարտի, վազելիս խտանալով դէպի մօտակայ պետերը։

141. Երբ գրոհի պիտի դիմել առանց քայլելիս կրակելու, այն ժամանակ դասակապետն այս ժամին պէտք է նախայայտնի զինւորներին, իսկ օն ի գրոհ, ՅԱՍԱ՛Զ հրամանից առաջ պէտք է ~~ԴԱԴԱՐ~~ հրաման հրամանը տայ և ինքը գնայ դասակի առաջից։ Զոկապետները պէտք է հրամանները կրկնեն և նոյնպէս անցնեն առաջ։ Զինւորները պիտի շուտաքայլ գնան հրացանը ոտքի մօտ բռնած։ Դասակապետի ՀՈՒՌԱ՛ հրամանով, բոլորը միահամուռ պիտի նետւեն ուինամարտի։

142. Ետ շարքերով թշնամուն, դասակապետը կանգնեցնում է դասակը, հաւաքում, կարգի է բերում, ապա կրակ է բաց անում նահանջող

թշնամու վրայ կամ թշնամուն օգնութեան հասնող զօրամասի վրայ և կամ հրամայում է պաշտպանել խրամատներ փորելով և կամ թէ չէ այլ անհրաժեշտ կարգադրութիւններ է անում։

ՇՂԹԱՅԻ ՀԱՎԱՔԸ.

143. Շղթան հաւաքելու համար դասակապետն եթէ հրաձգութիւն կար, հրաձգութիւնը դադարեցնում է՝ ապա հրաման է տալիս՝ դէպի ԻՆՁ և միաժամանակ երեսը դարձնում է պահանջած ուղղութեամբ։

Այս հրամանով զինւորները վազելով հաւաքւում են դասակապետի ետև և կազմում են երկտողան երկայնացած շարք։

ՄԱՍՆ Գ.

ՎԱՃԱՌԻ ՎԱՐԺՈՒԹԻՒՆ.

ԳԼՈՒԽ Ա.

ՓԱԿ ՃԱՐՔ.

Վաճառի հաստիքն եւ նրա պաշտօնատարների պարտականութիւնները.

144. Վաճառի մէջ դասակները կանգնում են կողք-կողքի և, եթէ յատուկ պատէր չի եղել այլից դէպի ձախ երանց համաքանակի կարգով։

Վաճառը չորս դասակ ունեցած ժամանակ, 1-ին և 2-րդ դասակները կազմում են առաջին կիսավաճառ, 3-րդ և 4-րդը՝ երկրորդը։

Ծանօթութիւն։ Խաղով ժամանակ դասակներում երկաթների քիչ, երբ հարկաւոր լինի, կարելի է հաւասարեցնել այնպէս որ, եթէ վաճառում 32 երկաթից քիչ է, պէտք է թաժանել երեք կամ երկու դասակի, կամ ընդունել իրրև մի դասակ, միայն թէ դասակների իւրաքանչիւրի մէջ 8 երկաթից պակաս չլինի։

145. Իւրաքանչիւր դասակի հաստատեալ տեղն է, ինչ որ ասած է դասակի վարժութեան մէջ. (տես յօդուած 79 և 81). Չոկերը դասակի մէջ, իսկ օղակները՝ չոկերի մէջ, պահում են երանց հաստատեալ

տեղերում։ Ձախ կողմի չոկերի օղակները ձախ կողմի դասակի մէջ, իսկ աջ կողմինները՝ աջ կողմի դասակի մէջ։

146. Վաճառի հաստիքը կազմում են հետեւեալ պաշտօնատարները.

1) Վաճառապետ, որ կոչւում է նաեւ վաճառի տէր։

2) Վաճառի ստորապետ։

3) Վաճառի ծառայ։

147. Վաճառապետը կամ վաճառի տէրը պարտաւոր է հսկել վաճառի վրայ, ուղղել նրա վնասները, ամրացնել նրա մասերը, ինչպէս նաեւ հոգալ, որ վաճառի մէջ միշտ լինեն պէտք եղած չափ երկաթներ։

148. Վաճառապետը պարտաւոր է ունենալ վաճառի մէջ մի գրքոյկ, որի մէջ գրի առնէ վաճառի մէջ եղած երկաթների քանակութիւնը։ Այդ գրքոյկը պէտք է ունենայ հետեւեալ ձեւը.

Ամսաթիւ	Ի վաճառի մէջ եղած երկաթների քանակութիւնը	Ի վաճառ մտած երկաթների քանակութիւնը	Ի վաճառից դուրս եկած երկաթների քանակութիւնը	Ի վաճառի մէջ մնացած երկաթների քանակութիւնը	Ծանօթութիւն

149. Վաճառապետը պարտաւոր է ամէն օր առաւօտեան ժամը 8-ին և կէսօրից յետոյ ժամը 2-ին գալ վաճառ, ստուգել երկաթների քանակութիւնը, գրի առնել գրքոյկի մէջ, ինչպէս նաեւ ստուգել, թէ ինչ երկաթներ են պակասում, ինչ երկաթներ են ծռած կամ կոտրած։ Ծռած կամ կոտրած երկաթները պէտք է ուղղել կամ փոխել նորերով։

150. Վաճառապետը պարտաւոր է ամէն օր առաւօտեան ժամը 8-ին և կէսօրից յետոյ ժամը 2-ին գալ վաճառ, ստուգել երկաթների քանակութիւնը, գրի առնել գրքոյկի մէջ, ինչպէս նաեւ ստուգել, թէ ինչ երկաթներ են պակասում, ինչ երկաթներ են ծռած կամ կոտրած։ Ծռած կամ կոտրած երկաթները պէտք է ուղղել կամ փոխել նորերով։

146. Կրտսեր սպանները շարքում պետեր են նշանակւում այն դասակների, որոնք շարքից դուրս էլ նրանց են յանձնւած։

147. Վաշտի վերական հսկում է շարքի մէջ եղած բոլոր զինւորներին։

148. Ուղղացոյցը, բացի ազդանշաններ տալուց (եթէ նա սովորել է այդ), ծառայում է և որպէս նշանակ վաշտապետի գտնւած տեղի համար և ցոյց է տալիս վաշտի հաւաքի տեղը. դրա համար նա ունի ունի վրայ վաշտի նշանակը։

Երբ դուրս է տալիս վաշտի հաւաքի տեղը ցոյց տալու, նա կանգնում է այնտեղ, ուր պիտի լինի վաշտի կենտրոնը, և երեսը դարձնում է այն կողմը, ուր վաշտը ճակատով պիտի դարձած լինի։ Միաժամանակ նա հրացանը բռնում է կրծամիջի դիմաց՝ ուղղաձիգ, փողը դէպի դուրս, ձախ դաստակը հրացանի կոթի տակ, իսկ աջ դաստակով ագուստի բռնատեղից բռնած։

Ծանօթութիւն. Շարքում ուղղացոյցը, երբ հրացանի ունին նշանակ ունի հագցրած, ձեռքիդ հրամանը չի կատարում։

ՎԱՇՏԻ ՇԱՐՔԵՐԸ.

149. Վաշտն ունի հետևեալ շարքերը. երկայնած, սիւներ, դասակներով զատազատ և բացի այդ մարտակարգ։

ա. ԵՐԿԱՅՆԱԾ ՇԱՐՔ.

150. Երկայնած շարքում (փակ և բաց) դասակները կանգնում են մի գծի վրայ առանց միջանցների։

Ծանօթութիւն։ 1. Վաշտի համար նշանակւած գնդացիրները, իրենց փամփշտի երկանիւներով, կանգնում են վաշտի կենտրոնի ետև 20 քայլի վրայ շարժման կարգով և երկայնած շարքի մէջ նեղ միջացներով։

Ծանօթութիւն։ 2. Փամփշտի երկանիւները տեղաւորւում են գնդացիրների ետև 10 քայլի վրայ. (իսկ եթէ գնդացիրներ չկան, այն ժամանակ վաշտի ետև 10 քայլի վրայ) մի գծի վրայ հաւասար միջացներով, հաշւելով իւրաքանչիւր երկանիւի ճակատը 6 քայլ։

151. Վաշտապետը կանգնում է այնտեղ, որտեղից աւելի յարմար է նրան զեկավարել վաշտը։

152. Դասակապետները կանգնում են իրենց դասակի աջ թեում առաջին տողանում։ Ջոկա-

պետերն և այն ենթասպաները, որոնք դասակների հրամանատու չեն, կանգնում են դասակի վարժութեան մէջ (տես յօդուած 82 և 83) ցոյց տուած տեղերում։

Ծանօթութիւն։ Հրամաններ արտասանելու համար, երբ վաշտը տեղում է կանգնած և դարձած առաջին կամ երկրորդ տողանի վրայ դասակապետները դուրս են գալիս երկու քայլ առաջ (ետ) երկրորդ քայլին երեսները դարձնում են դասակի ճակատի երկայնութեամբ. շարժման ժամանակ դրա համար նրանք քիչ դատուելով շարքից՝ գլուխները դարձնում են դասակի կողմը։ Ջոկապետները հրամաններ են տալիս մնալով իրենց տեղերում։

153. Վաշտի վերական կանգնում է վաշտի կենտրոնի ետև, երկրորդ տողանից երկու քայլի վրայ, կենտրոնի երկեակի ուղիղ ետևում. նրա ձախ կողքին կարգով շարւում են վաշտի մթերապահը՝ ուղղացոյցն և վաշտի նշանարարը։ Իսկ աջ կողմում թմբկահարները (փողարները)։

Եթէ շարքում գտնւում են և թմբկահարներ և փողարներ, այն ժամանակ վերջինները կանգնում են թմբկահարների աջ կողմում. բայց թմբկահարների աւագը կանգնում է փողարների

աջ թևում։ Այս յօդուածում յիշուած պաշտօնատարներից եթէ մէկն ու մէկը բացակայում է, մնացածները փոխւում են դէպի վերական։

154. Վաշտապետի հրամանով՝ ուղղացոյց եւ նշանարար (փողար) ԴԷՊԻ ԻՆՉ, որոնք վաշտի թևի ետևից դուրս են վազում դէպի վաշտապետն և կանգնում նրա ետև երկու քայլի վրայ, կողք-կողքի։

155. Վաշտապետի հրամանով՝ թմբկահարներ (փողարներ) դէպի աջ (ձախ) թեւ, նրանք անցնում են վաշտի աջ թևի կողմը (ձախ) վերջին զինւորից 4 քայլի վրայ կանգնում, հաւասարւելով երկրորդ տողանի հետ։ Բացի այս թմբկահարների աւագը (իսկ եթէ շարքում միայն փողարներ են, որոնց աւագը) կանգնում է մի քայլ առաջ՝ հաւասարւելով առաջին տողանի հետ։ Թմբկահարներ (փողարներ) տեղերդ հրամանով, նրանք անցնում են վաշտի ետև։

Երկու դէպքումն էլ թմբկահարների (փողարների) աւագը, կիսաձայն համապատասխան հրամաններ տալով, կարճ ճանապարհով նրանց առաջնորդում է ցոյց տուած տեղերը։

Բ. ՍԻՒՆԵՐ.

156. Վաշտը կազմում է դասակասիւն և ջոկասիւն։

1) Անհաւասարաթիւ դասակներով (32 շարք).



2) Հաւասարաթիւ դասակներով (64 շարք).



157. Դասակասիւն կազմած ժամանակ դասակների միջև հեռակայութիւնը պիտի լինի հինգ քայլ։

158. Սիւների մէջ բոլոր պաշտօնատարները երկայնած շարքում ցոյց տուած տեղերն են բռնում։

Ծանօթութիւն։ Գնդացիրներն և փամփշտների

երկանիւները տեղաւորւում են 150-րդ յօդւածում ասած հեռակայութեանց վրայ, վաշտի սիւնի ետև, մէկ կամ երկու գնդացիրով (երկանիւով) սիւն կազմելով։

159. Թմբկահարներ (փողարներ) վաշտի առաջ հրամանով թմբկահարները (փողարները) դուրս են գալիս վաշտի կենտրոնի առաջ. կանգնում 8 քայլի վրայ (տես յօդւած 155)։

Թմբկահարներ (Փողարներ) դէպի աջ (ձախ) թեւ և կամ թմբկահարներ (փողարներ) տեղե՛րդ հրամանները կատարւում են 155-րդ յօդւածում յիշւած կանոնով. առաջին դէպքում նրանք կանգնում են հաւասարւելով առաջաւոր դասակի երկրորդ տողանի հետ։

Գ. ԴԱՍԱԿԱՒՈՐ ԶԱՏԱՇԱՐ.

160. Դասակաւոր զատաշարի դասակները տեղաւորւում են մէկ կամ երկու գծով կամ ետաստիճան, վաշտապետի պատուէրներով նշանակւած հեռակայութիւններով և միջանցերով։ Իւրաքանչիւր դասակ իր դասակապետի հայեցողութեամբ, նայած թէ ինչ պարագայի մէջ է գտնւում դասակը, կարող է ունենալ երկայնած շարք (փակ կամ բաց, երկտողան կամ

մխոտոդան), օրսանեն կամ գաստրալ։

161. Եթե վաշտապետը դասակներով դասաշարքի դասավորման մասին ցուցումները չի տալիս, այն ժամանակ դասակները տեղավորում են երկու գծով, մոտ 40 քայլ միջանցքերով և հետևակայուքիւններով, 1 և 2 դասակները առաջին, գծի վրայ, 3 և 4-րդը՝ երկրորդ։

162. Դասակավոր գասաշարում գնդացիքները վաշտապետի կարգադրությամբ այնպէս է լինին դասակներից մէկի մոտ։

Փամփշտի երկանիւները տեղավորում են վաշտի կենտրոնի հետևում, դասակների հետևից գծից 10 քայլի վրայ։

163. Դասակավոր գասաշարում դասակապետները գրանում են այն տեղերում, որտեղից իրենց համար ամենից յարմար է իրենց դասակներին հրամաններ տալ, կապ պահելով վաշտապետի հետ։ Ջոկապետները և այն դասակապետ ենթասպաները, որոնք հրամանատար չեն, պահում են դասակի վարժութեան մէջ նշանակված տեղերը (տես յօդուած 82 և 83). վերակաց, թմբկահարները (փողարները), ուղղորդները, վաշտի նշանաբարը (փողաբը) և մթերապահը գտնւում են վաշտապետի մօտ կամ, նրա ցուցումով, դասակների մոտ։

ՎԱՇՏԻ ՂԵԿԱՎԱՐՈՒԹԻՒՆԸ.

164. Վաշտը ղեկավարելու համար վաշտապետը հրամաններ է տալիս, որ լրացւում են պատէրներով և փոխարինւում են պայմանական նշաններով (տես յօդ. 14) կամ ազդանշաններով։ Վաշտապետի պատէրով արուած փողազդները (փողով արուած ազդանշանները) վերաբերում են միայն դասակապետներին (տես յօդուած 15)։

ՎԱՇՏԻ ՀԱՒԱՍԱՐԵՑՈՒՄԸ.

165. Վաշտի հաւասարեցումը կատարւում է տողանի և դասակի վարժութիւնների մէջ յիշուած կանոններով (տես յօդուած 60 և 87.)։ Հաւասարման կողմը պէտք է որոշւի հրամանով. իսկ եթե դրա համար հրաման չէ եղել, այն ժամանակ երկրորդ վաշտը հաւասարւում է դէպի կենտրոնը, իսկ օրթասիւնները՝ դէպի աջ թևը։ Դասակավոր գասաշարի մէջ իւրաքան-

չիւր դասակ հաւասարւում է ինքնուրոյն։

166. Հաւասարումն ԱՉ (ՁԱԽ), ԱԶԱՏ ՇԻՏԿԻԵԼ. ԶԳԱՍՏ, ՊԱՌԿԵՐ և ՎԵՐ—ԿԱՑ հրամաններով վաշտը կատարում է նոյնը, ինչ որ դասակը (տես յօդւած 84—86).

ՇԻՏԿԻԵԼ հրամանով դասակապետները և ջոկապետները կարող են զինւորների շուրջն անցնել և հարկաւոր կարգադրութիւնները անել։

ՎԱՇՏԻ ԴԱՐՁՈՒՄՆԵՐԸ ՔԱՌԵԱԿՆԵՐ ԵՒ ԵՐԿԵԱԿՆԵՐ ԿԱԶՄԵԼԸ, ԲԱՑՈՒՄՆ ՈՒ ՓԱԿՈՒՄԸ, ԵՐԿՏՈՂԱՆԻՑ ՄԻՏՈՂԱՆ ԵՒ ՀՐԱՑԱՆՆԵՐԻՑ ԲՈՒՐԳ ԿԱԶՄԵԼԸ։

167. Վերնագրում յիշւած գործողութիւնները վաշտը կատարում է այնպէս, ինչպէս դասակը (տես յօդւած 84 և 94). բացի դրանից.

ա. Երբոր վաշտը դառնում է աջ (ձախ) թևի վրայ, դասակապետները մի քայլ են անում դէպի ձախ (աջ), իսկ առաջին ջոկերի ջոկապետները անցնում են նրանց տեղերը։

բ. Երբ որ վաշտը բացւում է, դասակապետները դուրս են դալիս կանգնում իրենց դասակի կենտրոնի դիմաց, դասակի ճակատի երկայնութեան կէս հեռաւորութեամբ. իսկ երբ որ փակւում է, նրանք կրկին կանգնում են շարքի մէջ։

ՎԱՇՏԻ ՇԱՐԺՈՒՄՆԵՐԸ ԵՒ ՈՒՂՂՈՒԹԵԱՆ ՓՈԽՈՒՄՆ

168. Վաշտի երկայնած շարքի եւ զօրասիւների շարժումները կատարւում են տողանի (տես յօդւած 68 և 70) և դասակի (յօդւած 15, 106 և 107) վարժութեանց մէջ յիշւած կանոններով և հրամաններով։

169 Վաշտի երկայնած շարքի ուղղութեան փոխումը կատարւում է դէպի թևի կողմը շարժւելով կամ ճակատի դարձումով դէպի ցոյց տւած առարկան, ինչպէս որոշւած է տողանի (յօդւած 71 ա. և բ. կէտերի) դասակի (յօդւած 95) համար։

170. Դասակասիւնը կարող է ուղղութիւնը փոխել.

ա. Սիւնի ճակատը դարձնելով դէպի ցոյց տւած առարկան, որ կատարւում է հետևեալ հրամաններով։

1. Վա՛շտ, դէպի այս ինչ առարկան Ա՛Ջ (ՁԱ՛Խ)
2. ՀԱՒՍԱ՛Ր.

Առաջին հրամանով բոլոր զինուորները պէտք է դառնան ցոյց տուած ուղղութեամբ, երկրորդ հրամանով առաջաւոր դասակը հաւասարւում է դէպի դարձի կողմը (տես յօդւած 71, կէտ բ.) շարժման ժամանակ, բացի այդ, գնում է կիսաքայլ. մնացած դասակները, որքան հարկաւոր է, թեքւում են դէպի ձախ (աջ), որպէսզի լինեն առաջաւոր դասակի ուղիղ ետևում, ծոծորակի դիմաց, և բռնում են հարկաւոր հեռակայութիւնը։ Երբոր բոլոր դասակները բռնում են իրենց տեղերը, վաշտապետը հրաման է տալիս՝ ՁԳԱ՛ՍՏ եթէ դարձը կատարւել է տեղում—և ՅԱՌԱ՛Ջ, կամ կա՛նգ—Ա՛Ռ, եթէ վաշտը շարժման մէջ է։

բ. Դասակասիւնի շրջումով թեւի վրայ դէպի ձախ կամ աջ, որի համար վաշտապետը հրաման է տալիս.

1. Վա՛շտ, աջ թեւն (ձախ թեւն) առաջ.
2. Քայլո՛վ—ՄԱ՛ՐՇ (քայլելիս ՄԱ՛ՐՇ)։

Երկրորդ համանով առաջաւոր դասակը շրջ-

ւում է տողանի և դասակի համար սահմանւած կանոններով (տես յօդւած 71 կէտ գ. և 95)։ Իսկ միւսները կիպ մօտենում են առջևինին և հետևում նրան կիսադարձ դէպի աջ (ձախ), ուշադիր լինելով, որ ծոծորակի դիմաց լինեն։

Երբոր առաջաւոր դասակը շրջւում է որքան հարկաւոր է, վաշտապետը հրաման է տալիս՝ (երկարաձիգ) ՅԱՌԱ՛Ջ.

Այս հրամանով առաջաւոր դասակը գնում է կիսաքայլ, մնացածները հետզհետէ շրջւելով, բռնում են հարկաւոր հեռակայութիւնները ու հաւասարւում ծոծորակին նայելով, և շարժւում են առաջաւորի ետևից։

Երբ բոլոր դասակները մէկմէկու վերաբերմամբ բռնում են պէտք եղած դրութիւնը, վաշտապետը հրաման է տալիս՝

3. ՅԱՌԱ՛Ջ կամ կա՛նգ—Ա՛Ռ։

171. Ջոկասիւնի ուղղութեան փոխումը կատարւում է տեղից առաջ շարժւելով կամ քայլելիս ջոկերի յաջորդաբար շրջւելով, դասակի ջոկասիւնի համար սահմանւած կանոնների և հրամանների համեմատ (տես յօդւած 108)։

172. Դասակաւոր զատաշարի շարժումը և ուղղութեան փոխումը կատարւում է վաշտապետի այս նախապատրաստական հրամաններով, (պատուէրներով, նշաններով). դասակնե՛ր յառա՛ջ (եռ, աջ դարձ, ձախ դարձ, կես աջ դարձ, կես ձախ դարձ, դէպի աջ, կամ դէպի ձախ, դէպի այս ինչ առարկան և այլն).

Այդ ժամանակ վաշտապետը նշանակում է ուղղապահ դասակ (ըստ այս ինչ դասակի) և ուղղութիւն կամ տեղական առարկաներ, դէպի ուր պիտի անցնեն դասակները։

Այս հրամաններով դասակապետները ինքնուրոյն կերպով կատարում են, ինչ որ ասուած է դասակի վարժութեան մէջ, յարմարեցնելով իրենց դասակների շարժումները ուղղապահ դասակին (վերջնիս ցոյց տուած ուղղութեանը) և տեղափոխութեան շարքերն ու եղանակները (քայլով, վազով) գործադրելով պարագայի համեմատ իրենց հայեցողութեամբ։

ՁՕՐԱՍԻՒՆԵՐ ԿԱԶՄԵԼԸ ԵՐԿԱՅՆԱԾ ՇԱՐՔԻՑ ԵՒ ՁՈՒԳԱՇԱՐԻՑ.

173. Սիւներ կազմելը կատարւում է տեղում,

յառաջ շարժւելով և քայլելիս, քայլով կամ վազով։

174. Տեղում դասակասիւն կազմելու համար վաշտապետը հրաման է տալիս.

1. Վա՛շտ, աջից (ձախից) դասակասիւն.

2. Քայլո՛վ (վազով)—ՄԱՐՇ.

Քայլով շարումի ժամանակ, ՄԱՐՇ հրամամանով, դասակները, բացի աջաթևեանից (ձախաթևեանից), դառնում են աջ (ձախ) և երրորդ նւագին ամենակարճ ճանապարհով գնում են այն դասակի ետև, որի համեմատ կատարւում է շարումը. տեղ հասնելուց յետոյ իւրաքանչիւր դասակապետ հրաման է տալիս. դասակ, կա՛նգ—Ա՛Ռ. կանգնելուց յետոյ զինւորները իրանք-իրանց (մտքում հաշւելով երեք, չորս) դառնում են ձախ (աջ)։ Վազով կատարելն նոյնն է, միայն՝ զինւորները կանգ են առնում առանց դասակապետների հրամաններին։

175. Դասակասիւն կազմելը յառաջ շարժւելով և քայլելիս՝ կատարւում է վաշտապետի հետևեալ հրամանով.

1. Վա՛շտ, աջից (ձախից) դասակ առ դասակ.

2. Քայլով ՄԱՐՇ (քայլելիս ՄԱՐՇ)։

Երկրորդ հրամանով աջաթևեան (ձախաթևեան) դասակը սկսում է (շարունակում է) շարժումը կիսաքայլ. իսկ մնացած դասակները իրանք դառնում են կէս աջ (կէս ձախ) և դարձից յետոյ տեղում երկու քայլ անելով՝ երրորդ քայլին գնում են առաջաւոր դասակի ետևից։ Հետզհետէ քանի դասակները առջևի դասակի ետևն են անցնում, նրանց պետերը հրաման են տալիս՝ կէս ձախ (կէս աջ) ԴԱՐՁ. առջևի դասակի դարձումի ժամանակ ետևից գնացողները կրկին երկու քայլ են անում տեղում։ Երբ իւրաքանչիւր դասակ մօտենում է առջևինին սահմանւած հեռակայութեան վրայ, (իր դասակապետի ԿԻՍԱՔԱՅԼ հրամանով) անցնում է կիսաքայլի։ Երբ բոլոր դասակները բռնում են սահմանւած հեռակայութիւնը, վաշտապետը հրաման է տալիս՝

3. ՅԱՌԱՋ կամ կա՛նգ—ԱՌ.

176. Երկայնած շարքից ջոկասիւն կազմելը կատարւում է ուղղութիւնը 1/4 շրջանի չափ փոխելով (տես յօդւած 100)։

Նոյն զօրասիւնը կազմւում է զուգաշարից այնպէս, ինչպէս ցոյց է տրւած դասակի վարժութեան մէջ (տես յօդ. 101)։

177. Զուգաշարից դասակասիւն կազմելու համար դասակապետը հրաման է տալիս.

1. Երկեակ կա՛գ—ՄԻՐ, (եթէ քառեակ է կազմած).

2. Ձախ (աջ) դասակասիւն.

3. Քայլո՛վ (վազով) ՄԱՐՇ, (քայլելիս—ՄԱՐՇ)։

Տեղում սիւն կազմելու ժամանակ դասակները վերջին հրամանով շարւում են, ինչպէս ասւած է տողանի (տես յօդւած 71 կէտ. ա) և դասակի (տես յօդւած 104) համար. Բայց բոլոր դասակների երկեակները, բացի առաջաւոր երկեակից, շարւելու հետ միաժամանակ՝ լիաքայլ մօտենում են (քայլով կամ վազով) առջևի կանգնած դասակից սահմանւած հեռակայութեան վրայ ու կանգ են առնում առանց որևէ հրաման։

Այս սիւնը քայլելիս կազմելու ժամանակ՝ առաջաւոր երկեակը վաշտապետի վերջին հրամանով, իսկ միւսները հետզհետէ քանի շարւում

և մօտենում են սահմանուած հեռակայութեան վրայ, քայլում են տեղում, մինչև դասակապետի ՅԱՌԱՋ կամ կա՛նգ—Ա՛Ռ հրամանը։

ՍԻՒՆԵՐԻ ԿԱԶՄԱՓՈԽՈՒԹԻՒՆԸ.

178. Դասակասիւնից ջոկասիւն կազմելը կատարւում է յառաջ շարժւելով և քայլելիս, յաջորդաբար մէկ դասակ միւսի ետևից շարւելով, վաշտապետի հետևեալ հրամանով.

1. Վա՛շտ, աջից (ձախից) ջոկ առ ջոկ.
2. Քայլո՛վ—ՄԱ՛ՐՇ, (քայլելիս ՄԱ՛ՐՇ)։

Այս հրամաններով առաջաւոր դասակն անմիջապէս կատարւում է այն, ինչ որ դասակի վարժութեան մէջ ասւած է (տես յօդւած 99), իսկ մնացածները քայլում են տեղում և, իրենց դասակապետների ՄԱ՛ՐՇ հրամանով, սկսում են ջոկ առ ջոկ անցնել առաջ, հետզհետէ երբ իրենց համար տեղ է բացւում։

179. Դասակասիւն կազմած վաշտը զուգաշարով յառաջ շարժելու համար դասակապետը հրաման է տալիս.

1. Վա՛շտ, ա՛ջ—ԴԱ՛ՐՁ.

2. Քառեակ կա՛գ—ՄԻ՛Ր.
3. Դասակնե՛ր, աջ (ձախ) թեւն առաջ,
4. Քայլո՛վ—ՄԱ՛ՐՇ, (քայլելիս ՄԱ՛ՐՇ)։

Վերջին հրամանով առաջաւոր դասակը սկսում է շարժումը. մնացածները քայլում են տեղում երբոր առաջաւոր երկեակը (քառեակը) շրջւում է որքան հարկաւոր է, դասակապետը հրաման է տալիս. ՅԱՌԱ՛Ջ, որով առաջաւոր դասակը ձգւում է ուղղակի ուղղութեամբ։

Մնացած դասակները շրջւելով՝ իրար ետև են անցնում, հետզհետէ իրենց համար տեղ՝ բացւելուց յետոյ, իրենց դասակապետների ՅԱՌԱ՛Ջ հրամանով, և ձգւում են առաջաւորի ետևից։

Ջոկասիւն կազմած վաշտը զուգաշարով առաջ շարժելը կատարւում է դասակի համար ցոյց տրւած կանոնների համեմատ (տես յօդւած 102)։

180. Ջոկասիւնից դասակասիւն կազմելու համար դասակապետը հրաման է տալիս.

1. Վա՛շտ, ձախ (աջ) դասակասիւն.
2. Քայլո՛վ—ՄԱ՛ՐՇ, (քայլելիս ՄԱ՛ՐՇ)։

Այս հրամանով բոլոր դասակները շարւում են ձախ (աջ), ինչպէս ասւած է դասակի վար-

ժութեան մէջ (տես յօդուած 103). բայց դրա հետ միասին դասակների առաջին (վերջին) ջոկերը, բացի առաջաւորից, չսպասելով միւսների մօտենալուն, հասնում են լիաքայլ առջևի կանգնած (գնացողի) դասակից սահմանուած հեռակայութեան վրայ, ապա կանգ են առնում (քայլում են տեղում) իրենց պետերի կա՛նգ—Ա՛Ռ (տեղում) հրամանով։ Նոյնը յաջորդաբար կատարում են նրանց կողքին շարւող ջոկերը։

Քայլելիս, երբ շարափոխութիւնը վերջանում է, վաշտապետը հրաման է տալիս կանգ—Ա՛Ռ, կամ ՅԱՌԱ՛Ջ. Նոյն շարափոխութիւնը վազով կատարում է առանց դասակապետների հրամաններին. զինւորները իրանք վազում են, որքան հնարաւոր է շտապ, բռնում են դասակասիւնի մէջ իրանց տեղերը։ Քայլելիս առաջաւոր ջոկը շարունակում է շարժումը լիաքայլ։

ՍԻՒՆԵՐԻ ԵՐԿԱՅՆՈՒՄԸ.

181. Սիւների երկայնումը տեղում և քայլելիս կատարւում է առաջաւոր մասի համեմատ քայլով և վազով։

182. Ջոկասիւնը երկայնւում է վաշտապետի հետևեալ հրամաններով.

1. Վա՛շտ, ձախ (աջ) շարւի՛ր.

2. Քայլո՛վ (վազով) ՄԱ՛ՐՇ (քայլելիս-ՄԱ՛ՐՇ)։

Կատարւում է դասակի երկայնման համար 103-րդ յօդուածում ցոյց տրւածի նման։

183. Տեղում կանգնած դասակասիւնը երկայնելու համար վաշտապետը հրաման է տալիս.

1. Վա՛շտ, ձախ (աջ) շարւի՛ր.

2. Քայլո՛վ (վազով) ՄԱ՛ՐՇ.

Քայլով կատարելու ժամանակ երկրորդ հրամանով, դասակները, բացի առաջաւորից, դառնում են ձախ (աջ) և սկսում շարժումը։

Երբ այս դասակները հետզհետէ դուրս են գալիս երկայնած շարքի մէջ իրենց տեղերի դիմաց, նրանց պետերը հրաման են տալիս. ա՛ջ—ԴԱ՛ՐՁ (ձա՛խ—ԴԱ՛ՐՁ), և յետոյ՝ դասակ կա՛նգ—Ա՛Ռ։

Ծանօթութիւն։ Այս հրամանները իր ժամանակին տալու համար՝ շարւող դասակների պետերը վաշտապետի երկրորդ հրամանով գնում են, կանգնում

այնտեղ, ուր պիտի կանգնի իրենց դասակի ներսի թևը, կանգ—Ա՛Ռ հրամանով նրանք կանգնում են իրենց համար երկայնած շարքում որոշած տեղերում։

Վազով դասակները առանց դասակապետների հրամաններին երկայնումի ժամանակ վազում, շարւում են առաջաւորի կողքին։

184. Քայլելիս դասակասիւնը երկայնւում է վազով. իսկ առաջաւոր մասը կանգնեցնելով երկայնումը կատարւում է քայլով և վազով.

Առաջին դէպքում վաշտապետը հրաման է տալիս.

1. Վա՛շտ, ձախ (աջ) շարւի՛ր.
2. վազո՛վ—ՄԱ՛ՐՇ.

Երկրորդ հրամանով առաջաւոր դասակը շարունակում է շարժումը քայլով, իսկ մնացածները վազում, շարւում են նրա մօտ առանց հրամանի։

Երկրորդ դէպքում վաշտապետը հրաման է տալիս.

1. Ըստ առաջաւոր դասակի, Վա՛շտ, ձախ (աջ) շարւի՛ր
ՄԱ՛ՐՇ (վազով—ՄԱ՛ՐՇ)։

Երկրորդ հրամանով առաջաւոր դասակի պետը կանգնեցնում է իր դասակը, իսկ միւոները քայլով (վազով) շարւում են նրա կողքին, նախորդ յօդւածի մէջ յիշւած կանոնների համեմատ։

185 Զուգաշարով դարձած վաշտի երկայնումը դէպի այն կողմը ուր ինքը վաշտը դարձած է, կատարւում է դասակի համար ցոյց տւածների համեմատ (տես յօդւած. 105)։

ՎԱՇՏԻ ԴԱՍԱԿԱՒՈՐ ԶԱՏԱՇԱՐ ԿԱԶՄԵԼԸ ԵՒ ՆՐԱ ՀԱՒԱՔԸ.

186. Վաշտը դասակաւոր զատաշարի կարող է վերածւել ամեն տեսակ շարքից, տեղում և քայլելիս։

187. Վաշտը դասակաւոր զատաշարի վերածելու համար, վաշտապետը ցոյց է տալիս կատարւելիք գործողութիւնների նպատակը, ուղղութիւնը, դասակների տեղաւորումը իրար նկատմամբ, հեռակայութիւնները և միջանցները ու եթէ հարկաւոր է նշանակում է ուղղապահ դասակ, ապա հրաման է տալիս. դասակաւոր-ԶԱՏԱՇԱՐ (եթէ պէտք է ՎԱԶՈ՛Վ)։

Այս հրամանով դասակապեռները ինքնուրույն կերպով գաւուժ, առնուժ են իրենց դասակները վաշտապետի ցուցումների համաձայն և կպմուժ նրանցից այնպիսի շարք, որ ամեն էկի համար ամենից յարմարը կլինի՝ պարագան ի նկատի ունենալով։

Ծանօթութիւն. Այս հրամանով վերակաո և մեծ պաշտօնատարները, որոնք մինչև 165-րդ յօդուածի վերջաւժ, դուրս են գալիս, գնաւժ վաշտապետի մօտ։

188. Եթէ վաշտապետը ցոյց չէ տուել, թէ դասակները երար նկատմամբ ինչ դրութիւն պիտի ունենան, այն ժամանակ դասակատար ՁԱՏՍԵՇԱՐ հրամանով առաջաւոր (պռաքենան) դասակը դառնաւժ է կէս աջ և հեռանաւժ 40 քայլ, հետևեալը գնաւժ է կէս ձախ և հեռանաւժ 40 քայլ, ետևցածները հետևաւժ են 30 քայլ աջ և ձախ (տես յօդուած 161)

189. Վաշտը դասակաւոր գառաշարից հաւաքելու համար, վաշտապետը հրամայ է տալ՝ ըստ այս ինչ դասակի սիւն—ԿԱՋՄԻՐ. կամ պաուէը է տալիս, ցոյց տալով նպատակն ու հաւաքման տեղը, կամ վերջապէս կանգնեցնում է ուղղացոյցին և նշան (յօդ, 14) կամ փողադր տալիս՝ „հաւաք զօրաւիսնի համար“։

Բոլոր դէպքերում էլ դասակապետները ամենակարճ ճանապարհով գնում են իրենց դասակները հաւաքի տեղը և դասակասիւն կազմում։ Աբած հաւաքի համար՝ վաշտապետը կանգնեցնում է ուղղացոյցին (տես յօդուած 148), փողադր տալիս՝ «հաւաք դասակասիւնի համար վազով»։ Այս փողադրներով բոլոր գինուորները ամենակարճ ճանապարհով վազում են դէպի ուղղացոյցը և իրենք դասակասիւն կազմում։

ՀՐԱՁԳՈՒԹԻՒՆ.

190. Վաշտի հրաձգութիւնը երկայնած շարքից կատարւում է. ա. միակ շարքից միայն հազարկով, ամբողջ վաշտով. կանգնած կամ ծնկի. բ. դաց շարքից՝ ինչպէս հետազարկով, ամբողջ վաշտով կամ դասակներով, նոյնպէս և մեռազարկով՝ պառկած, ծնկի կամ կանգնած։

191. Հրաձգութիւնը ամբողջ վաշտով, ինչպէս հետազարկով նոյնպէս և մեռազարկով, կատարւում է և դադարում, ինչպէս օրդուած է դա-

սակի համար (յօդւած 110) միայն հետևեալ փոփոխութիւններով.

ա. Կրակի հրամանով՝ վաշտապետն ու դասակապետներն անցնում են վաշտի եռև և տեղեր ընտրում. առաջինը՝ այնտեղ, որտեղից աւելի լաւ լսելի կլինի իր հրամանը և յարմար գիտել կրակի հետևանքը, վերջինները՝ այնտեղ, որտեղից աւելի յարմար է հետևել իրենց դասակների զինւորների գործողութիւններին։

բ. Երկրորդ տողանի վրա դարձած, հրաձգութեան ժամանակ, վերական և նրա կողքին շարւած պաշտօնատարները, կրակի հրամանով, անցնում են վաշտի եռև դասակների մէջ եղած մօտիկ միջանցներով և կանգնում 2 քայլի վրայ այդ միջանցի եռև նոյն կարգով, ինչ կարգով առաջ կանգնած էին։

192. Բաց շարքից դասակներով կրակ բանալու համար, վաշտապետը ցոյց է տալիս նպատակը (դասակների համար ընդհանուր կամ զանազան) և կրակի տեսակը (եթէ պէտքէ), ապա հրամանէ տալիս. դասակնե՛ր, ԿՐԱԿ։ Այս հրամանով դասակները կրակ են բանում դասակի

վարժութեան կանոններով (տես յօդւած 109 և 110)։

Դասակներով հրաձգութիւնը դադարեցնելու համար՝ վաշտապետը պատւէր է տալիս (կամ սուլում է) դասակապետները ՀՐԱՀԱՆ հրամանն են տալիս իրենց դասակներին և սպասում յետագայ ցուցումներին։

193. Դասակաւոր զատաշարի հրաձգութիւնը կատարւում է նախորդ յօդւածում ցոյց տւած կանոններով։

Ամբողջ վաշտով, կամ նրա որևէ մասով կրակ բանալու համար, երբ վաշտը դասակասիւն է կազմած, պէտքէ երկայնել վաշտը, կամ համապատասխան պատւէր տալ։

ԳԼՈՒԽ Բ.

ՎԱՇՏԻ ՄԱՐՏԱԿԱՐԳԸ

Մարտակարգի կազմը և պաշտօնատարների տեղերը.

194. Վաշտի մարտակարգը կազմում է. շրղթայի ցրած և օժանդակի համար թողած դասակներից։

Շրջապատում կարող են լինել և բոլոր դասակները։

Վաշտի մարտակարգի համար նշանակված տեղը կոչվում է վաշտային մարտավայր։

195. Շրջապի մեջ գտնվող դասակները, կապվելով դասակային շրջապահներ, տեղավորվում են այնպես, որ իրար հետ կապ պահեն ճակատի գծով, դասակի վարժության մեջ ցույց տված կանոնների համեմատ (տես յոդ. 111-113)։

196. Օժանդակի տեղը շրջապի ուղիղ հետևն է, կամ հեռու մի կողմի վրայ (եռաստիճան) նրանից այնքան հեռավորության վրայ, որ մի կողմից միշտ կարողանալ ժամանակին շրջապին օգնության հասնել, միևս կողմից՝ թշնամու կրակից անհրաժեշտ հարուստ չկրի ու նրանից անհնարին ծածկ։

Օժանդակի չափը լինում է փոքր, բայց, կամ դասակավոր գումարտակ։

Օժանդակի մեջ մի քանի դասակներ միասին տեղավորված ժամանակ դրանց հրամանատարն է դասակապետներից ավագը։

Ծանոթություն, 1. Վաշտին տրված գնդացիները նրանց գործադրելու տեղն ու ժամանակը որոշելուց առաջ, գնում են վաշտի օժանդակի մոտ, կամ որտեղ ցույց կտրվի, և հրամաններ համար շրջապի մեջ են մտնում վաշտապետի տրամադրով։

Մարտի ժամանակ թշնամու գրծօն կրակից տարածության վրայ, գնդացիրները պետք է լավ պատսպարված լինեն թշնամու աչքից ու կրակից. այսպիսի պայմաններում նրանց տեղափոխությունը պիտի կատարել առանց ձիերի։

Ծանոթություն, 2. Վաշտին տրված վիմփշտի հրկանիները գտնում են օժանդակի մոտ, սակայն մարտն սկսելիս վաշտապետը դրանց պիտի առաջ տանի, որքան կարելի է շրջապին մոտ։

197. Մարտակարգի թևերն ու թիկունքը, երբ հարևան զորամասերով պաշտպանված չեն, վաշտապետի կարգադրությամբ շրջապից և օժանդակից ուղարկված դիտքերի հսկողության տակ պիտի գտնվեն. իսկ եթե դիտքերի մասին կարգադրություն չի եղել, այն ժամանակ շրջապը թևային դասակների և օժանդակի պետքը պետք է ինքնուրույն կերպով դիտքեր ուղարկին։

198. Վաշտի մարտակարգը աջ և ձախ կողմ-

երում գործող և թիկունքում գործող զօրամասերի հետ կապ պէտք է պահպանի պահակէտերով դէտքերով կամ այլ միջոցներով և եղանակներով (ազդանշաններով, հեռախօսով)։

199. Վաշտի մարտակարգի ճակատի երկարութիւնը, եթէ նախապէս պատւէրով որոշուած չէ, պէտք է յարմարւի վաշտին տրուած խնդրին, տեղանքի բնոյթին և վաշտի զինւորների թւին։ Վաշտի պատերազմական կազմի ճակատի միջին տարածութիւնը, չհաշուած դէտքերին, կարելի է հաշւել 250-300 քայլ.

200. Վաշտապետի տեղը մարտակարգի մէջ այնտեղ է, որտեղից աւելի յարմար է ղեկավարել ամբողջ վաշտը և դիտել թշնամուն. իսկ շղթայում երկու և աւելի դասակ եղած ժամանակ անմիջապէս ղեկավարել նրանց գործողութիւնները։

Վաշտապետի մօտ, նրա կարգադրութիւնները և զեկուցումները հաղորդելու (տես յօդ. 198) մարտադաշտը դիտելու համար, գտնւում են ուղղացոյցը, նշանարարը (փողարը) և մթե-

րապահը և, եթէ կարիք լինի, նոյնպէս և դասակներից անհրաժեշտ թւով զինւորներ։

Օժանդակի պետը գտնւում է այնտեղ, որտեղից աւելի յարմար է ղեկավարել օժանդակը, կապ պահպանելով վաշտապետի հետ. դիտելով շղթայի գործողութիւններին և, որքան հնար է, նաև թշնամուն։

Դասակապետների և ջոկապետների տեղերը ցոյց են տրուած դասակի վարժութեան մէջ. (տես յօդուած 113)։

Վերական, եթէ յատուկ պատւէր չի ստացել, գտնւում է օժանդակի մօտ և հսկում է վաշտի թիկունքի կարգ ու կանոնին, ժամանակին փամփուշտներ հասցնելուն և վիրաւորներին դուրս բերելուն։

Թմբակահարները (փողարները) գտնւում են օժանդակի կամ վաշտապետի մօտ, նրա պատւէրով։

ՄԱՐՏԱԿԱՐԳԻ ՂԵԿԱՎԱՐՈՒԹԻՒՆԸ,

201. Վաշտապետը ընդհանուր պաբտականութիւնների նկատմամբ առաջնորդւում է Կանոնագրքիս 116-րդ յօդուածով։

Նա դատակնիքը բաժանում է շրջայի և ծանոթագիր, նշանակում է շրջայատասխանը, վերվարում գրանց հրաժարությիւնը, շարժումներն ու գործողությիւնները, դատախազնների ինքնությունը ստուգում կանոնագրքով որոշված առհասարակներում (յօդած 117). հետևում է շրջայի կրակի գործողությանը և շրջան ուժեղացնում է ծանոթագիր մասերում։

Եարժման ժամանակ վաշտապետը ցոյց է տալիս ուղղությիւնը կամ դիրքը, ուր դատակները պէտք տեղափոխուին, նշանակում է ուղղորդան դատակ և վերահսկում է մարտակարգի յարմարեցումն տեղանքին։ Նա իր շրջայում կազմակերպում է մարտադաշտի անպաշտպան թևերի պահպանությիւն և կապ է հաստատում իր անմիջական պետի և հարևան զօրամասերի միջև (տես յօդած 128)։

202. Ծանոթագիր պետը, վաշտապետի ընդհանուր ցուցումների համեմատ, ծանոթագիր համար տեղ և շարք է ընտրում, տեղաբաժնում ու տեղափոխում է նրանց, յարմարեցրած ստուգումներին և շրջայի գործողությանց (տես յօդած 196). նա վաշտապետի պատերով

միջոց՝ մասերը է ուղարկում շրջան ուժեղացնելու և նրան օգնելու համար, և պարտական է մշտական կապ պահպանել նրա հետ. դիտողությիւն է կատարվում իր գնդերազածքի թևերում և թիկունքում, եթէ սրանք պաշտպանած չեն հարևան զօրամասերով, կամ այդ նպատակով ուղարկած դէտքերով (տես յօդած 197)։ Ծանոթագիր դեկավարելու համար, նրա պետը առաջնորդում է քաց և փակ շարքերի համար ցոյց տրած կանոններով։

203 Դատակապետները, ջոկապետները և օղակների ասագները շրջայի մէջ դեկավարում են դատակի վարժությանն մէջ յիշած կանոններով (տես յօդած 116-119)։

ՎԱՇՏԻ ՎԵՐԱԾՈՒՄԸ ՄԱՐՏԱԿԱՐԳԻ.

204. Վաշտը կարող է ամեն տեսակ շարքից, նոյնիսկ երթասիներից, վերածել մարտակարգի։

Այս վերածումը, որքան հնարաւոր է, կատարում է թշնամուց ծածուկ և նրա հողմը ուղարկած վերջին դէտերի պաշտպանությանն տակ։

205. Տեղում կանգնած վաշտը մարտակարգի վերածելու համար, վաշտապետը նախապէս հետախուզութիւն է կատարում ու միջոցներ ձեռք առնում թշնամուն դիտելու, թեւերը պահպանելու և կապի համար. ապա վաշտի բոլոր զինւորներին յայտնում է. ա. Ինչ որ յայտնի է թշնամու և իր հարևան զօրամասերի մասին. բ. ինչ խնդիր որ առաջադրուած է վաշտին կատարելու և թէ ինչպէս է ենթադրուում այն ի կատար ածել. գ. մարտակարգի ընդհանուր ուղղութիւնը. դ. դասակները շղթայի և օժանդակի բաժանել, նրանց շղթայամասերը կամ բռնելու տեղերը։ ե. փամփշտի երկանիւների մօտաւոր տեղերը և վիրակապութեան վայրը։

Երկու կամ աւելի դասակներ շղթայի ցրելու ժամանակ՝ նրանցից մէկը նշանակւում է ուղղապահ։

Ծանօթութիւն 1. Եթէ ժամանակը կարճ է, վաշտապետը պէտք է յայտնի գոնէ գործողութեան նպատակի մասին և դասակները բաժանի շղթայի և և օժանդակի։ Մնացած ցուցումները նա յայտնում

է առաջին հնարաւոր դէպքում դասակապետների միջոցով։

Ծանօթութիւն. 2. Եթէ վաշտի մօտ գնդացիրներ կան, այն ժամանակ վաշտապետը տեղ է նշանակում, որտեղից նրանք պէտք է գործի ացնեն կամ որտեղ պիտի սպասէն հրաձգութեան կանչելու համար։ Առաջին դէպքում նա նրանց որոշ խնդիր է յանձնում. իսկ երբ հարկաւոր է, նշանակում է նրա համար և պաշտպան զօրամաս։

206. Դասակապետները ջոկապետների օգնութեամբ ստուգում են, թէ արդեօք զինւորները ճի՞շտ են հասկացել վաշտապետի յայտնածները (տես յօդուած 205), որից յետոյ վաշտապետը հրաման է տալիս.

Այս ինչ դասակները (կամ վաշտ) ՇՂԹԱՅ. (եթէ պէտք է վազո՛վ)։

Այս հրամանով, շղթայ կազմելու համար նշանակւած դասակները բաժանւում, գնում են (քայլով կամ վազով) իրենց տեղամասերը, իրենց պետերի հրամաններով և ցրւում են, ինչպէս ասուած է դասակի վարժութեան մէջ (տես յօդուած 120-122), յարմարւելով ուղղապահ դասակին, որին վաշտապետը ցուցումներ է տալիս։

Օժանդակի պետը իր մասը տանում է նշանակած տեղը և յարմարեցնում է տեղանքին։

Այն պաշտօնատարները, որոնց համար 200-րդ յօդւածում որոշւած է լինել վաշտապետի և օժանդակի մօտ, նոյնպէս և պատգարակիրները և փամփշտակիր զինւորները, եթէ վաշտապետը նրանց դուրս է կանչել, անմիջապէս ցրւում են իրենց համար նշանակւած տեղերը։

Վաշտի մօտ եղած գնդացիրները և փամփշտի երկանիւները բռնում են վաշտապետի նշանակած տեղերը (ծանօթութիւն, յօդւած 196 րդի)։

207. Վաշտի վերածումը մարտակարգի, յառաջ շարժւելով կամ քայլելիս, կատարւում է նախորդ՝ յօդւածի կանոնների համեմատ. բայց յառաջխազացման ժամանակ օժանդակ նշանակւած դասակները, իսկ նահանջի ժամանակ շղթայի համար նշանակւած դասակները կանգ են առնում, կազմափոխութիւն կատարում (ցրւում) տեղում, (գծով). միւսները շարունակում են շարժումը և ցրւում են (կազմափոխւում են) քայլելիս։

Երբոր շղթայի և օժանդակի մէջ առաջ է

գալիս սահմանւած հեռակայութիւնը, կանգ առած դասակները շարունակում են շարժումը։

ՀՐԱՁԳՈՒԹԻՒՆ.

208. Շղթայի մէջ հրաձգութիւնը կատարւում է դասակներով. նրանցից իւրաքանչիւրի մէջ դասակի վարժութեան մէջ սահմանւած կանոններով և հրամաններով (տես յօդւած 113–126). կրակ բանալու համար վաշտապետը դասակապետներին տալիս է համապատասխան պատւէրներ, ցոյց տալով հրաձգութեան նպատակները (բոլոր դասակների համար ընդհանուր զանազան նպատակակէտեր) և կրակի տեսակը։

Կրակը դադարեցնելու համար՝ վաշտապետը սուլում է, որ կրկնում են դասակների և ջոկերի պետերը, կամ տալիս է համապատասխան պատւէրներ։

209. Դասակների (և ջոկերի) պետերը շղթայի մէջ պարտական են, չսպասելով յատուկ պատւէրների, իրենք-իրենց դադարեցնել կրակը, եթէ նպատակը, որը գնդակակոծւում է, թագնւել է, կամ իր դասակի (ջոկի) զինւորներին տեսանելի չէ, կամ երբ կրակը անկարգ է դառնում.

Եւ ընդհակառակը, իր նախաձեռնութեամբ փոխում է նպատակները և կրակ է բանում այն դէպքերում, երբ անյետաձգելի է, և եթէ վաշտապետը այդ չի արգելել։

210. Օժանդակը կրակ է բանում միայն վաշտապետի պատուէրով վաշտի վարժութեան ա. գլխի մէջ յիշուած կանոններով և հրամաններով յօդուած 190-193. բացի այս դէպքերից, երբ թշնամին յանկարծ երևում և վտանգ է սպառնում։

ՄԱՐՏԱԿԱՐԳԻ ՇԱՐԺՈՒՄՆԵՐԸ.

211. Մարտակարգի շարժումները կատարւում են վաշտապետի պատուէրներով, որոնցով նա որոշում է շարժման ընդհանուր նպատակը և իւրաքանչիւր դասակին (նոյնպէս և զընդացիրներին, եթէ կան վաշտի մօտ) տրուած մասնաւոր խնդիրները։

212. Շղթայի մէջ եղած դասակները շարժումները կատարում են դասակի վարժութեան մէջ սահմանուած կանոններով (տես յօդուած 127-134.), բայց փոխադարձ օգնութիւն հաց-

նելով իրար և կապ պահելով վաշտապետի և ուրիշ հարևան զօրամասերի հետ։

213. Օժանդակը, եթէ չի ստանում առանձին պատուէր, պէտք է օժանդակի պետի կարգադրութեան համաձայն իր շարժումները յարմարեցնի շղթայի շարժումներին (տես յօդուած 196 և 202)։

Նա կարող է տեղափոխւել մի թաքստոցից մի ուրիշ թաքստոց, քայլով, վազէվազ կամ սողալով, ամբողջ կազմով, կամ տողանով կամ շղթայի պէս՝ մաս-մաս և մէկ-մէկ։

214. Մարտակարգի ետ տեղափոխւելու ժամանակ, վաշտապետը թիկունքում դիրք է ընտրում և հրամայում է, որ օժանդակը կամ շղթայամասերից մէկը, նախապէս բռնեն այդ դիրքը։ Ետ նահանջելու պատուէրը պիտի տալ ոչ վաղ, քան առաջուց նահանջած մասի հրաձգութեան համար պատրաստ լինելը։

Շղթայամասերը, ետ նահանջելով պէտք է, որքան հնար է, շուտ թիկունքում բռնած դիրքի ճակատը բաց անեն, որպէսզի հնարաւորութիւն տան այնտեղից շուտ կրակ բանալու։

ՇՂԹԱՅԻ ՈՒԺԵՂԱՑՈՒՄԸ.

215. Շղթայի ուժեղացման մասին կարգադրութիւն կարող է անել միայն վաշտապետը, որը օժանդակից մի մաս է նշանակում և ցոյց է տալիս նրա պետին գործողութեանց նպատակը և պահանջած ուժեղացման ուղղութիւնը։

216. Շղթան օժանդակից ուժեղանում է երկայնացումով կամ խտացումով։ Առաջին դէպքում շղթան ուժեղացնող դասակը առանձին շղթայամաս է կազմում նախկին շղթայի թևերից մէկում, իսկ երկրորդ դէպքում նա ցրուում է շղթայի միջանցների մէջ։

217. Շղթան ուժեղացնելու համար նշանակուած դասակի պետը կամ իր դասակը իսկոյն ցրում է ցոյց տուած ուղղութեամբ, կամ նախապէս ծածուկ տեղափոխում է ցրելու համար յարմար մի տեղ։

218. Երբ որ շղթան խտացումով ուժեղացնելուց յետոյ՝ նրա մէջ զանազան զօրամասերի զինուորներն անխուսափելիօրէն իրար են խառնուում, այն ժամանակ շղթայի մէջ գտնուած դասակապետները և ջոկապետները, եթէ վաշ-

տապետը պատուէր տուած չլինի, իրենք իրենց հրամանատարութեան տակ են ընդունում այն զինուորներին, որոնք իրենց շղթայամասերն են մտել, իսկ եթէ շղթան ուժեղացնող զօրամասի հետ գալիս է և մի աւագ պետ, այն ժամանակ շղթայամասի պետը մտնում է նրա իշխանութեան տակ և խառնուած դասակների կարգաւորումը կատարւում է այս պետի պատուէրով։

Ծանօթութիւն. աւագութիւնը հաշւում է պաշտօնով, իսկ հաւասար պաշտօններ ունեցած դէպքում՝ աստիճանով։

Առաջին հնարաւոր դէպքում պէտք է խառնուած զինուորներին տեղաւորել իրենց դասակներում, ջոկերում և օղակներում։

ՄԱՐՏԱԿԱՐԳԻ ՈՒՂՂՈՒԹԵԱՆ ՓՈԽՈՒՄԸ.

219. Տեղում կամ շարժման ժամանակ մարտակարգի ուղղութիւնը փոքր անկիւնով փոխելու համար, վաշտապետը դասակներին համապատասխան պատուէր է տալիս ցոյց տալով գործողութեան նպատակը, նոր ուղղութիւնը և նշանակում է ուղղապահ դասակ։

Ուղղապահ դասակը վարւում է, ինչպէս դասակի վարժութեան մէջ է ցոյց տուած (տես

յօդւած 135 և 136). միւս դասակապետները շղթայի մէջ իրենց դասակները տեղափոխումեն նոր գծի վրայ, յարմարւելով ուղղապահ դասակին։

Օժանդակի պետը, եթէ յատուկ պատւէր չի ստացել, օժանդակը տեղափոխում է յարմարւելով շղթայի հետ (տես յօդւած 213) և այս մասին զեկուցում է վաշտապետին։

220. Երբ անհրաժեշտ է ուղղութիւնը բառական մաց անկիւնով փոխել, պէտք է օժանդակ մասից նոր շղթայ ցրել նոր օժանդակ կազմելով, եթէ պէտք է, ետ կանչւած առաջւայ շղթայի մասից։

ԳՐՈՀ ԵՒ ՍԻՒՆԱՄԱՐՏ.

221. Գրոհը և ուինամարտը վաշտի մարտակարգի մէջ կարող են կատարւել միայն շղթայով և նոյնիսկ շղթայի մի մասով, միայն օժանդակով կամ շղթայով օժանդակի հետ միասին։

222. Միայն շղթայով գրոհը կատարւում է դասակի վարժութեան մէջ 137-142-րդ յօդւածներում յիշւած ցուցումների համեմատ։ Օժանդակը հետևում է շղթային, որպէսզի միշտ

պատրաստ լինի նրան օգնելու։ Երբ հարկաւոր է թշնամու վրա գրոհ տալ շղթայի մի մասով, այն ժամանակ վաշտապետը այս մասին համապատասխան պատւէրներ է տալիս դասակապետներին։ Շղթայի մէջտեղում մնացած միւս դասակները գրոհին աջակցում են կրակով։

223. Երբոր օժանդակին պատւէր է տրւած մենակ առանց շղթայի մասնակցութեան գրոհի դիմել հակառակորդի վրայ, այն ժամանակ նա, որքան հնարաւոր է, մօտենում է թշնամուն իրեն ցոյց տւած ուղղութեամբ (տես յօդւած 213) և մօտ 50 քայլ հեռաւորութիւն, վրայ է վազում ուինամարտի։ Շղթան օժանդակի շարժմանը օգնում է կրակով, իսկ երբ այնտեղ հուռռա լուի կամ, աւելի շուտ վաշտապետի պատւէրով, նա նոյնպէս պէտք է գրոհի գնայ և անցնի ուինամարտի։

224. Օժանդակի հետ միասին շղթայի գրոհ տալու համար, վաշտապետը այս մասին նախազգուշացնում է դասակներին, ցոյց տալով գործողութեան նպատակը, առաջիկայ հարւածի ուղղութիւնը, և հրամայում է օժանդակին կիպ

մօտենալ շղթային (վազելով կամ սողալով)։

Այս կատարելուց յետոյ, նայած թշնամու հեռաւորութեանը, վաշտապետի պատւէրով, միաժամանակ թէ շղթան և թէ օժանդակը կամ տեղից սւինամարտի են դիմում (երբ տարածութիւնը մօտ 50 քայլ է, համաձայն յօդուած 139 ի), կամ միասին շարժւում են դէպի գրոհ, որը պիտի վերջանայ սւինամարտով (տես յօդուած 140-141)։

225. Երբ վաշտը գրոհի է դիմում, գնդացիրները շարունակում են գնդակակոծել թշնամուն, մինչև որ դասակները կխափանեն նրանց կրակը, դրանից յետոյ, եթէ առանձին պատւէր չեն սատանում, նրանք դուրս են գալիս իրենց դիրքերից և հետևում են վաշտին, որպէսզի, պատրաստ լինեն անյապաղ կրկին կրակ բանալու, երբ հնարաւորութիւն ստեղծուի։

226 Թշնամու դիրքը դրաւելով՝ վաշտապետը պատւէր է տալիս դասակապետներին (նոյնպէս և գնդացիր խմբի պետին) թշնամու դէմ նոր գործողութիւններ սկսել. (հետապնդել նրան սւիններով կամ կրակով, դիրք բռնել այնտեղ

ամրանալու և թշնամուն օգնութեան հասնող զօրամասերին դիմադրելու համար և այլն), կամ վաշտը հաւաքում է կարգի բերելու, և թշնամու դէմ ընդհանուր շարքով յետագայ գործողութիւնները սկսելու համար։

ՎԱՇՏԻ ՀԱՒԱՔԸ։

227. Վաշտի հաւաքը մարտակարգից՝ կատարւում է դասակաւոր զատաշատի հաւաքման ցուցումների համեմատ (տես յօդ. 189)։

ՄԱՍՆ Դ.

ԳՈՒՄԱՐՏԱԿԻ ՎԱՐԺՈՒԹԻՒՆ.

ԳԼՈՒԽ Ա.

ԳՈՒՄԱՐՏԱԿԻ ՇԱՐՔԵՐ.

ԳՈՒՄԱՐՏԱԿԻ ՀԱՄՐԱՆՔԸ.

228. Գումարտակի իւրաքանչիւր վաշտ համբուում է առանձին, ինչպէս ցոյց է տրուած վաշտի վարժութեան մէջ։

Գումարտակի բոլոր շարուածքների մէջ վաշտերը պահում են իրենց համարները՝ անկախ իրանց փոխադրած տեղաւորութիւնից։

229. Գումարտակի համարդը, փողերը (ուր սահմանուած է) ուղղացոյցը և ձիաւոր սուրհանդակները նշանակւում են գումարտակի յանձնաբարութիւնները և պատւէրները հաղորդելու համար։

Ուղղացոյցը, բացի այդ, ծառայում է գումարտակի և նոյնպէս գումարտակի հետքի տեղերը ցոյց տալու համար. վերջին դէպքում նա կանգնում է այնտեղ, ուր պիտի լինի գումարտակի ճակատի կենտրոնը, և երեսը դարձնում է այն կողմը, դէպի ուր ճակատը պիտի յառաջանայ (յօդ. 148)։

ԳՈՒՄԱՐՏԱԿԻ ՇԱՐՔԵՐԸ ԵՒ ՊԱՇՏՕՆԱՏԱՐՆԵՐԻ ՏԵՂԵՐԸ.

230 Գումարտակի շարքերը կազմւում են վաշտի շարքերի միացումից։ Նրանց վերաբերում են՝ ա. սիւներ — օժանդակիւ և երդմահիւ և բ. վաշտապետ գաւազան. բացի այդ դործածւում է և գումարտակի մարտակարգ։

Ա. ՍԻՒՆԵՐ

231. Գումարտակի օժանդակիւնի մէջ բոլոր վաշտերը ունենում են գասակասիւններ և տեղաւորւում են երկու գծի վրայ. երկու վաշտը կողք կողքի առաջին գծի վրայ, միւս երկուսը՝ երկրորդ գծի վրայ, առաջիններին ծոծրակից պէս։

Երթասիւնի մէջ մի վաշտ միւսի հետևից կազմւում է։

ՕԺԱՆԴԱԿԻ ՍԻՒՆ

(խաղաղ ժամանակի վաշտեր հաւասարաթիւ շարքերով)



232. Վաշտերի դասաւորումը սիւների մէջ կախւած է գումարտապետի հայեցողութիւնից. իսկ եթէ նա պատուէր չի տուել, վաշտերը կանգնում են համարների կարգով աջից դէպի ձախ և գլխից դէպի զօրասիւնի տուտը։

233. Մի գծի վրայ տեղաւորուած վաշտերի ներսի թևերի միջանցները — 3 քայլ է, մէկ մէկու ետև կանգնած վաշտերի միջև եղած հեռակայութիւնը — 10 քայլ։

234. Գնդացիր խումբը կանգնում է գումարտակի ետև 20 քայլի վրայ շարժման կարգով և այնպիսի շարքով, որ նրա ճակատն իր երկայնութեամբ աւելի չլինի գումարտակի սիւների ճակատից։

Փամփշտի երկանիւները կանգնում են գնդացիր խմբի ետև 10 քայլի վրայ. (իսկ եթէ այն չկայ, գումանտակի ետև) մի գծի վրայ, կամ սիւնով, 6 քայլ միջանցներով և երկանիւների մէջ 3 քայլ հեռակայութեամբ։

235. Գումարտապետը կանգնում է այնտեղ, որտեղից աւելի յարմար է գումարտակը ղեկավարել։

Նրա մօտ են գնում 229-րդ յօդուածում յիշած պաշտօնատարները, բայց գումարտակի ուղեցոյցից, որը եթէ գումարտակի մօտ կանչուած չէ, կանգնում է օժանդակների մէջ, մինչև մի քանի տասներ գծի վարտերի միջև, իսկ երթևեկի մէջ առաջատար վարտի առաջատար չակի ձախ թևում. բոլոր դէպքերում առաջին տողանի մէջ։

Նշումներ։ Երբոր օժանդակների մէջ վարտապետները կանգնում են վարտերի աջ թևերում, այն ժամանակ գումարտակի ուղեցոյցը երկրորդ տողանն է անցնում։

236. Վարտերի բոլոր պաշտօնատարները միևնոյն մէջ կանգնում են վարտի վարժութեան մէջ երանց համար որոշած տեղերում, բացի վարտապետներից, որոնք կանգնում են իրենց վարտերի կենտրոնի դիմաց 5 քայլի վրայ։ Եթէ վարտապետները ձիով են, այդ ժամանակ նրանք օժանդակների մէջ կանգնում են 3 քայլի վրայ ղեկի թևերի աջ կամ ձախ կողմում, իսկ երթևեկի մէջ իրենց վարտերի առաջատար դասակների աջ թևերի մօտ, դարձեալ 3 քայլի վրայ։

237. Գումարտապետի թմբկահարները (փողարները) դեկի գումարտակի աջ (ձախ) թևում հրամանով, թմբկաձողերները (փողաբերը) դուրս են գալիս և երկատող շարուում գումարտակի առաջին գծի վարտերի աջ (ձախ) թևից 4 քայլ հետու, հաւասարեցնելով առաջատար դասակների երկրորդ տողանի հետ։ Այդ ժամանակ գումարտակի թմբկահարը (փողարը), երանց ընդհանուր հրամանատարութիւնը առնձնելով, կանգնում է թմբկահարների (փողաբների) կենտրոնի դիմաց՝ մի քայլ հետու։

Նշումներ։ Եթէ շարքում գտնում են թէ թմբկահարներ և թէ փողարներ, այն ժամանակ փողարները կանգնում են թմբկահարներից աջ, իրենց աջ թևում կանգնում է գումարտակի փողարը։ Գումարտակի թմբկահարը կանգնում է, ինչպես ցոյց է տրուած վերևում։

238. Գումարտապետի թմբկահարները (փողարները) գումարտակի առաջ հրամանով, երանք շարուում են (յօդուած 237) գումարտակի կենտրոնի առջև մի դասակի հեռաւորութեամբ։ Բացի այդ, եթէ գումարտակի պիտնի ճակատը

թմբկահարներինի (փողարներինի) ճակատից աւելի նեղ է, այն ժամանակ նրանք քառեակներ են կազմում և փակւում։

Բ. ՎԱՇՏԱՒՈՐ ԶԱՏԱՇԱՐ.

239. Վաշտաւոր զատաշարի մէջ վաշտերը զետեղւում են մէկ կամ երկու գծով կամ ետաստիճան, պատւէրով որոշւած միջանցներով և հեռակայութիւններով։ Իւրաքանչիւր վաշտ իր վաշտապետի հայեցողութեամբ, կարող է կանգնել այնպիսի շարքով, որը աւելի կյարմարւի պարագային։

240. Եթէ գումարտապետը չի ցոյց տւել վաշտերի դասաւորման ձևը, այն ժամանակ վաշտերը տեղաւորւում են երկու գծի վրայ մօտ 100 քայլ միջանցներով և հեռակայութիւններով, առաջին և երկրորդ վաշտերը՝ առաջին, երրորդ և չորրորդը՝ երկրորդ գծի վրայ։

241. Գնդացիր խումբը, իր փամփշտի երկանիւնների հետ, գումարտապետի ցուցումով գտնւում է վաշտերից մէկի մօտ։ Իսկ եթէ նրա տեղը չի նշանակւած, այն ժամանակ գրա-

նլում է երկրորդ գծի աջաթևեան վաշտի մօտ։

Փամփշտի երկանիւները տեղաւորւում են գումարտապետի ցուցումով:

242. Գումարտակի բոլոր պաշտօնատարները, որ յիշւած են 229-րդ յօդւածում, վաշտաւոր զատաշարի ժամանակ գտնւում են գումարտապետի մօտ կամ որտեղ նա ցոյց կտայ։

Վաշտի պաշտօնատարները ինչպէս ցոյց է տւած վարժութեան մէջ։

ԳՈՒՄԱՐՏԱԿԻ ՂԵԿԱՎԱՐՈՒԹԻՒՆԸ.

243. Գումարտակը ղեկավարելու համար գումարտապետը գործադրում է պատւէրներ և հրամաններ։ Երբոր գումարտակը օժանդասիւնով է կանգնած, այն ժամանակ նրա բոլոր միասնական գործողութիւնները կատարւում են գումարտապետի անմիջական հրամանով։ Վաշտաւոր զատաշարի և երթասիւնի ժամանակ կատարողական հրամանները տալիս են վաշտապետները։

ԳՈՒՄԱՐՏԱԿԻ ՇԱՐԺՈՒՄԸ ԵՒ ՈՒՂՂՈՒԹԵԱՆ ՓՈԽՈՒՄԸ.

244. Գումարտակի սիւների շարժումները

կատարւում են վաշտի դասակասիւնի համար ցոյց տւած կանոններով և հրամաններով. միայն պահելով նախորդ յօդւածում ասածները։ Երթասիւնի ժամանակ ընդհանուր ոտքը գումարտակի բոլոր վաշտերի համար չի պահանջւում։

245. Հաւասարումը նշանակւում է հրամանով. իսկ եթէ այդ նշանակւած չլինի, այն ժամանակ գումարտակի օժանդասիւնը հաւսարւում է դէպի կենտրոնը, իսկ երթասիւնը—դէպի աջ թևի կողմը. բացի այդ՝ ետևից գնացով վաշտերը հաւսարւում էն առջևից գնացողների ծոծորակին նայելով։

246. Օժանդասիւնը կարող է իր ուղղութիւնը փոխել տեղում և շարժման ժամանակ վաշտի դասակասիւնի համար ցոյց տրւած եղանակներով, համապատասխան հրամաններով և նրա համար տրւած կանոնների համեմատ (յօդւած 170)։ Բացի այդ՝ մի գծով կանգնած վաշտերը վարւում են ինչպէս մի վաշտ։

247. Երթասիւնի ուղղութեան փոխումը կատարւում է վաշտերի յաջորդական շրջումով

(յօդւած 171 և 243)։

248. Վաշտաւոր զատաշարի մէջ գտնւած գումարտակի շարժումները և ուղղութեան փոխումը կատարւում է դասակաւոր զատաշարի համար ցոյց տւած կանոնների համեմատ (յօդւած 172)։

149. Բոլոր դէպքերում, գումարտակի շարժումների և ուղղութեան փոխումի ժամանակ, գնդացիր խումբը և վաշտերի փամփշտի երկանիւները առաջ են շարժւում իրենց տեղերը, (յօդւած 234 և 241), յարմարւելով գումարտակի շարժումներին։

ԳՈՒՄԱՐՏԱԿԻ ՍԻՒՆԵՐԻ ԿԱԶՄԱՓՈԽՈՒՄԸ.

250. Սիւների կազմափոխումը կատարւում է նախ՝ գումարտապետի տւած նախապատրաստական հրամաններով, պատւէրներով, որոնցով նա որոշում է վաշտերի տեղաւորման համար պահանջւած կարգը, և ապա՝ վաշտապետների անմիջական հրամաններով։

Այն վաշտապետները, որոնք պէտք է շարժում կատարեն, իրանք հրամանով որոշում են հրացանը կրելու ձևը։

251. Օժանդասիմը երթասիմի է փոխւում միայն յառաջ շարժւելով կամ քայլելիս, յաջորդաբար վաշտ վաշտի ետևից, որա համար գումարտակը ցոյց է տալիս նպատակը և ուղղութիւնը ու, եթէ հարկաւոր է, յայտարարում է վաշտերի դասաւորման համար պահանջւած կարգը, ապա հրաման է տալիս.

Գումարտակ, աջից (ձախից) ջոկ առ ջո՛կ այս ինչ վայտ, յառա՛ջ։

Այս հրամանով գումարտակի նշանակւած վաշտապետը չոկասիւն կազմելով՝ առնում է իր վաշտը ցոյց տւած ուղղութեամբ։ Միւս վաշտերը սպասում են (կանգ են առնում) գումարտակի ցոյց տւած հերթին, մինչև որ հետևեն իրանց համար տեղ բացւի. իսկ եթէ հերթ չի նշանակւած, այն ժամանակ համարների կարգով ձգւում են առաջաւոր վաշտի ետևից, իրենց պետերի հրամաններով։

252. Երթասիւնից օժանդասիւն կազմելը կատարւում է միայն առաջաւոր մասի համեմատ, տեղում կամ առաջաւոր մասը կանգնեցնելով։ Այսպիսի կազմափոխութեան համար գումարտակը ցոյց է տալիս նպատակը և պահանջւած ուղղութիւնը, ապա հրաման է տալիս.

Գումարտա՛կ, օժանդասիւն—ԿԱՋՄԻ՛Ր.

Այս հրամանով առաջաւոր վաշտի պետը նրան դասակասիւն է շարում (յօդւած 180) և կանգնեցնում է (եթէ գումարտակը շարժւում էր), ճակատը դարձրած ցոյց տւած ուղղութեամբ։ Միւս վաշտերը ամենակարճ ճանապարհով գնում են հրամանի համապատասխան տեղերը և նոյնպէս շարափոխւում. բացի այդ՝ եթէ յատուկ պատւէր չի եղել, այն ժամանակ, առաջաւորին հետևող վաշտը կանգնում է ձախ և նրա կողքին, առաջին գծի վրայ, իսկ միւսները՝ երկրորդ գծի վրայ։

253. Գնդացիր խոմբը գումարտակի բոլոր կազմափոխութիւնների ժամանակ անցնում, կանգնում է համապատասխան շարքերում իրեն համար որոշւած տեղում և շարափոխւում է իր պետի անմիջական հրամաններով։

Փամփշտի երկանիւներն անցնում են 234-րդ յօդւածով իրանց համար որոշւած տեղը։

ԳՈՒՄԱՐՏԱԿԻ ՎԵՐԱԾՈՒՄԸ ՎԱՇՏԱՒՈՐ ՋԱՏՇԱՐԻ ԵՒ ԳՈՒՄԱՐՏԱԿԻ ՀԱՒԱՔԸ։

254. Գումարտակը կարող է վերածուիլ վաշտաւոր պատաշարի՝ ամեն տեսակ շարքից, տեղում և շարժման ժամանակ։

Այդ կատարւում է վաշտի պատակատը պատաշարի վերածուելու մասին 187-րդ յօդւածում տուած ձևերի համեմատ։

255. Եթէ գումարտապետը չի ցոյց տուել, թէ վաշտերը իրար նկատմամբ ինչ դրութիւն պէտք է ունենան, այն ժամանակ վաշտաւորը զատաշար ԿՈՉՄԻՐ հրամանով, օժանդակներից առաջաւոր վաշտերը պատւում, և հետևում են 70 քայլ կէս-աջ և կէս-ձախ դարձով, որից յետոյ դէպի ճակատի կողմն են շարժւում մօտ 50 քայլ աջ և ձախ (յօդւած 240)։ Եթէ նշանակւած չէ ուղղապահ վաշտ, առաջաւոր վաշտերից աջթևեանը համարւում է ուղղապահ։

256. Գնդացիր խումբը վաշտերի հետ միաժամանակ անցնում է գումարտապետի ցոյց տւած տեղը (յօդւած 241) էր պետի հրամանով։

257. Վաշտաւոր պատաշարից գումարտակը հաւաքելու համար գումարտապետը պատւէր է տալիս (ուղարկում). վաշտապետները առաջ իրենց վաշտերը շարափոխում են պատակախնդրի և յետոյ նրանց ամենակարճ ճանապարհով առաջնորդում հաւաքի տեղը, որ որոշւում է գումարտապետի պատւէրի համեմատ և կանոնադրած ուղղացոյցով։

Եթէ առանձին պատւէր չի եղել, գումարտակը հաւաքելով կազմում է օժանդապահ։

ԳԼՈՒԽ Բ.

ԳՈՒՄԱՐՏԱԿԻ ՄԱՐՏԱԿԱՐԳԸ, ՄԱՐՏԱԿԱՐԳԻ ԿԱԶՄԸ ԵՒ ՊԱՇՏՕՆԱՏԱՐՆԵՐԻ ՏԵՂԵՐԸ։

258. Գումարտակի մարտակարգը կազմւում է վաշտային մարտավայրերի համար նշանակւած և գումարտակի օժանդակում թողած վաշտերից։ Վաշտային մարտավայրերում կարող են լինել գումարտակի բոլոր վաշտերն էլ։

Գումարտակի մարտակարգի համար նշանակւած տեղը կոչւում է գումարտակի մարտավայր։

259. Զինծառայողների մարտավարական վարժությունները անցկացվում են այնպես, որ հնարավոր լինի ճիշտ գծով զորամարտական ցուցումներով։ Ընդհանուր ղեկավարությունը վարում է իր պետի որոշմամբ, առաջնորդվելով վարժության մեջ ցույց տված կանոններով (կետ 194–200)։

260. Զորամարտական օժանդակի վարժությունները անցկացվում են զինծառայողների ուղիղ կամ հակառակ ճանապարհներով, կախված եղանակից և նրանից, թե ինչպիսի հետևություններ պետք է անի ղեկավարությունը, որ մի կողմից՝ հնարավորություն ունենան ժամանակին օգնության հասնել նրանց, մյուս կողմից՝ խուսափեն անհարկի կորուստներ կրելուց և նրանից անկասելի լինեն։

Զորամարտական օժանդակի մասերը անցկացվում են կամ միասին և կամ բաժան-բաժան։ Եթե օժանդակի մեջ մի քանի վարժություններ լինում և զորամարտական ղեկավարությունը չի նշանակել, թե ժամանակ օժանդակի ընդհանուր հրամանատարությունը ստանձնում է օժանդակ կազմող զինծառայողների պետերից ավագը։

Զորամարտական օժանդակի զինծառայողների տեղերը ցույց է տալիս զորամարտական ղեկավարությունը. իրենք զինծառայողները որոշում են իրենց պետը, եթե մի քանի զինծառայողներ միասին են տեղաբաշխված օժանդակի պետը։

261. Զենքերը խումբը, զորամարտական ցուցումով գնում է կամ զորամարտական օժանդակի մոտ, կամ—ամբողջովին կամ դասակներով—զինծառայողների մարտավարություններում, կամ վերջապես կազմում է առանձին գնդացրային մարտական դիրքերի դեպքում գնդացիրների մոտ կարող է հետևազորից պահեստային նշանակել (ծանոթություններ 196 և 205 կետերի)։

Փամփշտակիր երկանիվները տեղաբաշխում են միասին կամ բաժանում են զորամարտական վարժությունների մեջ (ծանոթություններ 196 կետերի)։

262. Թշնամու կողմի վրայ հակելու, թիերնու ընկուզները պահպանելու.—երբ պահպանած չեն հարձակման զորամասերով,—զորամարտական մարտական կարգի և կողքի գործող զորամասերի միջև հատ պահելու միջոցները սահմանում է զորամարտական պետը։

Եթէ այս մասին կարգադրութիւն արուած չէ, այն ժամանակ վաշտապետները և նոյնիսկ դասակապետները պարտական են այդ անել ինքնուրոյն կերպով (յօդուած 197 և 198)։

263. Գումարտապետի տեղը այնտեղ է, որտեղից աւելի յարմար է ղեկավարել մարտակարգը և դիտել մարտադաշտը։

Բացի 229-րդ յօդուածում յիշուած պաշտօնատարներից, նրա մօտ են գտնւում (եթէ հարկաւոր է) և անհրաժեշտ թւով զինւորներ՝ կապ պահելու ծառայութեան համար։

Օժանդակի պետը իր համար այնպիսի տեղ է ընտրում, որտեղից յարմար է ղեկավարել օժանդակը և միևնոյն ժամանակ կապը չկտրել գումարտապետի և մարտամասի վաշտերի հետ։

Պաշտօնատարների տեղերը վաշտերում ցոյց է տրուած վաշտի վարժութեան մէջ (յօդուած 200-րդ)։

Ծանօթութիւն։ Աննկատելի մնալու համար ձիաոր պաշտօնատարները մարտակարգում պէտք է ժամանակին իջնեն ձիերից։

ՄԱՐՏԱԿԱՐԳԻ ՎԵՐԱԾՈՒՄԸ.

264. Գումարտակը կարող է մարտակարգի

վերածւել ամեն տեսակ շարքից նոյնիսկ երթասիւնից։

265. Գումարտակը մարտակարգի վերածելու համար, գումարտապետը նախապէս հետախուզութիւն է կատարում և թշնամուն դիտելու թևերն ու թիկունքը պահպանելու և կապ պահելու համար միջոցներ է ձեռք առնում, ապա յայտնում է վաշտապետներին և գնդացիր խմբի պետին (եթէ հնարաւոր է և բոլոր զինւորներին). ա. ինչ որ յայտնի է թշնամու և հարևան զօրամասերի մասին. բ. թէ ինչ է գործողութեան ընդհանուր նպատակը, ինչպիսի խնդիր է առաջադրուած գումարտակին և ինչպէս է ենթադրւում այն ի կատար ածել. գ. վաշտերի և գնդացիրների բաժանումը մարտամասերի և գումարտակային օժանդակի. իւրաքանչիւր վաշտին առաջադրած խնդիրը և ուղղութիւնը (առաջխաղացման ժամանակ), կամ նրանց տեղերը (ինքնապաշտպանութեան ժամանակ). դ. գնդացիր խմբի տեղը և խնդիրը, (եթէ նա ունի առանձին մարտավայր) ե. փամփշտի երկանիւների տեղը և վիրակապութեան վայրը և զ՝ այն տե-

ղը, ուր պէտք է գտնւի ինքը գումարտապետը, ուր նրան պէտք է ուղարկեն զեկուցագրերը։

Մարտավայրերն ուղարկւած վաշտերից որև է մէկը կարող է ուղղապահ նշանակւել։

Ծանօթութիւն. Եթէ ժամանակը կարճ է, գումարտապետը պէտք է ցոյց տայ խնդիրը՝ գործողութեան նպատակն և ուղղութիւնը կամ տեղ, այն վաշտին կամ վաշտերին, որոնք պէտք է անյապաղ գործի անցնեն։ Միւս վաշտերին անհրաժեշտ տեղեկութիւնները յայտնում է առաջին հնարաւոր դէպքում։

266. Վաշտապետները գումարտապետից ստացած պատւէրները հաղորդում են իրենց վաշտերին, որից յետոյ, գումարտապետի պատւէրով, մարտավայրի վաշտերը գնում են իրենց համար նախորոշւած տեղերը և երբ հարկաւոր է, վերածւում են մարտակարգի (յօդւած 205—207). իսկ գումարտային օժանդակի վաշտերը բռնում են իրենց տեղերը (յօդւած. 260)։

ՄԱՐՏԱԿԱՐԳԻ ՂԵԿԱՎԱՐՈՒԹԻՒՆԸ.

267. Գումարտապետը մարտակարգը ղեկավարում է պատւէրներով գումարտապետը վաշ-

տապետների համար (նոյնպէս և գնդացիր խմբի պետի համար, եթէ նա առանձին մարտավայր է ունենալու) գործողութեան նպատակ որոշելով և նրանց խնդիրներ տալով (յօդւած 265) տրւած պատւէրը կատարելու համար ազատութիւն է տալիս, միայն թէ նրանք չշեղւեն պատւէրներից. վաշտապետները գումարտապետի պատւէրները կատարելիս առաջնորդւում են սոյն Կանոնագրքի երրորդ մասում ցոյց տւած կանոններով (յօդւած 201, 204 և 205)։

ՄԱՐՏԱԿԱՐԳԻ ՓՈՓՈԽՈՒԹԻՒՆՆԵՐԸ ԵՒ ՇԱՐԺՈՒՄՆԵՐԸ.

268. Գումարտակի մարտակարգի շարժումները կատարւում են գումարտապետի պատւէրներով որոնք որոշում են շարժման ընդհանուր նպատակը, իւրաքանչիւր վաշտի մասնաւոր խնդիրը (և գնդացիր խմբի, եթէ նա առանձին է գործում), ուղղապահ վաշտը (եթէ նա առաջուց նշանակւած չի եղել), իսկ երբ հարկաւոր է, և վաշտերի շարժման հերթը։

Մարտավայրերի վաշտապետները շարժում-

Ներըը կատարում են գումարտակի պատասէքների համաձայն, վաշտի վարժութեան (յօդուած 211—214) բացատրած կանոնների, միայն պահելով ուղղապահ վաշտի կողմի վրայ և փոխադարձաբար օգնելով հարևան զօրամասերին։

Գումարտային օժանդակը, եթէ գումարտակից առանձին պատէր չի առացել, իր շարժուձևերը յարմարեցնում է մարտավայրերի վաշտերի շարժուձևերին, և նկատի ունենալով, որ միշտ պատրաստ պիտի լինի նրանց օգնելու։

269. Մարտակարգի ուղղութիւնը միտը անվիճելով փոխելու համար գումարտակը հրամայատարման պատէրներ է տալիս վաշտերին, ցոյց տալով նոր ուղղութիւնը և եթէ հարկաւոր է, նշանակում է նոր ուղղապահ վաշտ։

Վաշտապետները պատէրները կատարում են վաշտի վարժութեան մէջ ցոյց տուած կանոնների համեմատ (յօդուած 219 և 220)։

Երբ անհրաժեշտ է ուղղութիւնը բռնական մեծ անկիւնով փոխել, պէտք է գումարտակի օժանդակից մասեր նշանակել նոր վայրային մարտավայրերի համար, նոր օժանդակ կազմե-

լով (եթէ պէտք է) առաջնայ մարտավայրերի վաշտերից։

270. Գնդացիրները տեղափոխում են այն զօրամասերի պետերի կարգադրութեամբ, որոնց նրանք տրուած են, կամ գումարտակի պատէրով, եթէ նրանք ունեն յատուկ մարտավայր (յօդուած 261)։

Փամփշտի երկանիւները յարմարում են գումարտակի կամ այն վաշտերի շարժուձևերին, որոնց հետ են։

271. Մարտավայրերի վաշտերի ոչնոգացումը գումարտային օժանդակին, կատարում է գումարտակի պատէրով, որը ուժեղացող զօրամասին ցոյց է տալիս գործողութեան նպատակը, տեղը, կամ ուղղութիւնը (յօդուած 267), իսկ երբ որևէ մարտավայրում ժողովում են մի քանի վաշտեր, այն ժամանակ նորակազմ մարտավայրերին նշանակում է պետը։

Վաշտապետները գումարտակի պատէրները կատարում են առաջնորդելով վաշտերը վարժութեան ցուցումներով (յօդուած 204—207)։

272. Երբ մի վաշտային մարտավայրում

մի քանի վաշտերի մասեր խառնւում են իրար և նրանց ընդհանուր հրամանատու չի նշանակւած գումարտապետի կողմից, այն ժամանակ վաշտապետներից աւագը պարտական է ստանձնել մարտավայրի ընդհանուր հրամանատուութիւնը, կամ նա մարտավայրերի մասերին առանձին պետեր է նշանակում, ինքը մնալով իբրև պետ նրանցից մէկին։

Առաջին հնարաւոր դէպքում պէտք է զինւորներին տեղաւորել իրենց մասերում։

Գ Ր Ո Հ.

273. Գրոհի համար գումարտապետը նախապէս յայտնում է վաշտապետներին և իւրա քանչիւրին ցոյց է տալիս գործողութեան նպատակը և հարւածի ուղղութիւնը։

Գրոհը կարող է կատարւել կամ մի քանի վաշտերով. կամ գումարտակի բոլոր մասերով, գումարտային օժանդակի հետ միասին։

Առաջին դէպքում այն վաշտերը, որոնց հրամայւած է գրոհի դիմել, վարւում են 221—226-րդ յօդւածների կանոններով. տեղում մնացած վաշտերը, եթէ կարող են, գրոհին օգնում են կրակով։

Բոլոր վաշտերով գրոհի դիմելու համար, գումարտապետը վաշտապետներին տալիս է համապատասխան պատւէրներ. գումարտակի օժանդակը, որքան հնար է, մօտեցնում է շղթային և յետոյ հրաման կամ-պայմանական ազդանշան է տալիս միաժամանակ շարժւելու դէպի գրոհ. վաշտերը կամ ուղղակի դիմում են ուինամարտի—եթէ մինչև հակառակորդը մօտ 50 քայլ է—կամ գրոհի են դիմում ուղղութիւնը պահելով առջևիների համեմատ, և իրենց պետերի հրամաններով, գրոհը վերջացնում են ուինամարտով։

274 Գնդացիրները գրոհի ժամանակ առաջնորդւում են վաշտի վարժութեան մէջ իրենց համար տրւած ցուցումներով (յօդւած 225)։

ԳՈՒՄԱՐՏԱԿԻ ՀԱՒԱՔԸ.

275. Մարտակարգի մէջ եղած գումարտակի հաւաքը կատարւում է վաշտաւոր զատաշարի համար 257-րդ յօդւածում ասածների համեմատ։

ՄԱՍՆ Ե.

ԳՈՒՆԴ, ԲՐԻԳԱԴ ԵՒ ԲԻՒՐԵԱԿ.

ԳԼՈՒԽ Ա.

ՕԺԱՆԴԱԿԱՆ ԿԱՐԳԵՐ.

Շարադրը եւ պաշտօնատարների տեղերը.

276. Գնդի օժանդական կարգը կազմւում է գումարտակների, մէկ, կամ մի քանի գծի վրայ շարւած օժանդակիչներից, պատւէրով որոշւած միջանցներով եւ հեռակայութիւններով։

277. Եթէ առանձին պատւէր չի եղել, այն ժամանակ երկու կամ երեք գումարտակ կանգնում են մի գծի վրայ, համարների կարգով, 20 քայլ միջանցներով. չորս գումարտակ գտնւում են 2 գծով 1-ին եւ 2-րդ գումարտակները առաջին գծի վրայ, 3-րդ եւ 4-րդը՝ երկրորդ գծի վրայ. գծերի միջեւ հեռակայութիւնը 20 քայլ պիտի լինի։

Այս դէպքում գնդի պաշտօնատարները, երգիչները եւ զօրամասերը կանգնում են.

ա. Գնդի հրամանատարը — այնտեղ, որտեղից նրան աւելի յարմար է դեկավարել օժանդական կարգը։

Նրա մօտ են գտնւում գնդի հրամատարը, օգնականը, գնդի համհարզը եւ գնդի փողերը։

Ծանօթութիւն. Գնդի ճամբկտարը կանգնում է առաջին վաշտի ճամբկտարների մէջ մնում եւ երբ հարկաւոր է լինում, կանչւում է գնդապետի մօտ։

բ. Գումարտակապետները եւ նրա մօտ գտնւած պաշտօնատարները, ինչպէս ցոյց է տւած 235-րդ յօդւածում։

գ. Գնդացիր խումբը (իր փամփշտի երկանիւներով) — գնդի կենտրոնի հետ 20 քայլի վրայ, շաւժման կարգով եւ երկայնած շարքով, նեղ միջանցներով։

դ. Նռաժիշտները — գնդի կենտրոնի միջանցում (երբ գունդը երեք գումարտակ կազմով է — 1-ին եւ 2-րդ գումարտակների միջանցում) հետեւաբարձով երկրորդ գծի գումարտակների հետեւի վաշտերի վերջին դասակների հետ։

Ծանօթութիւն. Նռաժիշտները միշտ շարւում են քառասունոցեան, պահելով ասղունների մէջ մի քայլ հեռակայութիւն։

ե. Ձիաւոր սպայական — ունեն մի գումարտակի մօտ մէկը. ձիապահները — գնդա-

պետի մօտ կամ, նրա ցուցումով, գումարտակ-
ներից մէկի ետևում։

Զ. Փամփշտի երկանիւները—գնդացիր խմբի
ետև 10 քայլ հեռու (իսկ եթէ նա չկայ, այն
ժամանակ գնդի ետև) մէկ կամ երկու գծով,
մի դիծը միւսից 6 քայլ հեռու, հաւասար մի-
ջանցներով, հաշուելով իւրաքանչիւր երկանիւի
ճակատը 6 քայլ։

278. Օժանդակարգի մէջ մի քանի գնդեր
դասաւորւում են տրւած պատուէրի համաձայն։

Իսկ եթէ այդպիսի պատուէր չի տրւած, այն
ժամանակ երկու և երեք գունդ կանգնում են
կողք կողքի, համարների կարգով, ներսի
թևերի մէջ 40 քայլ միջանցներով. չորս
գունդը—երկու գծով, 2-րդ բրիգադը 1-ի ետև,
գծերի (բրիգադների) մէջ 40 քայլ հեռակայու-
թեամբ։ Իւրաքանչիւր գունդ՝ ինչպէս ցոյց է
տւած 276 և 277 յօդւածներում։

Ծանօթութիւն։ Առաջին գծի գնդի փամփշտի եր-
կանիւները 277 յօդւածի (կետ ե.) համաձայն, տե-
ղաւորւելու համար, եթէ տեղ չի լինում, կանգնում
են գնդացիրների գծի թևերում, և միջանցները
որքան հարկաւոր է, նեղանում են։

279. Օժանդական կարգերի մէջ գումար-
տակների բռնելիք տեղերը ցոյց տալու համար,
կարող են դուրս կանչւել ուղղացոյցներ (յօդ-
ւած 229)։

Ուղղացոյցները դուրս են վազում գծի վրայ
(և տեղներն են դառնում) աւագ պետի կար-
գադրութեան համաձայն և գումարտապետների
հետևեալ հրամանով.

Ուղղացոյցնե՛ր—դեպի գիծ (ուղղացոյցնե՛ր—
տեղերդ)։ Նրանց ճիշտ դասաւորմանը հսկում
են գնդում՝ գնդի համհարզը, բրիգադում՝ գն-
դերի համհարզներից աւագը, բիւրեակում՝
բիւրեակի շտաբի համհարզը։

Ծանօթութիւն։ Կանգնեցրած ուղղացոյցներին
կարող է տեղափոխել միայն աւագ պետը. իսկ եթէ
որևէ զորամասի պետ գտնում է, որ իր ուղղացոյց-
ները ճիշտ չեն կանգնած, այն ժամանակ նա կարող
է իր մասը դասաւորել ուղղացոյցներին ի նկատի
չառնելով։

ՕԺԱՆԴԱԿԱՆ ԿԱՐԳԵՐԻ ՂԵԿԱՎԱՐՈՒԹԻՒՆԸ.

280. Աւագ պետը օժանդական կարգը ղե-
կավարում է պատուէրներով կամ [illegible]

բաստական հրամաններով։ Այն նախապատ-
բաստական հրամանները, որոնք վերաբերում
են օժանդական կարգի բոլոր մասերին, յաջոր-
դաբար կրկնում են բոլոր պետերը մինչև գու-
մարտապետները, որոնք դրանից յետոյ կատա-
րողական հրամաններ են տալիս։ Որպէսզի կա-
տարողական հրամանները տրւեն, միաժամանակ
աւագ պետը կարող է թրով (ձեռքով) նշաններ
տալ, որ նոյնպէս կրկնում են պետերը։

ՕԺԱՆԴԱԿԱՆ ԿԱՐԳԵՐԻ ՇԱՐԺՈՒՄՆԵՐԸ.

281. Երբոր շարժման ընդհանուր նպատակը
յայտնի է, կամ բոլորի համար պարզ է, այն
ժամանակ օժանդական կարգերը կարող են
ուղղակի տեղափոխել աւագ պետի նախա-
պատրաստական հրամաններով, ինչպէս ցոյց է
տրւած գումարտակի վաշտաւոր զատաշարի հա-
մար (յօդւած 172 և 248), պահելով նախորդ
յօդւածի կանոնները։

Հակառակ դէպքում, աւագ պետը պատւէր է
տալիս համհազների (սուրհանդակների) միջո-
ցով կամ իր մօտ է հաւաքում անմիջապէս
սաորադրեալ պետերին և նրանց յայտնում է

նպատակը և շարժումների կարգը։

Գումարտապետները իրենք, նախքան շար-
ժումը, հրամանով որոշում են հրացանների
դրութիւնը։

282. Շարժման ժամանակ տրւած ուղղու-
թիւնը ճիշտ կերպով պահպանելու և մասերի
մէջ սահմանւած կամ նշանակւած միջանցնե-
րն ու հեռակայութիւնները պահելու համար,
աւագ պետը ուղղապահ մաս է նշանակում և
նրան ուղղութիւն տալիս։

Բիւրեակում դրա համար նշանակւում է
բրիգադներից մէկը, բրիգադում—գնդերից
մէկը, գնդում—գումարտակներից մէկը։

283. Օժանդական կարգերի ուղղութեան փո-
խումը տեղում և շարժման ժամանակ՝
կատարւում է ուղղապահ մասի համեմատ,
որը ուղղութիւնը փոխում է աւագ պետի ցու-
ցումով և ապա կանգ է առնում։ Միւս մասերը
ամենակարճ ճանապարհով գնում են նոր տե-
ղերը։

ԳԼՈՒԽ Բ.

ՄԱՐՏԱԿԱՐԳԵՐ.

284. Գնդի մարտակարգը կազմւում է մարտավայրերի համար նշանակւած մէկ կամ մի քանի գումարտակներից և գնդի օժանդակի համար նշանակւած մէկ կամ մի քանի գումարտակից։ Մարտավայրերի համար կարող են նշանակւել և գնդի բոլոր գումարտակները։ Մարտավայրերի (գումարտակի մարտավայրերի) համար նշանակւած գումարտակները տեղաւորւում են գումարտակի վարժութեան մէջ ցոյց տրւած կանոններով (յօդւած 258-262). գնդի օժանդակի գումարտակները — օժանդական կարգով (յօդւած 276 և 277) կամ, օժանդակի տեսի որոշումով, վաշտաւոր դատաշարով։

285. Բրիգադի մարտակարգի մէջ մարտավայրերի համար նշանակւում են մէկ կամ երկու գունդ (գնդի մարտավայրեր), որոնք տեղաւորւում են նախորդ յօդւածի համաձայն։ Եթէ մարտակարգի համար նշանակւած է մի գունդը, այն ժամանակ միւսը կազմում է բրիգադի օժանդակը և տեղաւորւում է օժանդակի կարգով 276 կամ 277-րդ յօդւածների համեմատ։

286. Նոյն հիմունքներով բիւրեակի մարտակարգը կազմւում է բրիգադի մարտավայրերից և բիւրեակի օժանդակից, որի համար կարելի է թողնել բրիգադներից մէկը կամ գնդերից մէկը, և կամ մարտակարգը կարող է լինել առանց ընդհանուր օժանդակի։

287. Օժանդական կարգից (կամ բացօթեակի կարգից կամ երթակարգից) մարտակարգի անցնելու համար՝ աւագ պետը տեղեկութիւններ հաւաքելով հակառակորդի և տեղանքի մասին և պահպանութեան ու կապի համար միջոցներ ձեռքառնելով, իր անմիջական ստորադրեալ պետերին պատւէր է տալիս, որի մէջ յայտնում է. ա. տեղեկութիւններ թշնամու և հարևան զօրքերի մասին. բ. գործողութեան ընդհանուր նպատակը. գ. իւրաքանչիւր զօրամասին (որ անմիջապէս ստորադրւում է պատւէր տւողին) առաջադրած մասնաւոր խնդիրները. դ. մարտավայրերի տեղերը (ինքնապաշտպանութեան ժամանակ) կամ նրանց շարժման ուղղութիւնը

(յառաջխաղացման ժամանակ). ե. ընդհանուր օժանդակի տեղը. զ. վիրակապութեան վայրը և է. այն տեղը, ուր գտնելու է պետը։ Տալիս է նոյնպէս և այլ ցուցումներ, որոնք հարկաւոր կհամարեն։

288. Պետերը, պատուէրը ստանալով, իրենց մասերը տանում են օժանդական (կամ երթի) կարգով դէպի իրենց համար նշանակւած տեղերը, մինչև որ յարմար կհամարեն, ովքեր որ նշանակւած են մարտավայրերի համար, վերածւել մարտակարգի, կամ ովքեր նշանակւած են օժանդակի համար՝ կկանգնեն և համապատասխան շարք կամ կարգ կկազմեն։ Նախքան մարտակարգի վերածւելը, այն մասերը, որոնք նշանակւած են մարտավայրերի համար, իրենց հերթին պիտի վարւեն, ինչպէս ասւած է 287-րդ յօդւածում։

Նոյնը պիտի կատարեն և հետևեալ պետերը մինչև վաշտապետները ներառեալ (յօդւած. 204—207 և 264-266)։

289. Երբ ժամանակը կարճ է, պատուէրը յաջորդաբար հաղորդելու համար, աւագ պետը

կարող է պատուէր տալ ուղղակի օժանդակի կամ երթակարգի զօրամասերից մէկին, ցոյց տալով գործողութեանց ճպատակը և տեղը կամ ուղղութիւնը։ Մարտավայրի վերածւած այսպիսի զօրամասի պաշտպանութեան տակ կատարւում է այն, ինչ որ ցոյց է տրւած 287 և 288-րդ յօդւածներում։

290. Գնդի, բրիգադի և բիւրեակի մարտակարգի շարժումներն ու գործողութիւնները կատարւում են գումարտակի համար ցոյց տրւածների համեմատ 269-274 յօդւածներում։

Մարտավայրեր ուղարկւածների թւից աւագ պետին անմիջապէս ստորադրւած զօրամասերից մէկը նշանակւում է ուղղապահ։

291. Գնդի հաւաքը մարտակարգից օժանդական կարգի՝ կատարւում է պատուէրներով, որոնցով գնդի հրամատարը գումարտապետներին ցոյց է տալիս հաւաքի նպատակն ու տեղը և նշանակում է մի գումարտակ, որի համեմատ պէտք է կենտրոնանան մնացած գումարտակները նշանակւած տեղում (կարելի է և ուղղացոյցներ կանգնեցնել համաձայն 279 յօդւածի)։

Գումարտապետները կատարում են գումար-

ամեն վարժության մեջ բացատրածը (յօդուած 257)։

Ստորագրաց քանն կարգով հաղորդուած նոյն պատուէրով մարմնակրթից օժանդական կարդերի են հաւարտում բրիգադնիկն ու բիւրնակները։

ՄԱՍՆ Զ.

ՁՕՐԱՏԵՍ ԵՒ ՀԱՆԴԻՍԱՒՈՐ ՁՕՐԱՆՑ.

ԳԼՈՒԽ Ա.

Զ Օ Ր Ա Ճ Ե Ս Ի.

Ս. ՎԱՇՏԻ ՁՕՐԱՏԵՍ.

292. Զօրատեսի համար վաշտը կանգնում է երկայնած շարքով կամ դասակաւն, կամ լինչ շարքով որ կհրամայէ։

293. Երկայնած շարքի մէջ վաշտապետը կանգնում է վաշտի կենտրոնի առջև դասակային հետակայութեամբ, մնացած բոլոր պատասխանատուները բռնում են 152 և 153-րդ յօդուածներում իրանց համար նշանակած տեղերը, բացի քմբկահարներից և փողհարներից (որոնք կան), որոնք կանգնում են վաշտի մէջ քեռում (յօդուած 155)։

Եթէ վաշտի հետ լինում է և երաժշտութիւն, այն ժամանակ նա էլ ձախ թեով կանգնում է քմբկահարների ձախ թեի ծայրակի տեղ, որանցից 4 քայլ հետաւութեամբ (ծանօթութիւն 277 յօդուածի կից ղ.)։

Վաշտի դասակապետները շարքի ժամանակ բոլոր պատասխանատուներից առաջ են նայում տեղերը, ինչ որ երկոյնած շարքի մէջ, բայց այնպէս, որ երաժշտութեամբ առաջին տեղերը հետաւութեան վերջում պահին առաջին տեղերին։

294. Աւագ պետին դիմաւորելու համար, բոլոր պետերը, որոնց իշխանութեան տակ է գտնվում վաշտը, կանգնում են աւագութեան կարգով ալիք դէպի ձախ քմբկահարների (փողհարների) առջև կողմում, հետևաւորելով վաշտի երկարութեան տողի հետ և չծածկելով երաժշտութեան առջև քեռը։

295. Եթէ աւագութ յայտնի է, որ պետը մօտենում է ձախ թևի կողմից, այն ժամանակ վաշտը հետևաւորում է դէպի ձախ. քմբկահարները (փողհարները), երաժիշտները շարում են ձախ թևում, իսկ նրանցից ձախ կանգնում են

իշխանաւոր անձինք, աւագութեան կարգով, ձախից դէպի աջ (յօդւած 294.)։

Եթէ պետը սպասուում է աջ թևի կողմից, բայց մօտենում է ձախ կողմից, այն ժամանակ թմբկահարները (փողարները) և երաժիշտները մնում են իրենց տեղերում, իսկ իշխանաւոր անձինք տեղափոխւում են վաշտի ձախ թևը և կանգնում աւագութեան կարգով ձախից դէպի աջ։

296. Երբ պետը՝ վաշտին մօտենալիս՝ նրանից մօտ 100 քայլ հեռաւորութեան վրայ կլինի՝ վաշտապետը հրաման պիտի տայ.

Պատրի՛—Ա՛Ռ։

Այս հրամանը կատարելուց յետոյ (երբ կը նւագեն) բոլոր զինւորներն ու պաշտօնատարները գլուխները դարձնում են դէպի պետի կողմը (յօդւած 17 և 56.), իսկ երաժիշտները սկսում են նւագել գնդի քայլերգը։

297. Վաշտապետը պատրի-առ հրամանը տալով թուրը վերցնում է ՍԱՅՐՆԻՎԵՐ, մօտենում է պետին, կանգնում նրա առաջ 2 քայլի վրայ, իջեցնում թուրը և տիտղոսը տալով զեկուցում է. «այս ինչ գնդի, այս ինչ վաշտը»,

որից յետոյ յանձնում է նրան շարքի ցուցադիրը (յաւելւած 5-րդ). մի քայլ է անում մի կողմ, որպէսզի ճանապարհ տայ պետին և յետոյ ուղեկցում է նրան ճակատով, հետևելով նրան դրսի կողմից։ Երբոր աւագ պետը, պատիւ տալուց յետոյ, իշխանաւոր անձերից անց է կենում, այն ժամանակ որանք նոյնպէս հետևում են նրան ճակատի գծով, կրտսերները աւագների ետևից։

298. Վաշտապետն ուղեկցելով պետին ճակատի գծով և նրանից պատուէր ստանալով դուրս է գալիս վաշտի կենտրոնի առաջ (յօդւած 239) և թրով նշան է անում, որով երաժիշտները դատարում են նւագել, իսկ թմբկահարները զարնել, ապա հրաման է տալիս.

ո՛տ—ՔԻ՛Դ

299. Եթէ վաշտը առանց հրացանների է, այն ժամանակ աւագ պետին պատիւ տալու համար վաշտապետը հրաման է տալիս. 1. ԶԳԱՍՏ (եթէ այս հրամանը առաջուց տրւած չի եղել), 2. հաւասարումն Ա՛Ջ (ԶԱԽ) և 3. ՊԱՐՈՆ՛ԱՅՔ ՍՊԱՆԵ՛Ր։

Երկրորդ հրամանով ամենքը գլուխները դարձնում են դէպի պետը, իսկ երրորդով սպաները (և փոխ-սպաները) աջ ձեռքերը դնում են գլխարկներին։

Վաշտապետը, յիշեալ հրամանները տալով, նոյնպէս և իշխանաւոր անձինք, վարւում են 297 րդ յօդւածի համեմատ, սակայն վաշտապետը թուրը չի հանում, այլ ձեռքը դնում է գլխարկին. երաժիշտները, փողարները և թմբկահարները ոչ նւագումեն և ոչ թմբուկ են զարնում։

Պետի ճակատով անցնելուց և նրանից պատուէր ստանալուց յետոյ վաշտապետը կրկին հրաման է տալիս. ՊԱՐՈՆԱՅԻ ՍՊԱՆԵՐ, որով ամենքը գլուխները ուղղում են, իսկ սպաները (և փոխ սպաները) իջեցնում են ձեռքերը։

Բ. ԳՈՒՄԱՐՏԱԿԻ ԶՕՐԱՏԵՍ.

300. Գումարտակը զօրատեսի համար կանգնում է օժանդասիւնով կամ ինչպէս հրամայւած կլինի։

301. Գումարտապետը կանգնում է գումարտակի կենտրոնի առաջ, 30—40 քայլի վրայ.

գումարտակի համհարզը թմբկահարների աջ կողմում, վաշտապետները իրենց վաշտերի աջ թևերում։

Եթէ գումարտակի հետ կայ երաժշտախումբ, այն ժամանակ գումարտակի համհարզը կանգնում է թմբկահարներից այնքան աջ, որ երաժիշտների աջ թևը չծածկի։

Ամբողջ գումարտակի թմբկահարները (փողարները) և երաժիշտները կանգնում են գումարտակի աջ թևում, առաջին վաշտի նկատմամբ այն դիրքը բռնելով, որ ցոյց է տրւած 293 րդ յօդւածում։

Զիաւոր սուրհանդակները կանգնում են մի տողանով գումարտակի կենտրոնի միջանցի ետևում 10 քայլի վրայ։

Գնդացիր խումբը կանգնում է երկայնած շարքով փակ միջանցներով. գումարտակի ձախ թևից 10 քայլի վրայ, հաւասարւելով առաջին գծի վաշտերի առաջաւոր դասակների հետ։

302. Աւագ պետին դիմաւորելու համար, նրան ստորադրեալ բոլոր պետերը, որոնց իշխանութեան տակ է գտնւում գումարտակը,

կանգնում են գումարտակի աջ թևում, գումարտակի համհարզից 3 քայլ հեռու (յօդւած 294). իսկ եթէ հաւասարումն նշանակւած է դէպի ձախ, այն ժամանակ այս պետերը կանգնում են գումարտակի (գնդացիր խմբի) ձախ թևում, գումարտակի համհարզից ձախ (յօդւած 295)։

303. Գումարտակը պետին դիմաւորում է, ինչպէս ցոյց է տրւած 296—299-րդ յօդւածների մէջ. այնտեղի բոլոր ասածները վաշտի և վաշտապետի մասին՝ վերաբերում են և գումարտակին ու նրա պետին. գումարտապետը դիմաւորելով պետին՝ զեկուցում է. «Այս ինչ գնդի այս ինչ գումարտակում ներկայ է այսքան վաշտ», և ներկայացնում է շարքի ցուցագիրը (յաւելւած 6-րդ)։

Վաշտապետները և գնդացիր խմբի պետը, երբ աւագ պետը իրանց մասերի ճակատից անցնում է, դուրս են գալիս, կանգնում իրենց մասերի կենտրոնի առաջ, 5 քայլի վրայ։

Գ. ԳՆԴԻ ԶՕՐԱՏԵՍ.

304. Գունդը զօրատեսի համար կանգնում է օժանդական կարգով (յօդւած 277) ներքևում

ցոյց տրւած հետևեալ փոփոխութիւններով, կամ ինչպէս հրամայւած կլինի։

305 Գումարտակի պաշտօնատարները բռնում են 301-րդ յօդւածում իրանց համար ցոյց տւած տեղերը, բացառութեամբ գումարտապետների, որոնք կանգնում են իրենց գումարտակի թրմբկահարներից (փողարներից) աջ, 2 քայլ հեռու։

Երաժիշտները կանգնում են առաջին գումարտակի աջ թևում։

Ձիաւոր սուրհանդակները կանգնում են մի տողանով, գնդի կենտրոնի միջանցի ետև, 10 քայլ հեռու։

Գնդացիր խումբը կանգնում է երկայնած շարքով, փակ միջանցներով, գնդի ձախ թևից 10 քայլ հեռու, հաւասարելով 1-ին գծի վաշտերի առաջաւոր դասակների հետ։

Գնդի հրամանատարը կանգնում է, գնդի կենտրոնի առաջ, 40-50 քայլի վրայ. 1-ին գումարտակի համհարզից աջ կանգնում է գնդի համհարզը, որա ետևում գնդի փողարը։

Ծանօթութիւն. Եթէ գունդը բրիգադի կազմի

մէջ է նկատուում, այն ժամանակ գնդերի հրամատարները կանգնում են առաջին դասարանների պահերի առջև կողմում 3 քայլ հեռու. իսկ գնդի հրամատարների օգնականները և գնդերի համհարզները՝ նրանց ետև։

306. Ասած պիտի չլինի, որ հիմնարկեալ բոլոր պետերը, որոնց իշխանութեան տակ է գտնուում գունդը, կանգնում են, ինչպէս որոշուած է 294 և 302-րդ յօդուածներում։

307. Եթէ պետը ապաստում է ձախ կողմից, այն ժամանակ գումարտակապետները և թմբկահարները (փողարները) կանգնում են իրենց գումարտակների ձախ թեւերում. գնդի հրամատարի օգնականը, գնդի համհարզը, երաժիշտները և բոլոր իշխանաւոր անձինք՝ գնդի (պընդացեր խմբի) ձախ թեւում նոյն կարգով, ինչպէս յիշուած է վերևում, միայն ձախից դէպի աջ։

Եթէ պետը ապաստում է աջ թեւից, բոլոր դասից է ձախից, այն ժամանակ գումարտակների ձախ թեւերն են անցնում միայն գումարտակապետները, իսկ գնդի ձախ թևն՝ իշխանաւոր անձինք

308. Ասած պետին հիմնարկելը և պատուաւորելը կատարուած է, ինչպէս բացատրուած է 296—299-րդ յօդուածներում. ինչ որ այնտեղ ասուած է վաշտի և վաշտապետի մասին, վերաբերում է և գնդին ու նրա հրամատարին։ Գնդի հրամատարը պետին հիմնարկելով պիտի ասէ. «Այս ինչ գնդում նորոգեալ ես ազատ գումարտակ»։

Գումարտակապետները, երբ որ ասած պետը անցնում է իրենց գումարտակի, առջևից դուրս են գալիս և կանգնում իրենց մասերի հինարմների առաջ 10 քայլ հեռու։

Երբոր գունդը ուրիշ ձևը կկատարի, գնդի շտաբի պաշտօնատարները դուրս պիտի գան գնդի հրամատարի մօտ։

Ծանօթութիւն. Եթէ ասած պետը պատրաստ անելուց յետոյ մտադիր է վարժութիւն կատարել, այն ժամանակ գնդապետը հրաման է տալիս գնդացիր խմբին, ձիաւոր սուրհանդակներին, երաժիշտներին և թմբկահարներին (փողարներին), որ բոլոր իրանց համար օժանդական կարգի մէջ ցոյց արած տեղերը (յօդ. 277)։

ԳԼՈՒԽ Բ.

ՀԱՆԴԻՍԱՒՈՐ ԶՕՐԱՆՑ.

Ա. վաշտի զօրանց.

309. Վաշտը կարող է հանդիսաւոր զօրանց կատարել՝ երկայնած շարքով, սիւնեկով կամ վաշտի մասերով, ինչպէս հրամայուած կլինի։

310. Հանդիսաւոր զօրանցի ժամանակ, հաւատարման թևին շարժման հրամանը ուղղութիւնը ցոյց տալու համար, կարելի է ուղղացոյց կանգնեցնել, իսկ եթէ այդպիսին կանգնեցրած չէ, այն ժամանակ վաշտապետը պէտք է ցոյց տայ ուղղութիւնը դէպի որևէ առարկայ կամ դծի երկայնութիւնն։

311. Հանդիսաւոր զօրանցից առաջ վաշտապետը կազմափոխում է վաշտը, ինչպէս հրամայուած կլինի, և կանգնում է նրա կենտրոնի առաջ դասակային հեռաւորութեամբ։

Եթէ վաշտի հետ է գնդի դրօշը, այն ժամանակ դրօշը կանգնում է վաշտի առաջ 10 քայլի վրայ, իսկ վաշտապետը նրա առաջ՝ 5 քայլի վրայ։

Յետոյ վաշտապետը հրաման է տալիս՝

ՀԱՆԴԻՍԱՒՈՐ ԶՕՐԱՆՑԻՆ

Այս հրամանով թմբկահարները (փողարները) դուրս են գալիս վաշտի առաջ և կանգնում վաշտապետի ձախ 10 քայլ հեռու. իսկ երաժիշտները (եթէ կան) առաջի հրամանով, դուրս են գալիս առաջ և երկեակներով ձախ դառնալով, գնում են որ տեղ բռնեն պետի դիմաց, անցնող մասի ձախ թևից մօտ 10 քայլ հեռու։

Ծանօթութիւն. Եթէ առաջ հրաժարում է հանդիսաւոր զօրանց կատարել հաւատարման դէպի ձախ պահելով, այն ժամանակ երաժիշտները կանգնում են պետի դիմաց աջ թևի դիմից մօտ 10 քայլ հեռու։

312. Երբոր վերադիմել պաշտօնեաները բռնում են իրենց համար որոշած տեղերը, վաշտապետը ամբողջ վաշտով հանդիսաւոր զօրանցի համար հրաման է տալիս։

1. Ուսի դ—առ։
2. Վա՛շտ, հաւատարման աջ,
3. Քայլով մա՛րշ։

313. Վաշտի շարժման հետ թմբահարները (փողարները) գարնում են (նուագում են) քայ-

լեզու. պետին չհասած 8 քայլի վրայ, որանք, առաջ քմկահարի նշանով, դադարեցնում են դափիւնը և պետի առջևից անցնելուց յետոյ դառնում են դէպի ձախ և շարւում են երաժիշտների ձախ թևի մօտ։

Երբ քմկահարները դադարեցնում են զարնելը, երաժիշտները սկսում են քայլերը նուազել, իսկ քմկահարները սեղերում կանդնելով զարնում են երաժշտութեան բոլոր համեմատ։

Եթէ վաշտի հետ երաժշտախումբ չկայ, այն ժամանակ քմկահարները (փողարները) չդադարեցնելով զարնելը, դառնում են դէպի ձախ, երբոր անցնում են պետի առջևից, և դնում են երաժիշտների համար վերև յիշած սեղը։

Ծանօթութիւն. Եթէ փողարների քիւը երիքից պակաս է, չեն նուագում։

314. Վաշտը մատերով անցնելու համար վաշտապետը հրաման է տալիս։

1. Ռոսի՛դ—ա՛ռ
2. Վաշտ, դասակ առ դասակ, (օբլիկով)
3. Ձախան դասակի հետևակայոլէնտամբ (յարմարելով անցնող զօրամասի ճակատի երկայնութեամբ)։
4. Հասարում ա՛ջ։
5. Առաջին դասակ (օբլիկով)։

Վերջին հրամանով առաջին դասակը պետը գնում է դասակի կէսմարսի տեղն, որ կանգնի վաշտապետի հետ նրանից 2 քայլ հեռու, միւս դասակների հրամանը տալով։

1. Առաջին դասակ, հասարում ա՛ջ։
2. Քայլո՛վ—ՄԱՐՇ։

Այս հրամանով շարժւում է ամբողջ վաշտը, երկրորդ դասակը ուղղւելով այն տեղին, որտեղից առաջաւոր մասը սկսել էր շարժումը, քայլում է տեղում և հասարակւում։

Երբոր առջևից գնացող դասակը հեռանում է հրամանով որոշած հեռաւորութեամբ, երկրորդ և միւս դասակների պետերը, հերթով գալիս են դալիս իրենց դասակի կէսմարսի տեղն 6—8 քայլի վրայ և հրաման տալիս՝ ՅՕՈՒՀ։

Քմկահարները և երաժիշտները կատարում են 313-րդ յօդւածում տուածները։

315. Վաշտի առաջին հանդիսաւոր անցի ժա-

մանակ աւագ պետի ներկայութեամբ, վաշտի բոլոր իշխանաւոր անձինք գնում են առաջաւոր մասի աջ թևում. նրանից աւագը-առաջին տողանի հետ հաւասար, իսկ նրա ետևից՝ մնացածները, կոչումների աւագութեան կարգով, մեկը միւսի ետևից։ Անցնելով աւագ պետի մօտով նրանք ձեռքերը դնում են գլխարկներին և նրա առջևից անցնելուց յետոյ՝ դուրս գալիս, կանգնում նրանից 4 քայլի վրայ աջ կողմում ետաստիճան, անցի գծի երկայնութեամբ, աւագութեան կարգով ձախից դէպի աջ, երեսները դարձրած դէպի աւագ պետը:

316. Վաշտապետը պետին չհասած 20 քայլի վրայ թուրը բռնում է սայրնիվեր, իսկ նրանից 8 քայլի վրայ իջեցնում է թուրը, միաժամանակ գլուխը դարձնելով դէպի պետը։

Պետի առջևից 4 քայլ անցնելով, վաշտապետը նորից թուրը բռնում է սայրնիվեր և թեքւում է դէպի պետի կողմը ու կանգնում իր ուղղակի պետերից ցած (յօդ. 315). ապա ցած իջեցնելով թուրը՝ նա մնում է այստեղ, մինչև վաշտը անցնի։

Ճակատի առջևում գտնւած դասակապետները (սպաները և փոխ-սպաները) ողջունում են նոյն կարգով, բայց չեն թեքւում դէպի կողմ։

317. Երբ ամբողջ վաշտով անցի ժամանակ վաշտապետը թուրը ցած է իջեցնում, վաշտի բոլոր զինւորները և պաշտօնատարները միաժամանակ գլուխները դարձնում են դէպ պետի կողմը և պահում են այդ դրութեամբ մինչև վաշտը անցնի պետից 4 քայլ։

Վաշտի մասերով անցի ժամանակ առաջաւոր մասի բոլոր զինւորներն ու պաշտօնատարները վարւում են վերոյիշեալի համաձայն. միւս մասերի զինւորներն ու պաշտօնատարները գլուխները դարձնում են դէպի պետի կողմը, այն ժամանակ երբ դասակապետը թուրը ցած կիջեցնի, իսկ եթէ դասակի հրամանատուն ենթասպայ է, այդ դեպքում, այն ժամանակ երբոր նա ինքը կդարձնի գլուխը։

318. Վաշտի հանդիսաւոր անցի ժամանակ, երբ որ զինւորները առանց հրացանի են, վաշտապետը պետին չհասած 8 քայլի վրայ գլուխը դարձնում է դէպի նա, ձեռքը դընում գլխար-

վին. Ընդ հետ միաժամանակ նոյնն անում են և բոլոր սպոնգերը (փախ-սպոնգերը). իսկ գինաբերները միայն պլուխները դոբձնում են, բացի այդ, ամենքը դադարեցնում են ձնորկների շարժումը։

Վաշտը մտերմով անցնելու ժամանակ՝ ճամփան ասչևից գնացող նեֆտատներն էլ հետ պահում են մոտենում են պետին 8 քայլի վրայ, կատարում են վեհանում սպանելի համար յիշացնելը։

Գետից 4 քայլ անցնելով՝ սմենքը իջեցնում են ձնորքները, պլուխները պահում ուղիղ և ձեռքերին ազատ շարժում տալիս։

319. Հանդիսաւոր օրացոյի վերջանալուց յետոյ՝ թմբկահարները (փողարները), իսկ նրանց հետևից և երաժիշտները, շարունակելով նուագել, շրջում են քեզ վրայ և գնում վաշտի հետևից. վաշտի կանգնելու հետ դադարեցնում են նուագը և անցնում վաշտի առաջ։

320. Երբ հրամայուած է հանդիսաւոր օրացոյց անել երկրորդ տողանի վրայ դարձած, այն ժամանակ վաշտապետը, իսկ մասերով անցնելու

ժամանակ և դասակապետները (կիսամասապետները) դնում են սահմանած հետևակատեղեամբ երկրորդ տողանի առջևից։ Իսկ վաշտի հետևում գտնուող պաշտօնատարները դնում են երկրորդ տողանի առջևից։

Գ. ԳՈՒՄԱՐՏԱԿԻ ՋՕՐԱՆՑԸ.

321. Գումարտակը կոչող է հանդիսաւոր օրացոյց կատարել վաշտերով, վաշտ մատերով և գումարտակի ընդհանուր սխեմայով։

322. Հանդիսաւոր օրացոյցի ժամանակ հարկաւոր ուղղութիւնը ցոյց տալու համար՝ հետևատրման քիչ դէմ երկայնութեամբ կանգնում են վաշտերի ուղղաձիգները մէկը միւսից 25 քայլ հետևակատեղեամբ։

323. Հանդիսաւոր օրացոյցից առաջ գումարտակապետը, գումարտակը համապատասխան սխեմի միմեանց, կանգնեցնում է ուղղաձիգների նշանակուած դէմ վրայ այնպէս, որ առաջի ժամանակ առջևեան պատասխանից մինչև գումարտակի հրամանատարը քսան ուղղաձիգների հեռութիւն լինի, և ինքը կանգնում է գումարտակի հրամանատարից առջև 30—40 քայլի վրայ և հրամայում է տագիս։

ՀԱՆԴԻՍԱՒՈՐ ՋՕՐԱՆՑԻ

Այս հրամանով թմբկահարները (և փողարները) դուրս են գալիս գումարտակի առաջ (յօդուած 238) և շարւում են գումարտապետի առջև 10 քայլի վրայ. երաժիշտները վարւում են, ինչպէս ցոյց է տրուած 311-րդ յօդուածում։

Ծանօթութիւն. Առաջին գումարտակի մէջ թմբկահարները (փողարները) կանգնում են առաջաւոր վաշտի պետի առջևում 10 քայլի վրայ (յօդուած 311). իսկ գումարտապետը—նրանց առջևում, նրա ետևում գումարտապետի օգնականը և գումարտակի համհարզը, իսկ համհարզի ետևում մի քայլի վրայ գումարտակի փողարը։

324. Երբ բոլոր պաշտօնատարները բռնում են իրանց համար վերևում նշանակւած տեղերը, սիւնով անցի համար գումարտապետը հրաման է տալիս.

1. Ուսի՛դ—Ա՛Ռ

2. Գումարտակ, հաւսարումն աջ,

3. Քայլ՛ով—ՄԱ՛ՐՇ.

Շարժումը սկսելիս կատարւում է 313 րդ յօդուածում ասածը. այդ ժամանակ բոլոր պաշ-

տօնատարները անցնում են սիւնի մէջ իրենց համար որոշւած տեղերը։

325. Գումարտակի վաշտ առ վաշտ կամ վաշտերի մասերով հանդիսաւոր անցի համար, գումարտապետը հրաման է տալիս.

1. Վաշտ առ վաշտ (դասակ առ դասակ, կիսավաշտ առ կիսավաշտ),

2. Մէկ ուղղացոյցի (այսքան դասակային) հեռակայութեամբ,

3. Հաւսարումն աջ,

4. Առաջին վ՛աշտ, (առաջին դասակ, կամ առաջին կիսավաշտ)։

Վերջին հրամանով առաջաւոր մասի պետը գնում է նրա կենտրոնի առաջ (յօդուած 312 և 314), միևնոյն ժամանակ հրաման տալով.

1. Ուսի՛դ—Ա՛Ռ.

2. Առաջին վա՛շտ (առաջին դասակ), հաւսարումն ա՛ջ,

3. Քայլով—ՄԱ՛ՐՇ.

Երկրորդ հրամանով կատարւում է այն, ինչ որ բացատրւած է վաշտի համար։

326. Եթէ գումարտակը հանդիսաւոր անց է

կատարում աւագ պետի ներկայութեամբ, այն ժամանակ գումարտակի բոլոր իշխանաւոր տնձինք, առաջին անցի ժամանակ անցնում են առաջաւոր մասի աջ թևում 315-րդ յօդւածում ցոյց տրւած կարգով։

327. Ձիաւոր սուրհանդակներն անցնում են գումարտակի վերջին մասի ետևում մի տողանով, 10 քայլի վրայ։

Գնդացիր խումբը — 25 քայլի վրայ ձիաւոր սուրհանդակների ետևում (վերջին մասի ետևում) գումարտակի շարքին համապատասխան շարքով։

328. Գումարտապետը ողջունում և անցնում է մօտ 4 քայլ պետի մօտից, կրկին բռնում է թուրը սայրնիվեր և թեքւում է դէպի աւագ պետի կողմը, կանգնում է իր ուղղակի պետերից ցած (յօդւած 315.) թուրը իջեցնելով նամնում է այստեղ, մինչև ամբողջ գումարտակը անցնի։

Շարքի առջև գտնւած վաշտապետները ոպտները և փոխ—ոպտները ողջունում են, բայց չեն թեքւում դէպի պետը։

329. Երկրորդ տողանի վրայ դարձած՝ վաշտ առ վաշտ հանդիսաւոր անցի ժամանակ, գումարտապետները և վաշտապետները, իսկ դասակ առ դասակ (կիսավաշտ առ կիսավաշտ) անցի ժամանակ—դասակապետները (կիսավաշտի պետերը) գնում են սահմանւած հեռակայութեամբ երկրորդ տողանի առջևում (յօդւած 320)։

330. Գումարտակային սիւնով հանդիսաւոր անցի ժամանակ, երկրորդ տողանի վրայ դարձած՝ գումարտակի առջև դուրս է գալիս միայն գումարտապետը համհարգի հետ և անցնում, սահմանւած հեռակայութեամբ կանգնելով իր ուղղակի պետերից ցած։

331. Ինչ վերաբերում է անցի ժամանակ գլուխները դէպի պետի կողմը դարձնելուն և նոյնպէս գումարտակի հանդիսաւոր անցի կարգին, երբ գինւորները առանց հրացանի են, պէտք է առաջնորդել վաշտի համար ցոյց տրւած 317 և 318 յօդւածներով։

332. Հանդիսաւոր անցի վերջանալուց յետոյ՝ թմբկահարները (փողարները) և երաժիշտները

կատարում են 319-րդ յօդւածում ասածները։

Գ. ԳՆԴԻ ԶՕՐԱՆՑԸ.

333. Գունդը հանդիսաւոր զօրանց է կատարում գումարտակ առ գումարտակ, իւրաքանչիւր գումարտակ 321-րդ յօդւածում ցոյց տուած շարքերից մէկով, կամ փակ օժանդական կարգով. այս շարքում գումարտակի թևերի մէջ—երբ գտնւում են մի գծի վրայ—լինում է մի քայլ, իսկ գումարտակների գծերի միջև հեռակայութիւնը—15 քայլ։

334. Գնդի զօրանցի դիծը որոշելու համար կարող են դուրս կանչւել իւրաքանչիւր գումարտակի առաջին և երրորդ վաշտերի ուղղացոյցները։

335. Գնդի՝ փակ օժանդակարգով անցնելու կարգը հետևեալն է՝ գումարտապետները և միւս ձիաւոր սպայ պաշտօնատարները կանգնում են գնդի կենտրոնի առջև $2\frac{1}{2}$ ուղղացոյցի հեռաւորութեամբ, մի տողանով և աւագութեան կարգով աջից դէպի ձախ. նրանց կենտրոնի ետև 3 քայլ հեռու—գնդի փողարը, նրա ետևից

10 քայլ հեռու թմբկահարները և փողարները. նրանց ետև 10 քայլի վրա գնդի հրամատարը, նրա ետև մի քայլի վրայ, գնդի հրամատարի օգնականը ու գնդի համհարգը նրա կողքին։

Ձիաւոր սուրհանդակները անցնում են գնդի ետևում մի տողանով 10 քայլի վրայ։

Գնդացիր խումբը—25 քայլի վրայ ձիաւոր սուրհանդակների ետևում երկայնած շարքով։

Փամփշտի երկանիւները—10 քայլի վրայ գնդացիրների ետևում, մի գծի վրա 6 քայլ միջանցներով կամ մէկը միւսի ետևից 3 քայլ հեռակայութեամբ։

Երկանիւների հաւսարման թևում անցնում է զինապետը. պատիւ տալու համար՝ նա ձեռքը դնում է գլխարկին։

336. Միւս բոլոր շարքերի մէջ պաշտօնատարները անցնում են հետևեալ կերպով. առջևում երկու ուղղացոյցի հեռակայութեամբ գնդի հրամատարը, նրա ետևում երկու քայլի վրայ՝ օգնականը և համհարգը. գնդի համհարգի ետևում մէկ քայլ հեռու—գնդի փողարը. սրա ետևում 4 քայլ հեռու՝ թմբկահարները (փողարները),

10 քայլ հեռու՝ առաջին գումարտակի պետը և նրա ետևում նրանից 20 քայլ հեռու՝ այս գումարտակի առաջաւոր մասը։

Զիաւոր սուրհանդակները, գնդացիր խումբը և փամփշտի երկանիւները անցնում են, ինչպէս ցոյց է տրւած նախորդ յօդւածում, բայց այնպիսի շարքերով, որոնց ճակատը աւելի չլինի գնդի ճակատից։

337. Հանդիսաւոր անցի ժամանակ զօրամասերի միջև հեռակայութիւնները որոշւում են ուղղացոյցների միջև եղած միջանցների թւովայսինքն՝

ա. վաշտ առ վաշտ անցի ժամանակ երկայնած շարքի մէջ, վաշտերի միջև—մէկ միջանց, իսկ գումարտակների միջև—երկու միջանց.

բ. Գումարտակի սիւներով անցի ժամանակ, գնդի գումարտակների միջև—մէկ միջանց, իսկ առանձին գումարտակների միջև, նոյնիսկ եթէ նրանք համահաւաք գնդի կազմով լինեն—երկու միջանց։

338. Թմբկահարները (փողարները), վաշտ առ վաշտ անցի ժամանակ, գնում են իրենց գումար-

տակների առաջից, իսկ գումարտակային սիւներով անցի ժամանակ—բոլորը առաջին գումարտակի առաջից, կատարելով երկու դէպքումն էլ 313-րդ յօդւածում նրանց համար ասածները. միայն ձախ դարձից յետոյ նրանք քառեակներ են կազմում։

Թմբկահարները (փողարները) դուրս են գալիս իրանց համար ցոյց տւած տեղերը, անցման կարգը որոշող հրամանից անմիջապէս յետոյ։

339. Ինչ վերաբերում է ողջոյն տալուն և պետերի կողմը թեքւելուն, պահւում են հետեւեալ կանոնները. այն կրտսեր սպաները, որոնք չեն գտնւում շարքի առջև, ողջոյն չեն տալիս և պետերի կողմը չեն թեքւում, այլ միայն գլուխները դարձնում են դէպի նրանց. իսկ այն կրտսեր սպաները (և փոխ—սպաները), որոնք գտնւում են ճակատի առաջ (այս թւում և գրօշի պատւաւոր ընթերականները), նոյնպէս և վաշտապետներն ու գումարտապետները միայն ողջոյն են տալիս. առանձին գումարտակների պետերը և գնդերի հրամանատարները ողջոյն են

տալիս և թեքւում։

Գնդի համհարզը (և առանձին գումարտակի համհարզը) ողջոյն է տալիս գնդի հրամատարի հետ միաժամանակ անցնելով պետի առաջից մօտ 50 քայլ, թեքւում է հաւասարման կողմը և կանգնում իշխանաւոր անձանց գծի եան գնդի հրամատարի մօտերը։

Ծանօթութիւն. 1. Փակ օժանդական կարգով անցի ժամանակ ձիաւոր սպաները ողջոյն են տալիս միաժամանակ։

Ծանօթութիւն. 2, Եթէ առանձին գումարտակները համահաւաք գնդի կողմով են, այն ժամանակ նրանց պետերը և գումարտակների համհարզները, փակ օժանդական կարգով անցի ժամանակ, անցնում են ձիաւոր սպաների ընդհանուր գծի միջին. նրանք պետերի կողմը չեն թեքւում, այլ միայն ողջոյն են տալիս։

Մ Ա Ս Ն Է.

Դ Ր Օ Շ.

340. Դրօշը կրելու պատիւը վերապահւում է գնդի (առանձին գումարտակի) ամենից արժանաւոր ենթասպային, առաւելապէս քաջութեան համար ռազմական շքանշանի արժանացածներից։ Նրան ընթերակայ նշանակւում է մի ենթա-

սպայ։

ԴՐՕՇԸ ԲՌՆԵԼՈՒ ՁԵՒԸ.

341. Երբոր հրացանը ոտքի մօտ է, պէտք է դրօշը պահել ազատ թողած աջ ձեռքով միջի երեք մատը ձողակի առաջից, ճկոյթը՝ կողքին, իսկ բութ մատը՝ ետևից. ձողատակը՝ աջ ոտի թաթի մէջտեղին մօտ։

Հրացանը բռնելու ձևերը կատարելու ժամանակ, դրօշը մնում է նոյն դրութեան մէջ։

342. Երբոր պէտք է շարժում կատարել, այն ժամանակ բայլով—հրամանով դրօշը պէտք է դնել ձախ ուսին, ձախ ձեռքը մեկնել ձողակի երկայնութեամբ և դաստակը դնել ձողակի վրայ այնպէս, որ ձողակն ընկնի ցուցամատի և միջամատի միջև, իսկ աջ ձեռքը տանել իր տեղը։ Դրօշի այսպիսի դրութեան ժամանակ ձողատակը պէտք է գետնից $^1/_2$ արշին բարձր լինի։

343. Պատիւ տալու ժամանակ դրօշը պէտք է պահել ոտքի մօտ (յօդւած 341)։

344. Աղօթքի գդակդ—Ա՛Ռ հրամանով պետք է դրօշը բարձրացնել երկու ձեռքով և դնել այն աջ ոտքի ձախ կողմում. յետոյ ձո-



Առքի մօտ.



Երթման ժամանակ.

դասակը յենելով ալ ոտքի թաթի ծայրին, պէտք է ձողակը դնել ձախ ձեռքի արմատնկի ծալած տեղին, ալ ձեռքով պէտք է առնել զէլխարկը և տալ ձախ ձեռքը, իսկ ալը տանել իր տեղը։

Այս դրութեան մէջ դրօշը մնում է մինչև զդակը—Դի՛ր հրամանը։ Այս հրամանով պէտք է զլխարկը դնել գլխին և դրօշը պահել այն դրութեամբ, որ ցոյց է տրւած 341-րդ յօդւածում։

345. Դրօշը օրհնելու համար՝ ձողատակը 344-րդ յօդւածում ցոյց տւած դրութեան մէջ պահելով, պէտք է ձողակը ալ ձեռքով բռնել վառի տակից և դրօշը թեքել դէպի առաջ այնպէս, որ լինի լանջամիջի դիմաց, մեկնած ձեռքի հեռաւորութեամբ։ Դրօշը օրհնելուց յետոյ պէտք է կանդնեցնել նոյն դրութեան մէջ։

ԴՐՕՇԻ ՏԵՂԸ.

346. Գնդի օժանդակի կարգերի մէջ (առանձին դումարտակների շարքերի մէջ) դրօշակիրը դրօշի հետ կանգնում է համարում բարձր առաջաւոր վաշտի առաջաւոր դասակի պետիհողքին, ալ կռմում՝ նրա ետևում մի քայլ հե-



Աղօթքի.



Օրհնելու ժամանակ.

առաջ՝ իր ընթերական։

Այն վաշտապետը, որի վաշտի հետ է դրօշը, կանգնում է (պետին դիմաւորելու համար) դրօշակրի աջ կողմում։

347. Երթի ժամանակ դրօշակիրը դրօշը տանում է առաջաւոր զօրամասի հրամանատարի առաջից 4 քայլ հեռու, իսկ ընթերական գնում է ձախ կողմից և նրա կողքին։

348. Մարտադաշտում դրօշը ոչ մի դէպքում գնդի (առանձին գումարտակի) տեղաւորման կամ զօրաժողովների շրջանը չի թողնում։ Մարտն սկսելիս դրօշը պէտք է բանալ։

349. Երբ գունդը մարտակարգի է վերածւում, դրօշը յանձնւում է գնդի համհարզի ներկայութեամբ, գնդի հրամատարի նշանակութեամբ, գնդի օժանդակի գումարտակներից մէկին։

350. Երբ այն գումարտակը, որի մօտ գտնւում է դրօշը, վերածւում է վաշտաւոր զօտաշարի կամ մարտակարգի, դրօշը յանձնւում է գումարտապետի ներկայութեամբ երկրորդ գծի կամ գումարտակի օժանդակի վաշտերից մէկին, ինչպէս կնշանակէ գումարտապետը։

351. Երբ դրօշն ընդունած վաշտը վերածուում է դասակաւոր զաւաշարի կամ մարտակարգի, դրօշակրանձնաւում է վաշտապետի ներկայութեամբ երկրորդ դծի, կամ վաշտային օժանդակի դասակներից մէկին ու մէկին։ Այս դասակը, քանի դրօշը գտնուում է իր հետ, կոչուում է դրօշի դասակ և կրում է իր վրայ պատուաւոր պարտականութիւն, դրօշը պաշտպանել, ինչ գնով ուզում է լինի, մինչև մարտի վերջը կամ մինչև որ գնդի հրամատարը (առանձին զուտաբանակի պետը) կհրամայէ յանձնել նրան գնդի (առանձին զումարտակի) մի ուրիշ զօրամասին։

Դրօշի դասակը այլ յանձնարարութիւններով համար չպիտի զբաղեցուի, սակայն իրրև վերջին օժանդակը պարտական է մանաւանդ գնդի (առանձին զումարտակի) վճռական պրոհին։

352. Երբոր դրօշը անդամափոխուում է մի զօրամասից միւս զօրամասը, բոլոր դէպքերում նրան ուղեկցում է մի սպայ (համհարզը, վաշտապետը, կամ յատուկ նշանակուած սպայ), որը պատիւ տալով գնում է առջևից։ Պատիւ տա-

տալիս ճանապարհին բոլոր հանդիպողները և այն զօրամասը որը ընդունում է դրօշը։ Երբոր հարկաւոր է, դրօշը տեղափոխուում է յատուկ նշանակուած պաշտպանակի ուղեկցութեամբ։

353. Հանդիսաւոր զօրանցից առաջ, երբ կարգը որոշող հրամանն է տրուում, այն վաշտապետը, որի հետ է դրօշը, կանգնելով դրօշակրի առջև, հրամանն է տալիս։

Քայլո՛վ—ՄԱՐՇ և թուրը սայրնիվեր բռնելով դրօշակրին տանում, կանգնեցնում է այն մասի կենտրոնի առջև, 10 քայլի վրայ, որը պիտի անցնի իրրև գնդի առաջաւորը։ Դրօշակրին կանգնեցնելով, նա ցած է իջեցնում թուրը և յետոյ ոտսիդ—առ ձևով գնում է իր տեղը։

Դրօշակրի դուրս գալու հետ միաժամանակ, պատուաւոր ընթերակայ նշանակուած երկու սպան, թրերը սայրնիվեր բռնած դուրս են գալիս ընդառաջ դրօշի կողքերին կանգնելով, նրանք թրերը ցած են իջեցնում և յետոյ ուսիդ—առ ձևով բռնում։

Դրօշակրի ընթերական դրօշի ետևից չի գնում, այլ անցնում է առաջին վաշտի ետև, ու կանգ-

նում է վերջում, վերակայի աջ կողմում։

ԴՐՕՇՆ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ ԵՒ ԵՏ ՏԱՆԵԼՈՒ ԿԱՐԳԸ.

354. Պահելու տեղից դրօշև ընդունելու համար նշանակւում է մի կիսավաշտ երկու սպաներով, որոնցից մէկը կիսավաշտի պետի տեղ կիսավաշտի հետ պէտք է գտնւեն գնդի (գումարտակի) համհարզը, դրօշակիրը և նրա ընթերական, վաշտի թմբկահարները (փողարները) նոյնպէս և մի ձիաւոր սուրհանդակ, համհարզի ձին բռնելու համար:

355. Կիսավաշտը գնում է դրօշի ընդունելութեան տեղը, ջոկասիւնով (կամ զուգաշար), թմբկահարները (փողարները) առաջից (յօդւած 159), իսկ գնդի (գումարտակի) համհարզը՝ թմբկահարներից (փողարներից) 4 քայլ առաջ։

Դրօշակիրը և ընթերական գնում են առաջաւոր ջոկի ձախ թևում (կամ առաջին երկու երկեակներից աջ), երկրորդը առաջինի ծոծորակի դէմ. ձիաւոր սուրհանդակը՝ կիսավաշտի եաև, 4 քայլ նրանից հեռու։

Ծանօթութիւն· Համհարզին իր սուրհանդակի հետ և դրօշակրին կարելի է թոյլ տալ գալ դրօշը

պահելու տեղը ոչ կիսավաշտի հետ, այլ առանձին։

356 Կիսավաշտը դրօշի պահելու տեղը հասնելով, կանգնում է և ճակատը (երկայնած) շարում այնպէս, որ նրա կենտրոնը լինի նռան դիմաց։

Ընթերական կանգնում է աջաթևեան երկեակի ծոծորակի դէմ մի քայլի վրայ։ Թմբկահարները (յօդւած 155), իսկ համհարզը (ձիուցցած իջնելով և ձին սուրհանդակին յանձնելով) ու դրօշակիրը գնում են դրօշը դուրս բերելու։

357. Երբոր դրօշը երևում է դռան մօտ կիսավաշտի պետը հրաման է տալիս·

Դրօշին, պատուի՛ — Ա՛Ռ.

Այս հրամանով թմբկահարները և փողարները (ուր կան) սկսում են զարնել և նւագել դրօշի եղանակը։

Համհարզը, ձեռքը գլխարկին դրած, առաջնորդում է դրօշակրին դէպի կիսավաշտը և կանգնեցնում նրան կիսավաշտի աջ թևում, առաջին տողանի մէջ, առաջին դասակի պետից աջ. սրա հետ միաժամանակ ընթերական կանգնում է դրօշակրի ծոծորակի դիմաց։

358. Երբոր դրօշակիրը և ընթերական կանգնում են իրենց տեղը, կիսավաշտի պետը, թմբկահարութիւնը դադարեցնելու նշան է անում, ապա հրաման տալիս՝ ՈՐՏ—ՔԻԴ. և յետոյ հրամաններ է տալիս շարափոխման և շարժման համար։

359 Կիսավաշտի դրօշի հետ գնալու ժամանակ (դասակասիւն, ջոկասիւն կամ զուգաշար), նրա առաջից 4 քայլ հեռու գնում է դրօշակիրը իր ընթերակայով. դրօշի առջևից 5 քայլի վրայ՝ դասակապետը, սրա առջև 5 քայլի վրա թմբկահարները (փողարները), իսկ 4 քայլ առաջ—համհարզը։ Զիաւոր սուրհանդակը—կիսավաշտի ետև, 4 քայլի վրայ։

Թմբկահարները (փողարները) կիսավաշտի գնալու ժամանակ թմբկահարում են (նւագում են) քայլերգ։ Սպաները և փոխ-սպաները թրերը բռնում են ուսին։

160. Երբոր կիսավաշտը դրօշի հետ մօտենում է իր զօրամասին մօտ 50 քայլի վրայ, գնդի հրամանատարը (Գումարտապետը) հրաման է տալիս. դրօշին պատռի՛-Ա՛Ռ։ Այս հրամանով

թմբկահարները (փողարները), նախապէս դուրս կանչւած և կանգնած գումարտակների աջ թևերում, թմբկահարում (նւագում) են դրօշի եղանակը, իսկ երաժիշտները (գնդի աջ թևում) նւագում են գնդի քայլերգը։ Համհարզը, ձիուց իջնելով, մօտենում է դրօշակրին և, թուրը սայրնիվեր բռնած, ամենակարճ ճանապարհով առաջնորդում է նրան գնդի (գումարտակի) շարքի մէջ նրա համար նշանակւած տեղը, որից յետոյ նստում է ձիու վրայ և գնում իր տեղը։

161. Երբոր համհարզը մօտենում է դրօշին, դրօշ բերող կիսավաշտի պետը տանում է կիսավաշտը զօրամասի շարքի մէջ իր տեղը, ուր թմբկահարները (փողարները) միանում են իրենց գումարտակի թմբկահարներին (փողարներին)։

Երբոր դրօշակիրը կանգնում է իր տեղում, զօրամասի հրամատարը նշան է անում թմբկահարութիւնն ու նւագածութիւնը դադարեցնելու և հրաման է տալիս. ՈՐՏ-ՔԻԴ։ Յետոյ, եթէ պէտք է, հրաման է տալիս.—երաժիշտներ եւ թմբկահարներ (փողարներ) ՏԵՂԵՐԴ։

362. Դրօշը ետ տանելու համար նոյնպէս նշանակւում է մի կիսավաշտ։ Նրան գնդի (գումարտակի) շարքից դուրս կանչելու համար զօրամասի հրամանատարը հրաման է տալիս. Երաժիշտներ եւ այս ինչ վաշտի կիսավաշտ— ԳՆԴԻ ԱՌԱՋ (ԳՈՒՄԱՐՏԱԿԻ ԱՌԱՋ)։

Այս հրամանով, նշանակւած կիսավաշտը դուրս է գալիս, շարւում դասակասիւն կամ ջոկասիւն և կանգնում 20 քայլի վրայ այն գումարտակի առաջ, որի հետ է գտնւում դրօշը. իսկ երաժիշտները շարւում են կիսավաշտի առաջ մի դասակի հեռակայութեամբ։ Երաժիշների առաջ 4 քայլ հեռու կանգնում են հրամանով որոշւած վաշտի թմբկահարները (փողարները). իսկ 4 քայլ նրանցից առաջ՝ գնդի (գումարտակի) համհարզը։ Միևնոյն ժամանակ գնդի հետ մնացած թմբկահարները (փողարները) դուրս են կանչում (յօդւած 237.) գումարտակների աջ թևերը (եթէ կանգնած են իւրաքանչիւրը իր վաշտում)։

Ծանօթութիւն. Եթէ դրօշը տանելու համար նշանակւած է այն կիսավաշտը, որի հետ է դրօշը, այն ժամանակ նա առաջ չի դուրս բերւում։

363. Վերևում ասածը կատարելուց յետոյ, զօրամասի հրամանատարը հրաման է տալիս՝ Դրօշին, պատրի՛-Ա՛Ռ։ Այս հրամանով երաժիշտները նւագում են գնդի քայլերգը, իսկ թմբկահարները զարնում են գրօշի եղանակը. ամենքը պատիւ են առնում։ Այն վաշտապետը, որի վաշտի հետ է դրօշը, դրօշակրին հրաման է տալիս՝ քայլո՛վ—ՄԱՐՇ և թուրը ՍԱՅՐՆ ԻՎԵՐ բռնած առաջնորդում է նրան այն կիսավաշտի առաջ, որը դրօշը տանելու համար է նշանակւած. դրօշակրին կանգնեցնելով՝ նա իջեցնում է թուրը և յետոյ ռուսին բռնած վերադառնում է իր տեղը։

364. Երբոր դրօշը կանգնում է կիսավաշտի առաջ, գնդի (գումարտակի) հրամատարը թմբկահարութիւնը դադարեցնելու նշան է տալիս։ Յետոյ դուրս կանչւած կիսավաշտի պետը հրաման է տալիս՝ ռ՛ա—ՔԻ՛Դ և պատւէր ստանալով՝ կիսավաշտին առաջնորդում է այն կարգով, որ ցոյց է տրւած 359-րդ յօդւածում։ Բացի այդ՝ երաժիշտները թմբկահարների (փողարների) հետ փոխէփոխ քայլերգ են

նւագում։

Երբոր կիսավաշտը հեռանում է շարքից մօտ 50 քայլ, գնդի (գումարտակի) հրամատարը հրաման է տալիս՝ ո՛տ—ՔԻԴ։

365. Կիսավաշտի պետը, երբ մօտենում է դրօշը պահելու տեղին, շարում է նրան, ինչպէս ցոյց է տրւած 356-րդ յօդւածում. Թմբկահարները (փողարները) և երաժիշտները կանգնում են աջ թևում (յօդւած 293). համհարզը ձին սուրհանդակին յանձնելով, գնում է դրօշակրի մօտ և ձեռքը պատւի բռնած՝ կանգնում է դրօշի առաջ 2 քայլ հեռու։

Կիսավաշտի պետը հրաման է տալիս՝ դրօշին, պատռի՛—ԱՌ Թմբկահարները (փողարները) զարնումեն դրօշի եղանակը, իսկ երաժիշտները նւագում են գնդի քայլերգը։

Համհարզը դրօշակրին հրաման է տալիս՝ Քայլո՛վ—ՄԱՐՇ. և առաջնորդում է դրօշակրին, իսկ ընթերական գնում է իր տեղը (յօդւած 356)։

366. Երբոր դրօշը ներս են տանում շինութեան մէջ, կիսավաշտի պետը, Թմբկահարու-

թիւնը դադարեցնելու նշան անելով, հրաման է տալիս՝ ո՛տ—ՔԻԴ և ապա տանում է իր զօրամասը, ուր հարկաւոր է։

367. Դրօշն ընդունելու և ետ տանելու վերև ասած կարգը ռազմական գործողութեանց թատերավայրում պահւում է այն դէպքերում, երբ զօրամասի հրամանատարը հնարաւոր կգտնի։

ՅԱՒԵԼԻԱԾՆԵՐ.

ՅԱՒԵԼԻԱԾ 1.

ԶԻՆԻՈՐԱԿԱՆ ՊԱՏԻՒ ՏԱԼՈՒ ԿԱՆՈՆՆԵՐ.

1. Պատիւ պէտք է տալ արիաբար. ճիշտ պահելով Կանոնագրքիս 16 և 23-րդ յօդուածներում ցոյց տուած կեցուածքի և շարժման կանոնները։

2. Կրտսերն հանդիպելիս աւագին, դեռ չհասած նրան, 4 քայլի վրայ պատիւ է տալիս նրան։



Յաւելուած 1.

3. Առանց հրացանի տեղում կանգնած պատիւ տալու համար, պէտք է դառնալ դէպի բարևելի անձը, կանգնել Զգաստ և նայել նրան, դարձնելով գլուխը նրա ետևից. իսկ եթէ գլխարկը գլխին է, այն ժամանակ, բացի գլուխը դարձնելուց, պէտք է աջ ձեռքի դաստակը դնել շքոցիկի (գշխարկի ստորին եզրի) աջ կողմին այնպէս, որ մատերը լինեն միատեղ, ափը քիչ դէպի դուրս դարձրած, իսկ արմունկը՝ ուսի գծի և նրա բարձրութեան վրայ։

4. Առանց հրացանի քայլելիս բարև տալու համար, բարևելի անձի մօտով անցնելիս պէտք է դարձնել գլուխը դէպի նա և ձեռքերը անշարժ պահել, իսկ եթէ գլխարկը գլխին է, այն ժամանակ ձեռքը դնել գլխարկին, ինչպէս ցոյց է տրուած 3-րդ կէտում։

5. Երբ բարևելի անձը պատիւ տուողի մօտից անցնում է, վերջինս իջեցնում է ձեռքը և գնում (կանգնում) ազատ։

6. Հրացանը ուսնիվար կամ մեջքին ձգած ժամանակ՝ զինուորը պատիւ է տալիս, ինչպէս առանց՝ հրացանի։

7. Եթէ զինւորը հրացանը ուրքին կամ ուսին առած ունի, այն ժամանակ պատիւ տալու համար՝ նա գլուխը դարձնում է բարևելի անձի կողմը, շարունակելով, եթէ գնալիս է լինում, ձեռքերը ազատ շարժել։

8. Երաժիշտները գործիքով, թմկահարները թմբուկով և փողարները ազդափողով պատիւ տալու համար, գործիքը բռնում են այն դրութեամբ, որ ցոյց է տրուած 4 յաւելուածի 6, 12, և 17 կետերում. Մնացած դէպքերում վարւում են, ինչպէս բացադրուած է նախորդ կէտում։ Թմբկահարները կոպալները իրենց բնի մէջ խրած են թողնում։

9. Խմբով կամ շարային մասով, տեղում կանգնած ժամանակ, պատիւ տալու համար խմբի (մասի) պետը հրաման է տալիս։

1. ԶԳԱՍՏ, (Եթէ այս հրամանը առաջուց տրուած չի եղել), 2. հաւասարումն ԱՋ, (ՁԱԽ) և 3. ՊԱՐՈՆԱՅՔ, ՍՊԱՆԵՐ։ Առաջին և երկրորդ հրամաններով զինւորները կատարում են, ինչոր բացադրուած է անհատի և տողանի վարժութեանց մէջ (յօդուած 17 և 56.). երրորդ

հրամանով, որ տրւում է երբ շարքի մէջ սպաներ կան, վերջիններս աջ ձեռքը պատւի են բռնում։

Եթէ շարքի մէջ սպաներ չկան, այն ժամանակ խմբի պետը, երբոր նա առանց հրացանի է, երկրորդ հրամանով աջ ձեռքը դնում է գլխարկին։։

Խմբի (զօրամասի) պետը շարքին մօտեցած ուղղակի պետին զեկուցում է, թէ ինչ պատճառով, խումբը (զօրամասը) գտնւում է այդ տեղում։

Ծանօթութիւն։ վարժութեանց ժամանակ, եթէ զօրամասը (խումբը) պառկած կամ ծնկի դրութեան մէջ է գտնւում է, պետը կարող է պատիւ տալու համար հրամաններ տալ զինւորներին չվերկացնելով. զինւորները պիտի կանոնաւոր դրութեամբ մնան և գլուխները դարձնեն դէպի բարևելի անձը։

10. Բարևելիս խմբով (զօրամասով) պատիւ տալը կատարւում է նոյն հրամաններով (կէտ 9). այդ ժամանակ զինւորները կատարում են Կանոնագրքիս 24 և 53 յօդուածների կանոններով որոշուած։

11. Երբոր բարևելի անձը անցնում է խմբից

(զօրամասից), վերջնիս պետը կրկնում է հրամանը՝ պատրաստ ապանդը. որով ապաները ձեռքերը իջեցնում են, իսկ դինուորները գլուխները ուղղում և եթէ պնակիս են լինում, բակում են ձեռքերը շարժել։ Բայց եթէ, նոյնպէս և երբ շարքի մէջ ապաներ չկան, վերև ասածը կատարւում է առանց որևէ հրամանի (յօդ. 56 և 107.)։

Յետոյ, եթէ հարկաւոր է, հրաման է տրւում՝ ԱԶԱՏ (ՇԻՏԿԻՆԻ.)։

ՅԱԽԵԼԻԱԾ 2.

ԹՈՒՅԼ ՇԱՐՔԻ ՄԷՋ ԲՌՆԵԼՈՒ ՁԵՒԵՐԸ.

1. Ապաները և փոխ—ապաները թիթեղը շարքի մէջ մերկացնում են հետևեալ դէպքերում.

ա. Գաղտ. տալու համար, պատրաստ-Ա՛Ն հրամանով,

բ. Հանդիսաւոր օրանցի ժամանակ, ուսի՛ դ-Ա՛Ն. հրամանով։

գ. Թրջել բերելու և ետ տանելու ժամանակ առաջին հրամանով, որով արդում է դինուորների հրացանների դրութիւնը։

դ. Թրոհի դիմելու ժամանակ և նշաններ տա-

լու համար, եթէ կարեւոր կլինի։

2. Գաղտ. տալու համար թուրը պէտք է մերկացնել, պատրաստ-Ա՛Ն հրամանով՝ երեք նետ.

Առաջին նետ (մէկ). նախապատրաստական հրամանով, ձախ ձեռքի դաստակով պէտք է թուրը քիչ առաջ տալ, միևնոյն ժամանակ աջ ձեռքի դաստակով պէտք է բռնել երախակալի դաստապանի վերի կողմից և շեղբը պատեանից դուրս քաշել, ձեռքի ափը լայնութեան չափ։

Երկրորդ նետ (երկու). կատարողական հրամանով պէտք է թուրը պատեանից հանել և շեղբը շուռ տալով, ծայրը վեր տանել, իսկ բերանը՝ ձախ. բռնել այնպէս, որ աջ ձեռքի դաստակը լինի կզակի դիմաց, իսկ շեղբը տափակողմը դէպի երեսը և ուղղաձիգ. միևնոյն ժամանակ, բուն մատը վեր պէտք է մեկնեք դաստապանի վրայ. Քրի այսպիսի դրութիւնը կոչւում է սայրնիվելը։

Երորդ նետ (երեք). աջ դաստակի շարժումով դէպի ցած, ձեռքի ամբողջ երկայնութեամբ, թուրը պէտք է խոնարհել այնպէս, որ դաստակը լինի աջ ազդրի մօտ, իսկ շեղբի տափակողմը դէպի ցած, կռնակը՝ դէպի առաջ

Յաւելուած 2.



Սայրնիվեր.



Պատւի ա՛ռ.

Յաւելուած 2.



Ձիաւորի ողջոյն տալը.

տայրը լինի ձախ ոտքի ծայրից դէպի ձախ և մի ափաչափ նրանից բարձր։

Շարքի մէջ գտնւած ձիաւորները թուրը խոնարհեցնում են այնպէս, որ ազատ թողած աջ ձեռքի դաստակը լինի աջ ազդրի ետևում, շեղբի ծայրը՝ աջ կրնկի ետևում, իսկ բերանը դարձրած լինի ձիու կողմը։

3. Հանդիսաւոր զօրանցի ժամանակ ռասի՛դ-Ա՛Ռ հրամանով՝ թուրը պէտք է հանել երեք նւագ։

Առաջին նւագ (մէկ)՝ ինչպէս պատիւ տալու ժամանակ, նախապատրաստական հրամանին համեմատ։

Երկրորդ նւագ (երկու). ինչպէս երկրորդ ձևը, պատիւ տալու ժամանակ։

Երրորդ նւագ (երեք). ցած թողնելով աջ ձեռքի դաստակը ձեռքի ամբողջ երկարութեամբ, պէտք է թուրը պահել ուղղաձիգ՝ աջ ուսին մօտ, բերանը դէպի դուրս։ Այդ ժամանակ միջամատը, ցուցամատը և բութ մատերը պէտք է ցած թողնել դաստապանի երկայնութեամբ, բութով բռնել ձախ կողմից, իսկ ցուցամատով և միջամատով երախակալի ներսի մասի առջևի



Թուրն ուսին առնելը.

Յաւելուած 2.

կողմից, մնացած երկու մատերը պէտք է թողնուած լինեն ցած։

Շարքի մէջ եղած ձիաւորները, թուրը ուսին բռնած ժամանակ, աջ ձեռքի արմունկը թեթև ծալելով, դաստակի փափուկ մասը յենում են ազդրին, միաժամանակ մատանու և ճկոյթ մատերը թեթև կերպով խփում են ձեռքի ափին։



Քայլելիս թրով պատիւ տալը.

Յաւելուած 2.

4. Հանդիսաւոր զօրանցի ժամանակ հետևակները, որոնք պարտական են ողջոյն տալ, թուրը բռնում են սայրնիվեր և յետոյ իջեցնում են, ինչպէս պատւի առնելիս, սակայն շեղբի ծայրը պէտք է լինի աջ ուսի դիմաց։

Շարքի մէջ եղած ձիաւորները, ողջոյն տալու ժամանակ, խոնարհեցնում են թուրը, ինչպէս նրանց համար ցոյց է տրուած տեղում պատիւ տալու ժամանակ։

5. Դրօշը բերելու և ետ տանելու ժամանակ, թուրը պէտք է պահել ուսին, ինչպէս և հանդիսաւոր զօրանցի ժամանակ։

6. Մերկացրած թուրը ո՛տ—ՔԻ՛Դ հրամանով պատեանի մէջ պէտք է դնել երեք նւագ։

Առաջին նւագ (մէկ). աջ ձեռքով պէտք է վեր բարձրացնել թրի շեղբի ծայրը և բռնել այնպէս, որ երախակալը գլխից քիչ բարձր լինի. յետոյ պէտք է շեղբի ծայրը ցած շուռ տալ պատեանի ուղղութեամբ. միևնոյն ժամանակ ձախ ձեռքով պատեանը պէտք է քիչ առաջ բերել, որպէսզի հեշտ կարելի լինի շեղբի ծայրը նրա մէջ մտցնել։

Երկրորդ նռագ (երկու). թուրը պէտք է դնել պատեանի մէջ։

Յաւելուած 3.

Երրորդ Նուագ (երեք). երկու ձեռքն էլ պէտք է տանել իրենց տեղը։

ՅԱՒԵԼՒԱԾ 3.

ՀՐԱՑԱՆԸ ՅԱՏՈՒԿ ՊԱՏԻՒ ԲՌՆԵԼՈՒ ՁԵՒԸ.

1. Յատուկ պատուի առ ձեր պէտք է կատարել երկու նւագ։

Առաջին Նուագ (մէկ). աջ ձեռքի դաստակով



Յատուկ պատուի առնելը.

Յաւելուած 3.

պէտք է բռնել հրացանի փողը այնպէս, որ ցուցամատն և բութ մատը լինեն սիւնի անրիկի տակ. իսկ աջ ձեռքի արմունկը չպէտք է բաժանել մարմնից։

Երկրորդ Նուագ (երկու). կոթը աջ ոտքի ներբանի մօտ թողնելով, աջ ձեռքով հրացանը պէտք է թեքել կրծքի գծով, ուինը դէպի աջ այնպէս, որ աջ ձեռքի արմունկը քիչ բաժանուած լինի մարմնից, իսկ դաստակը՝ ուսից կէս արշին հեռու։

2. Յատուկ պատուի առ ձևից ո՛տ—ՔԻՆ— երկու նւագ։

Առաջին Նուագ (մէկ). հրացանը պէտք է բռնել 1 ին կէտում առաջին նւագի համար ցոյց տուած դրութեամբ։

Երկրորդ Նուագ (երկու). աջ ձեռքը ցած պիտի տանել հրացանի փոկի վրայով և բռնել ինչպէս ոտքի մօտ դրութեան ժամանակ։

ՅԱԽԵԼԻՔ 4.

ԿԱՆՈՆՆԵՐ

ԹՄԲԿԱՀԱՐՆԵՐԻ, ՓՈՂԱՐՆԵՐԻ և ՆՇԱՆԱԲԱՐՆԵՐԻ ՀԱՄԱՐ.

Ա. ԹՄԲԿԱՀԱՐՆԵՐԻ ՀԱՄԱՐ.

1. Երբ թմբկահարը շաբք է դուրս գալիս, պէտք է թմբուկը ուսընդունուի կախած ունենայ փոկի կեռի վրայ, վերին կաշին դէպի ա՛յ, իսկ կոպալները՝ թմբուկի փոկի բներն մէջ դրած, բարակ ծայրերը ներքև։

2. ՋԴ՛ԱՍՏ հրամանով թմբկահարը թմբուկը կախում է փոկի կեռին և յետոյ բնից հանում է կոպալները։ Թմբուկի կոպալները բնից պէտք է հանել երկու ձևագ։

Առաջին նագ (մէկ). ա՛յ ձեռքը բարձրացնելով դէպի կոպալների վերին ծայրերը, պէտք է նրանց վերցնել, ձեռքի ափը դուրս ուղղած, իսկ բութ մասը առա՛յից։ *Միևնոյն ժամանակ* ձախ դաստակով պէտք է տակից հրել կոպալները այնպէս, որ ցուցամատը յենի բների ներքևի եզրին, որոնց մէջ դրուած են կոպալները։

Յաւելած 4.

Երկրորդ նագ (երկու). ա՛յ ձեռքով կոպալները պէտք է հանել բներից և երկու ձեռքով բռնելով, իրար կպցնել՝ ծայրերը աւրքեր դարձրած և պահել թևք դրութեամբ ձախ կոպալը ա՛յի տակ. այդ ժամանակ կոպալների ծայրերը պէտք է բռնել ա՛յ ձեռքի մէջ բռնած, իսկ ձախ մէջ—ցուցամատով և մէջամատով առա՛յից, իսկ բութով՝ ետևից, ճեացած երկու մատերը ձգած. յետոյ երկու ձեռքերը պէտք է ցած լլցնել. ա՛յը պէտք է ազատ թողած լինի, ձախ արմունկը քիչ ծալած, պէտք է յենի թմբուկի վերին գօտուն։

3. ԱՋ՛ԱՍՏ և ՇԻՏԿԻԵԼ հրամաններով, թմբկահարները տեղում կատարում է նոյնը, ինչ որ մլուս զինուորները (յօդած 19). բացի դրանից երկրորդ հրամանով, նա թմբուկը հանում է կեռից և դնում է իր առջև, գետնի վրայ, իսկ կոպալները դնում է բների մէջ։

4. Թմբուկը կախելու համար՝ պէտք է ա՛յ ձեռքով բռնել վերինի գօտուց նրա մօտ եղած օղակի դիմաց, բութ մասը դրսից. իսկ ճեացածները ներսից. միևնոյն ժամանակ ձախ

Յաւելուած 4.



Առաջին նւագ. Երկրորդ նւագ.

ձեռքով պէտք է բռնել փոկի կեռից և թմբուկն օղակով կեռից ձգած կախել։

5. Թմբկահարութեան պատրաստելու համար նոյնպէս և պատրի՛ Ա՛Ռ հրամանով, թմբկահարը կոպալների բարակ ծայրերը դնում է թմբուկի վերին կաշու վրայ, այս կատարելով մի նւագ, հրացանը բռնելու առաջին նւագի հետ միաժամանակ։ Աջ ձեռքով բռնում է կոպալի ծայրը վերևից և ամբողջ դաստակով, իսկ ձախով—ներքևից, կլկալից ցած և միայն երեք մատով, ցուցամատը և միջամատը առաջից, իսկ բութը ետևից, մնացած երկու մատերը մնում են կոպալի տակ դէպի ձեռքի ափը թեթև ծալած։

Թմբկահարութեան սկիզբը և վերջը ցոյց տալու համար՝ աւագ թմբկահարը նշան է տալիս կոպալները վեր բարձրացնելով։

6. Տեղում դարձումներ անելիս՝ թմբկահարը թմբուկը բռնում է աջ ձեռքի ցուցամատով և միջամատով, սրանցով դէմ տալով զօտուն ներսի կողմից։



Թմբուկը բռնելու ձևը դափիւնից առաջ և պատուի առ հրամանով.



Թմբուկը բռնելու ձևը շարժման ժամանակ.

7. Աղօթքի, գդակդ—Ա՛Ռ հրամանով թմբկահարը կոպալները դնում է բների մէջ, հանում է թմբուկը, ինչպէս ցոյց է տրուած 3-րդ կէտի մէջ, և յետոյ կատարում է նոյնը, ինչ որ միւս զինուորները։

8. Պատիւ տալուց յետոյ ո՞տ—ՔԻ՛Դ հրամանով, թմբուկի կոպալները պէտքէ դնել 2 րդ կէտում ասած դրութեան մէջ։

9. Շարքի մէջ շարժման համար, քայլով հրամանով—թմբկահարը, ձախ ձեռքից բաց թողնելով կոպալների ծայրերը, պէտք է ձախ ձեռքով թմբուկը բռնի ներքևի գօտուց, իսկ ձեռքով պէտք է պահի երկու կոպալները, ցած թողնելով նրանց այն ծայրերը, որոնք գտնւում են ձախ ձեռքում։

Քայլելիս աջ ձեռքը պէտք է մարմնի մօտ ազատ շարժել։

10. ԵԹԷ հրաման է տրուած ուսգի՛—ՎԱ՛Ր, կամ ՇԻՏԿԻԵԼ, թմբկահարը կարող է կրել թմբուկը, ինչպէս յարմար է, կախելով, փոկը վզից կամ ուսից ձգած։

11. Քայլելիս դափինը վերջանելուց յետոյ, ձախ ձեռքով թմբուկի գօտուց բռնելուց առաջ պէտք է ձախ կոպալը տալ աջ ձեռքը։

Բ. ՓՈՂԱՐՆԵՐԻ ԵՒ ՆՇԱՆԱԲԱՐՆԵՐԻ ՀԱՄԱՐ.

12. Փողարը (նշանաբարը) շարք դուրս գալիս ունենում է ազդափող, փոկը ձախ ուսից ձգած կախած աջ ազդրի մօտ, փողի լայն բերանը դէպի ցած ուղղած։ Աջ ձեռքը, ինչպէս տեղում, նոյնպէս և շարժման ժամանակ, աջ ազդրի մօտ անշարժ թողնելով, ազդափողը բութ և միւս մատերի մէջ բռնած պիտի ունենայ, դալարածալից լայն բերանի մօտ։

13. Երբոր հարկաւոր է նւագելու պատրաստուել, փողարը ազդափողը աջ ձեռքով բռնում է ծւանի և լայն բերանի մէջտեղից, բութ մատը ներսից, իսկ մնացածները առաջից, և բերանոցը մօտեցնում է բերանին։ Շարժման ժամանակ նւագելու համար, նա ազդափողը այս կերպ բռնում է քայլով հրամանով. իսկ տեղում նւագելու համար, պատիւ տալիս այսպէս բռ-



Ազդափողը բռնելու ձևը շարքի մէջ

նում է այն ժամանակ, երբ շարքը պատի—առ բռնելու ձևի առաջին նւագն է կատարում։

14. Նշանարարը առաջնորդում է փողարների համար սահմանւած կանոններով, միայն աջ ձեռքով ազդափողը չի բռնում, այլ վերցնում է միայն նւագելու համար։

ՅԱՒԵԼԻՍԾ 5.

Օրինակ շարքի ցուցագրի, որը վաշտապետը ներկայացնում է պետին դիմաւորելու ժամանակ։

ՇԱՐՔԻ ՄԷՋ ՆԵՐԿԱՅ ԵՆ.

1920. յունւար 14.

Զօրամասի անունը	Սաղարկայ սպաներ	Ենթասպաներ	Երաժիշտներ	Սոսկական դինւորներ	Ապաշտներ	Զինւորներ ընդամենը	Վաշտի երկնակների թիւը
Ա. հետեակ գունդ	3	15	4	80	1	100	40
1 վաշտ							

ՎԱՇՏԱՊԵՏ՝

(ասատիճան, ազգանուն).

ԾԱՆՕԹՈՒԹԻՒՆ 1. Ենթասպաների թւում ցոյց են տրւածփոխ սպաները, և թելանիները որոնք շարքի մէջ ենթասպաների պարտականութիւններ են կատարում։ Սոսկական դինւորների թւում հաշւած են ուղղացոյց նշանարարը և վաշտի նշանարարը։

Ցուցագիրը պէտք է գրւած (կամ վիմագրած) լինի մի անգամ ծալած կէս թերթի վրա երկծալ դիրքով ներկայացւում է միայն մի աւագ պետի։

Այսպիսի ցուցագրի մի օրինակ զօրատեսի նախօրեակին ապարկւում է գնդի դիւանատունը։

ՑԱԽԵԼԻԱՅ 6.

Օրինակ շարքի ցուցապրի, որը գումարտապետը ներկայացնում է պահին դիմաւորելու ժամանակ։

ՇԱՐՔԻ ՄԷՋ ՆԵՐԿԱՅ ԵՆ.

1920 թ. 14 յունուար.

Զօրամասի անունը	Վաշտերի թիւը	Բաղդատական սպաներ	Սուրբական սպաներ	Ենթասպաներ	Զրաժիններ	Սուսկային դիւերներ	Պարկեներ	Ձիերուններ ընդամենը	Վաշտերի երկարութիւնը քայլերով
Գ. հեծեալ գունդ	4	1	13	61	18	320	4	403	40
1 դումարտակ									

ԳՈՒՄԱՐՏԱԿԻ ՀՐԱՄԱՆԱՏԱՐ

(աստիճան, ազգանուն.)

ԾԱՆՕԹՈՒԹԻՒՆ. 1. Ենթասպաների թւում հաշուած են՝ փոխտպաններն և թեկնածուները որոնք շարքի մէջ ենթասպանների պարտականութիւններ են կատարում։ Սուսկային դիւերների թւում հաշուած են ուղղապոյք—նշանաբերը և վաշտի նշանաբերը։

ԾԱՆՕԹՈՒԹԻՒՆ. 2. Ցուցապրի միւս երեսում գրում են. վաշտերի հրամանատարների ստորագրութիւնները, սկսած գումարտակի առաջին վաշտից։

Ցուցապիրը պէտք գրուած (կամ վիմապրուած) լինի մի մնդամ ծալած կէս թերթի վրայ, երկծալ դիրքով ներկայացուում է միայն մի տեղ պետի։

Այսպիսի ցուցապրի մի օրինակ զօրամասի հաշուակալին ուղարկում է գնդի դիւանատունը։

ՑԱԽԵԼԻԱՅ 7.

Հետևազօրի փողպղիներ, դափիւններ և քայլերգեր.

№№ ըստ կարգի	Անուն	Ո՞վ է կատարողը	Ծանօթութիւն
	Փողպղիներ.		
1	Ամենքդ (լանգեք ամենքդ)	Փողարնները և նշանաբարձները	Տրուում է նախապէս ամենքին նախապատրաստուելու յաջորդ փողպղիի համար։ Վերթիւում է առանձին զօրամասերի պետերին։
2	Պետերին կանչելը		
3	Ցատկխաղացում	Փողարնները և նշանաբարձները	ԱՄԵՆՔԴ,—ԿԱՆԳ—ԱՒՐ) փողպղիից յետոյ փողպղիը, մի անգամ երկարաձիգ նուագած ժամանակ, ցոյց է տալիս վարժութիւնն կամ ուղղութիւնը։
4	Վազով,		
5	Կրակ,		
6	Կանգ—ա՛ռ.		
7	Հանգիստ սիւնի համար.		
	Դափիւններ.		
1	Ազդային հիմնի նուագածութեան ժամանակ	Թմբկահարները	
2	Դրօշի կռնակ . .	Թմբկահարները, փողարնները	Կատարում է դրօշը բերելու և տանելու ժամանակ։
3	Պատիւ	Թմբկահարները և փողարնները	Հանդիսաւոր դրութեան ժամանակ։

1) Այս փողպղի առաջին մասը նշանակում է, որ պիտք հնորհատուածին է յայտնուում։

4	Հետևազօրի երթ.	Թմբկահարները	
5	Ազդարարութիւն ցայգանւագի և այգանւագի.	Թմբկահարները և փողարները	
6	Այգանւագ և ցայգանւագ.	Թմբկահարները և փողարները	Կատարւում է այգանւագի, ցայգանւագի և զօրահանգէսի ժամանակ
7	Աղօթքի.		
8	Աւարտ (աղօթքի).		
9	Հաւաք պահակների կարգման ժամանակ	Թմբկահարները և փողարները	
10	ըստ պահակների, իսկ երթի ժամանակ՝ ՏԵՂԵՐԴ.		
11	Տագնապ.		Զօրքը արագութեամբ ոտքի հանելու համար.
	Քայլերգեր.		
1	Քայլի համար (№ 1 և № 2)	Թմբկահարները և փողարները.	Փակ շարքով շարժման համար.
2	Սիւնի համար		
3	Թաղման համար.		

a) Ծանօթութիւն. Այս դափիւնի առաջին մասը ծառայում է իբրև ազդանշան ոեղանի մօտ հաւաքելու համար։

ԲԱՌԱՑՈՒՑԱԿ.

Ագուստ ложа
Ազդանշան сигналъ
Ազդանշաններ сигнализація
Ազդարարութիւն повѣстка
Ազդր ляжка
Ազեղ дуга
Սճուկ пахъ
Ամփոփում перечень
Այգանւագ, ցայգանւագ заря
Անկանոն կրակ безпорядочный огонь
Անհատի վարժութիւն одиночное ученье
Անհաւասարաթիւ շար, неуравненный строй
Անրիկ (ուինի, նշանոցի) хомутикъ (штыковой, прицѣльный)
Անցք каналъ
Ապաշար нестроевой
Աջաթևեան правофланговый
Աջակցել поддержать, оказывать поддержку
Առանձին մարտավայր особый боевой участокъ

Առաջաւոր головной (отдѣленіе, взводъ, рота, часть)

Առաջնորդել руководствоваться

Աստիճան чинъ

Արագ быстрый

Արագութիւն скорость

Արագաքայլ ускореннымъ шагомъ

Արձակելը, արձակիւն выстрѣлъ

Արմունկ локоть

Արտասանել (հրամանը) произносить (команду)

Աւագ старшій

Աւագ պետ старшій начальникъ

Աւագութիւն старшинство

Աւարտ отбой

Բաժանել распредѣлять, раздѣлять

Բախում тактъ

Բարձրակայ սպայ штабъ-офицеръ

Բարևելի անձ привѣтствуемое лицо

Բաց շարք разомкнутый строй

Բացում размыканіе

Բացօթեադ бивакъ

Բերան (թրի) лезвіе

Բերան լայն (նւագելու գործիքի) раструбъ

Բերանոց мундштукъ

Բիւրեակ дивизія

Բնոյթ (տեղանքի) характеръ (мѣстности)

Բոյն гнѣздо

Բուրգ п пирамида

Հրացաններից բուրգ կազմելը составленіе ружей въ козлы

Բռնատեղ шейка (ложи), рукоять (шашки)

Բրիգադ бригада

Գդակ шапка

Գլխարկ фуражка, головной уборъ

Գնդացիր խումբ пулеметная команда

Գնդացիրային մարտավայր пулеметный боевой участокъ

Գործիք инструментъ

Գործողութիւն (ռազմական) дѣйствіе (военное)

Գործօն զօրամաս дѣйствующая часть

Գործօն կրակի տարածութիւն разстояніе дѣйствительнаго огня

Գումարտապետ баталіонный командиръ
Գունդ полкъ
Գդականիշ кокарда
Գրոհ атака
Գրոհ տալ атаковать, итти въ атаку
Գօտի (թմբուկի) обручъ (барабана)
Գօտի поясъ
Դասակ взводъ
Դասակային շրթայամաս взводный участокъ
Դասակապետ взводный командиръ
Դասակապետ ենթասպայ взводный командиръ унтеръ-офицеръ
Դասակապետ սպայ взводный командиръ офицеръ
Դասակասիւն взводная колонна
Դասակաւոր ենթասպայ взводный унтеръ-офицеръ
Դասակաւոր դատաշար строй по-взводно
Դասակի հեռակայութիւն взводная дистанція
Դասատակ кисть
Դարձ, դարձում поворотъ
Դափիւն, թմբկահարութիւն бой (барабанный)

Դէտք дозоръ
Դէտքեր дозоры
Դիպուկ (կրակ) мѣткій (огонь)
Դիտողութիւն, դիտելը наблюденіе
Դիտոց (նշանոցի, անշիկի) прорѣзь (прицѣла, хомутика)
Դիրք позиція
Դիրքը գրաւել овладѣть позиціею
Դուրս գալը (շարքից) убыль (изъ строя)
Դռոյթ штурмъ
Դրութիւն положеніе
Դրսի թև наружный флангъ
Դրօշ знамя
Դրօշակիր знаменщикъ
Դրօշի եղանակ (նւագել) подъ знамя (играть)
Եզր (գլխարկի) тулья
Ետաստիճան уступами
Երաժիշտ музыкантъ
Երաժշտախումբ хоръ музыки
Երախակալ эфесъ
Երեքգծանի հրացան трехлинейная винтовка
Երթ походъ
Երթասիւն походная колонна

Երկայնած շարք развернутый строй
Երկայնել развернуть (колонну)
Երկայնութիւն протяженіе
Երկայնում развертываніе
Երկանիւ двуколка
Երկարաձիգ протяжно
Երկեակ рядъ, полный рядъ
Երկտող, երկտողան, (երկտողան շարք) двухшереножный, (двухшереножный строй)
Զարնել (թմբուկ) бить (барабанъ)
Զեկոյց рапортъ
Զինանիշ гербъ
Զինւոր солдатъ, нижній чинъ, человѣкъ
Զուգաշար рядами (двинуть впередъ)
Զօրահանդէս парадъ
Զօրամաս часть (войсковая)
Զօրասիւն колонна
Զօրատես смотръ

Ընթերակայ ассистентъ
Թատերավայր (ռազմական գործողութեան) театръ (военныхъ дѣйствій)

Թաքստոց закрытіе
Թելանի ефрейторъ
Թիկունք тылъ
Թմբկահար барабанщикъ
Թնդանօթ пушка
Թուր шашка
Թուրը մերկացնել обнажать шашку
Թռիչք (գնդակի) полетъ (пули)
Թւարկութիւն нумерація
Թև флангъ, плечо
Թևեայն фланговый

Իշխանաւոր անձ начальствующее лицо
Իշխանութիւն начальство
Իշխանութեան տակ գտնւել находиться въ вѣдѣніи
Իշխանութեան տակ մտնել поступить подъ начальство
Լանջամէջ середина груди
Լիաքայլ полнымъ шагомъ
Լրատար посыльный

Լցնել зарядить

Ետատակ затылокъ (приклада)

Խնդիր задача

Խորութիւն глубина (колонны)

Խտանալ смыкаться

Խտացում сгущеніе

Խրամատ окопъ

Խրամատներ փորել окопаться

Ծալ (արմունկի) сгибъ (локтя)

Ծայր (շարքի) оконечность (строя)

Ծայր (հեղքի) конецъ(клинка)

Ծոծրակ затылокъ

Կազմ составъ

Կազմափոխում, կազմափոխութիւն перестроеніе

Կազմելը составленіе

Կամրջակ (ձգանի) скоба (спусковая)

Կայուն թև неподвижный флангъ

Կանոնագիրք уставъ, наставленіе

Կանոնաւոր правильный

Կապի ծառայութիւն служба связы

Կատարողական հրաման исполнительная команда

Կարգ порядокъ

Կարգադրութիւն распоряженіе

Կարգաւորում распредѣленіе

Կարգում (պահակների) разводъ

Կենտրոն середина

Կեռ крючекъ

Կեցուածք стойка

Կիպ вплотную

Կիսադարձ полъ-оборота

Կիսաձայն вполголоса

Կիսաքայլ шагъ половиннаго размѣра, въ полъ-шага

Կիսկոլ гайка

Կոթ (հրացանի) прикладъ, рукоятка

Կոթուն стебель

Կուռածք выправка

Կոճակ (հրահանի) пуговка (курка)

Կոպալ палка (барабанная)

Կոնակ (քթի) обухъ

Կտրուն вырѣзъ

Կարուածք обрѣзъ
Կրակ բանալ открывать огонь
Համազարկ залпъ
Համահաւաք (գունդ) сводный (полкъ)
Համակարգ адъютантъ
Համրանք расчетъ
Հանդիսաւոր զօրանց церемоніальный маршъ
Հապշտապ (քայլ) учащенный (шагъ)
Հաւկ мушка
Հարուած ударъ
Հաւասարաձիւր շարք уравненный строй
Հաւասարում, հաւասրում выравниваніе
Հաւաք сборъ
Հաւասարեցնել выравнивать
Հաւասարման կողմը сторона равненія
Հաւասրում, հաւասարում равненіе
Հաւասրել, հաւասարել равняться
Հեռաձայն телефонъ
Հեռակայութիւն дистанція
Հեռաւորութիւն разстояніе
Հետախուզութիւն развѣдка
Հետեւակ пѣхота
Հետեւակի պաշտպանակ пѣхотное прикрытіе
Հետեանք результатъ
Հերթ очередь
Հիմք основаніе
Հուռռա ура
Հրանան курокъ
Հրաձգութեան դիրք стрѣлковая позиція
Հրաձգութիւն стрѣльба
Հրաձիգ շղթայ стрѣлковая цѣпь
Հրաման приказъ, команда
Հրամանատարութիւն командованіе
Հրացան ружье, винтовка
Ձախթեւեան лѣво-фланговый
Ձգան спускъ, спусковой крючекъ
Ձգանի կամրջակ спусковая скоба
Ձիաւոր конный, верховой
Ձողակ (զրօշի) древко
Ձողատակ подтокъ, (древка)
Ձև форма
Ձգացանք բանելու ձևեր ружейные пріемы

Ղեկավարութիւն (շղթայի) управленіе (цѣпью)

Ճակատ фронтъ

Մաս часть

Մարմնամարզութիւն гимнастика

Մարտադաշտ поле боя

Մարտախնդիր боевая задача

Մարտական ոտք боевой взводъ

Մարտակարգ боевой порядокъ

Մարտավայր боевой участокъ

Մենազարկ одиночная стрѣльба, одиночный огонь

Մթերապահ каптенармусъ

Մրակ неполный рядъ, глухой рядъ

Միատողան շարք одношереножный строй

Միացում сочетаніе

Միջանց интервалъ

Միջոց средство

Մշտակայ նշանոց постоянный прицѣлъ

Մօտակայ պետ ближайшій начальникъ

Յանձնարարութիւն порученіе

Յառաջ впередъ

Յառաջխաղացում наступленіе

Յաւելուած приложеніе

Յենարան упоръ

Նախապատրաստական հրաման предварительная команда

Նախապատրաստական նշան предварительный знакъ

Նահանջ отходъ

Նահանջել отходить

Ներառեալ включительно

Ներբան ступня

Ներսի թև внутренній флангъ

Նետիւն выстрѣлъ

Նիշ мѣтка

Նշան առնելը, նշան բռնելը прицѣливаніе

Նշանակ (վաշտի) значекъ (ротный)

Նշանակէտ точка прицѣливанія

Նշանառութիւն прицѣливаніе, прикладываніе

Նշանարար сигналистъ

Նշանարարութիւններ сигнализація

Նշանոց прицѣлъ

Նշանոցը հաստել установить, поставить прицѣлъ

Նետ игра, пріемъ

Նետել играть

Նետել քայլերգ играть маршъ

Շամփուր шомполъ

Շարային строевой

Շարափոխութիւն, Շարափոխում перестроеніе

Շարժման կարգ порядокъ для движенія

Շարժում движеніе, передвиженіе

Շարում выстраиваніе

Շարուածք построеніе

Շարք строй

Շարքի ցուցափէթ строевая записка

Շարքից դուրս գալ убыть изъ строя

Շեղակի наискось

Շեղակի ուղղութիւն косвенное направленіе

Շեղակի վազել, (շրջանցել обѣгать)

Շեղբ клинокъ

Շրջապատում участокъ цѣпи

Տուտաքայլ ускореннымъ шагомъ

Տուրքն անցնել обойти

Տպատել ետ (թշնամուն) опрокинуть (врага)

Տրջան раіонъ

Տրջանակ рамка

Տրջում захожденіе

Տրանշան знакъ отличія, орденъ

Տրոցիկ козырекъ

Ողջոյնի հրաձգութիւն салютаціонная стрѣльба

Ողջոյն տալ салютовать

Ոտ (պահպանիչ) взводъ (предохранительный)

Ոտք нога

Ոտքը պահել идти въ ногу, держать ногу

Ոտքը հաստատ պահել твердо взять ногу

Ոտքի հանելը подъемъ

Ուղղակի прямой

Ուղղաձիգ отвѣсный, отвѣсно

Ուղղատար (շոկ, դասակ, վաշտ) направляющій (отдѣленіе, взводъ, рота)

Ուղղագոյց линейный

Ուղղութիւն направленіе

Ուս плечо
Ուսընդանութ կրել (հրացանը) носить за спиною (винтовку)
Ուսին դէմ տալը приложиться, прикладка
Ուսնիվար կրել (հրացանը) носить на плечѣ [винтовку на ремнѣ]

Չափ размѣръ
Պահակ караулъ
Ըստ պահակների по карауламъ
Պահեստատուփ магазинная коробка
Պահունակ обойма
Պահպանիչ ստ предохранительный взводъ
Պայմանական ազդանշան условленный сигналъ
Պայմանական նշան условный знакъ
Պաշտպանակ, պաշտպան զօրամաս прикрытіе
Պաշտպանուած укрытый
Պաշտօն должность
Պաշտօնատար должностное лицо, чинъ
Պատգարակիր носильщикъ
Պատեան ножны
Պատրաստութիւն հրաձգութեան изготовка къ стрѣльбѣ

Պաշտպանութիւն оборона
Պատուէր приказаніе
Պարագայ обстановка
Պարկուճ гильза
Պետ начальникъ
Պտուտակ винтъ
Պտուտակիչ отвертка
Չոկ отдѣленіе
Չոկապետ отдѣленный командиръ
Չոկասիւն колонна по отдѣленіямъ
Չոկատ отрядъ
Չորդան жолобъ
Ռազմական военный
Սահմանել установить
Սայրիվեր подвысь
Սիւն колонна
Սոսկական (զինւոր) рядовой
Սուլիչ свистокъ
Սուրհանդակ ординарецъ
Սպայ офицеръ
Ստորադասութիւն подчиненность
Ստորադասութեան կարգով въ порядкѣ подчиненности
Ստորագրեալ подчиненный
Ստորակայ սպայ оберъ-офицеръ

Սւին штыкъ
Սւինամարտ штыковой бой, ударъ въ штыки
Վազէվազ перебѣжка
Վազով бѣгомъ
Վաշտ рота
Վաշտային մարտավայր ротный боевой участокъ
Վաշտապետ ротный командиръ
Վառօգ порохъ
Վարժութիւն ученье
Վերակայ фельдфебель
Վերածում մարտակարգի переходъ въ боевой порядокъ
Վերաձիգ (նշանառութիւն) на вскидку (прикладываніе)
Վիմագրել литографировать
Վիրակապութեան վայր перевязочный пунктъ
Տագնապ тревога
Տարածութիւն протяженіе
Տափակողմ—հարւածել թրի տափակողմով ударить шашкой плашмя
Տեղամաս участокъ
Տեղանք, տեղերանք мѣстность

Տեղաւորում расположеніе
Տեղափոխութիւն перемѣщеніе, передвиженіе
Տիպար образецъ
Տիտղոս титулъ
Տողան шеренга
Տուտ хвостъ [колонны]
Ցայգանւագ, այգանւագ заря
Ցուցագիր (շարքի) записка (строевая)
Ցուցում указаніе
Ցրիւ շարք разсыпной строй
Ցրւել (շղթայի) разсыпаться (въ цѣпь)
Փակ շարք сомкнутый строй
Փակողակ затворъ
Փակում смыканіе
Փամփշտակիրներ люди для подноса патроновъ
Փամփշտանոց патронникъ
Փամփուշտ патронъ
Փոխանորդ замѣститель
Փոխանցում պատուէրի передача приказанія
Փոխ-սպայ подпрапорщикъ
Փոկ ремень, перевязь
Փոկ (հրացանի) ремень (ружейный)

Փող (հրացանի) стволъ
Փողաբերան (հրացանի) дуло (ружья)
Փողաբերանի մաս дульная часть
Փողազդ сигналъ на рожкѣ
Փողակալ цѣвье
Փողապատ ствольная накладка
Փողատուփ ствольная коробка
Փողար горнистъ
Քայլ шагъ
Քայլել տեղում обозначать шагъ на мѣстѣ
Քայլել համաչափ двигаться въ ногу
Քայլելիս на ходу
Քայլերդ (գնդի) маршъ (полковой)
Քաջութիւն храбрость
Ռազմական շքանշան քաջութեան համար
знакъ отличія военнаго ордена
Օգնութիւն помощь, поддержка, подкрѣпленіе
Օժանդակ резервъ
Օժանդական կարգ резервный порядокъ
Օժանդասիւն резервная колонна
Օղակ звено, кольцо

ՆԿԱՏԻԱԾ ՎՐԻՊԱԿՆԵՐ

Էջ	Վերևից տ.	Ներք. տող	ՏՊԻԱԾ Է	ՊԷՏՔ Է ԼԻՆԻ
1		2	ծոծրակի	ծոծորակի
1		1	երկորոդ	երկրորդ
4	1		կարճարոտ	կարճառոտ
4		1	կանոնագրքում	կանոնագրքում
5	8		ազգանշաններով	ազդանշաններով
5		8	որոշ	որոշ.
12	7		դարձումները	դարձումները
12	8		հրամաննով	հրամաններով
14		1	դարձում	դարձում
17		7	ՅՐԱՑԱՆՈՎ	ՀՐԱՑԱՆՈՎ
19		7	տբրում	տրում
20	7		առաջին	առաջին
22	8		ոտքիցուսին	ոտքից ուսին
23		2	միաժամանակ	միաժամանակ
24		8	պէտք է	պէտք է
28	5		ուրիշ	ուրիշ
28		10	առաանց	առանց
28		7	Գդակդ	Գդակդ
28		1	դդակը	գլխարկը
29	2		Գդակը	Գլխարկը
29	4		դդակը	գլխարկը

29	8		գդակը	գլխաբկը
31	2		կեցուածք	կեցւածք
34	5		40 և 49	40—49
39	11		գրութիւնը	դրութիւնը
42		1	Երբ որ	Երբոր
43		10	Աջից դանդաղ (ձախից) ԿՐԱԿ	Աջից (ձախից) դանդաղ ԿՐԱԿ
47	10		հայցողեութեամբ	հայեցողութեամբ
48	4		կարելւոյց	կարելւոյն
49	3		ուղղութեամբ	ուղղութեամբ,
52		1	ՊԱՌ—ԿԻՐ	ՊԱՌԿԻՐ
53	4		ՎԵՐ—ԿԱՑ	ՎԵՐԿԱՑ
53		4	ուղղիզ	ուղիզ
53	7		Ազատ	86 Ազատ
57		6	63—64	63—66
62		7	ԿԱԶ—ՄԻՐ	Կազ—ՄԻՐ
63		6	ԿԱԶ—ՄԻՐ	Կազ—ՄԻՐ
63	4		կանեզ—առ	կանգ—առ
63	5		դասակը	դասակը
63	8		ԱՋ—ԴԱՐՁ	Աջ—ԴԱՐՁ
63	9		ԱՌԱՋ	Առաջ
65		3	հրամանով	հրամանով
70	4		այտեզ	այնտեզ
70	9		հրամաններով	հրամաններով
71	9		գործողութիւններին	գործողութիւնների
71	11		իրնն վսահացած	իրեն վստահացած

71		2	ինքնագործունէութեանն	ինքնագործունէութիւնն
74		3	ուղղութիւն	ուղղութիւն
75	9		148	118
75	6-7		դա-դասակին	դասակին
75		11	հրամաններ	հրամանները
75	10		շիթայամասի	շղթայամասի
77	5		յայտնւում է	յայտնում է
77	8		ուղութիւնը	ուղղութիւնը
78		1	դնդակոծել	գնդակոծել
78	2		Ցրումը	122 Ցրումը
78		6	շղթայի	123 Շղթայի
80		1	ԴԱԴԱՐ	ՀՐԱՀԱՆ
80	2		128	127
81		8	տես յօդ. 78 կէտի	տես յօդ. 78 կէտ 5
84		10	հրամաններով	հրամաններով
85		6	դաւակապետը	դասակապետը
86	2		նւանց	նրանց
86	4		ՀՈՒՌՍԱ	ՀՈՒՌՌԱ
86		10	ԴԱԴԱՐ	ՀՐԱՀԱՆ
86	5		դադարբցնելով	դադարեցնելով
86	10		կրակրելու	կրակելու
86	12		ՅԱՍԱՋ	ՅԱՌԱՋ
86		3	շարքերով	շպրտելով
87	6		հավաքը	հաւաքը
87	7		դասակակապետը	դասակապետը

87		1	երկայնացած	երկայնած
88		11	թիւ	թիւը
88		10	հաւասարեցներ	հաւասարեցնել
88		3	79 և 81	79—81
90	1		սպանները	սպաները
90	11		տալիս	գալիս
91		11	միջացներով	միջանցներով
95	5		թմբկահարեր	թմբեահարներ
95		12	կանոնենով	կանոններով
98		7	84 և 94	88—94
99	8		68 և 70	68—70
103		5	հրամաններին	հրամանների
105		5	հրաման	հրամանի
112	8		165	163
120	10		գիրքը	գիրքը
126		7	128	198
131		11	հեռաւորութիւն	հեռաւորութեան
132	11		գնդակակոծել	գնդակոծել
133		2	զատաշատի	զատաշարի
142	11		գնացով	գնացող
142	12		էն	են
142	12		գնացողների	գնացողների
157		10	վերջացնում են սեր-նամարտով	վերջացնում են սեր-նամարտով (յօդ. 224)
160		4	(կէտ ե.)	(կէտ զ.)
161	5		վազում	վազում
164		2	գունդը	գունդը
167	11		269—274	268—274
168	4-5		կարգերի	կարգերի
169		8	կողմում	կողմում
171	7		որանք	սրանք
171		10	(յօդուած 239)	(յօդուած 293)
181		1	հանդիսաւով	հանդիսաւոր
188	1		կատարում	կատարում
191	5		սուրհանդակները	սուրհանդակներն
192	7		ճակատը	ճակատն
204		6	կանչում	կանչւում

ՊԱՇՏՕՆԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԵԱՄԲ ԼՈՑԻ ԵՆ ՏԵՍԵԼ

1. Լեռնային հրետազօրի Հրանօթի վարժութիւն.
2. Հրացանի և փամփուշտի համառօտ նկարագրութիւն Հայ-Ռուս բառացուցակով.

Մամուլի տակեն և շուտով լոյս կ՛տեսնեն.

1. Թեթև հրետազօրի Հրանօթի վարժութիւն.
2. Մարդկոցի վարժութիւն.
3. Կապի ծառայութիւն.
4. Հրահանգ հետևազօրի խրամատներ փորելու.

Ֆեդ. Հանրապետ. Գրադարան
Гос. Публ. Библиотека
ՀԱՅԿ ՍՍՌ
им. А. Мясникова
Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ



ՊԱՇՏՕՆԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԵԱՄԲ ԼՈՅՍ
ԵՆ ՏԵՍԵԼ

1. Լեռնային հրետազօրի Հրանօթի վա
ժութիւն. (հայ-ռուս բառացուցակով
2. Հրացանի և փամփուշտի համառօտ նկ
բագրութիւն Հայ-Ռուս բառացուց
կով.

Մամուլի տակեն և շուտով լոյս կ՛տեսնեն

1. Թեթև հրետազօրի հրանօթի վարժութի
2. Մարդկոցի վարժութիւն.
3. Կապի ծառայութիւն.
4. Հրահանգ հետևազօրի խրամատներ
բելու.

-300

ՀՀ Ազգային գրադարան
NL0836080

Ц9-2
100